

Մ Ա Ս III - Բ

Ծ Ա Խ Ս Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս ՈՒ Մ

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի ծավալը ծրագրավորվել է 998.6 մլրդ դրամի չափով: Ծախսերի ամբողջ ծավալի 83.6 %-ը կամ 835.3 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 16.4 %-ը կամ 163.3 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով գուտ ծախսերին:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծի ծախսային մասը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի հաստատված մակարդակի համեմատ ավելացել է շուրջ 63.1 մլրդ դրամով:

Նախագծով առաջարկվող բյուջետային ծախսերի ծավալները, կազմն ու կառուցվածքը ձևավորվել են ելնելով 2011 թվականի մակրոտնտեսական կանխատեսումներից, գների և սակագների կանխատեսվող ցուցանիշներից, հանրապետությունում տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքը խաթարող նոր բյուջետային պարտքերի չառաջացման անհրաժեշտությունից ու առանձին ծախսատեսակների գծով մշակված բյուջետային նորմատիվներից:

Սոցիալական բնագավառի ծախսերի (կրթություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն) տեսակարար կշիռը բյուջետային ծախսերի ամբողջ ծավալում կազմում է 44.4%, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտներին՝ 18.8 %, տնտեսության ճյուղերին՝ 15.6%, պետական պարտքի սպասարկմանը՝ 4.5%, համայնքների բյուջեներին ՀՀ պետական բյուջեից պաշտոնական դրամաշնորհների տրամադրմանը՝ 3.3%, ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ձևավորմանը՝ 2.6 %:

Հարկ է նշել, որ, ինչպես և ՀՀ 2010 թվականի պետական բյուջեում, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում ծախսային ծրագրերը հիմնականում վերադասավորված են ծրագրային բյուջետավորման սկզբունքներին համապատասխան: Միաժամանակ, մոտակատարիներին պետական բյուջեն ամբողջությամբ ծրագրային դասակարգմամբ Ազգային ժողով ներկայացնելու և անցումային շրջանում դրա կատարման հետ կապված ռիսկերի կառավարումն ապահովելու նպատակով ներկայումս մշակվում է մի մոտեցում, որը մի կողմից պետք է ապահովի պետական բյուջեի կատարման գործող համակարգի կայունությունը, իսկ մյուս կողմից՝ աջակցի կառավարման, մոնիտորինգի, հաշվետվողականության և վերահսկողության համակարգերի զարգացմանը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով բյուջետային ծախսերի ծրագրային դասակարգումը և ոչ ֆինանսական ցուցանիշները ներկայացված են սույն բացատրագրի NN 12 և 13 հավելվածներում:

Ստորև ներկայացվում են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծվող ծախսերի ծրագրավորման հիմքում դրվող հիմնական սկզբունքները և առանձնահատկությունները:

Պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում ծրագրավորվել են հիմնականում հաշվի առնելով ՀՀ 2011-2013թթ ՄԺԾԾ-ի ցուցանիշները, գործող օրենսդրության պահանջները և այդ մարմինների գործունեության առանձնահատկությունները:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերի ծրագրավորումը բնորոշվում է հետևյալ առանձնահատկություններով:

2010 թվականի ընթացքում շարունակվեցին պետական կառավարման համակարգի բնագավառում վերջին տարիներին իրականացվող բարեփոխումները, հստակեցվեցին նախարարությունների կողմից իրականացվող քաղաքականության ձևավորման, մոնիտորինգի և համակարգման գործառույթները, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմինների կանոնադրություններն ու կառուցվածքները, որի արդյունքում, որոշակի ծառայությունների մատուցման, վերահսկողական ու տեսչական գործառույթների իրականացման իրավասությունները փոխանցվեցին նախարարությունների աշխատակազմերում առանձնացված ստորաբաժանումների կարգավիճակով վերակազմակերպված կամ նոր ստեղծված գործակալություններին և տեսչություններին: Այսպես.

1. Իրավական ակտերի և իրավական ակտերի նախագծերի փորձաքննության, իրավական ակտերի գրանցման և հաշվառման բնագավառներում համապատասխան ծառայություններ մատուցելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում կազմակերպությունների կողմից օրենքով սահմանված պահանջների կատարումն ապահովելու բնագավառում վերահսկողական գործառույթներ իրականացնելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության վարչությունը վերակազմակերպվեց «Իրավական ակտերի փորձաքննության գործակալության» և ստեղծվեց «նախարարության աշխատակազմի՝ օրենքով նախատեսված առանձին ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության օրինականության վերահսկողության տեսչություն»-ը՝ /ՀՀ Կառավարության 05.08.2010 թվականի N 1044-Ն որոշում / հիմնարկի առանձնացված ստորաբաժանումների կարգավիճակով:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության հսկողությունը առավել արդյունավետ իրականացնելու, ստուգումների միջոցով պետական կառավարչական հիմնարկների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից տրամադրված միջոցների հաշվին համայնքների կողմից իրականացվող գործունեության նկատմամբ ֆինանսական վերահսկողությունը կազմակերպելու և իրականացնելու, ինչպես նաև նախաքննության մարմինների ու դատարանի որոշումներով համապատասխան վերստուգումներ կատարելու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի և ֆինանսական վերահսկողության վարչությունը վերակազմավորվեց նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության՝ /ՀՀ Կառավարության 19.08.2010 թվականի N 1146-Ն որոշում/ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախարարության կողմից լիցենզավորվող գործունեությունների՝ Խաղատների, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման, աուդիտորական, պարզ ընթացակարգով լիցենզավորման, ինչպես նաև թանկարժեք մետաղների գտարկման, բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրության, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգործման և հարգադրոշմման, դրամահատման, պետական մեդալների, շքանշանների պատրաստման կամ արտադրության համար լիցենզիաների տրամադրման գործընթացը կանոնակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչությունը վերակազմավորվեց նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության և նախարարության կողմից լիցենզավորվող գործունեությունների՝ բացառությամբ աուդիտորական, իրականացման բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծվեց ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի լիցենզավորման պայմանների և պահանջների հսկողության տեսչությունը /ՀՀ Կառավարության 19.08.2010 թվականի N 1146-Ն որոշում/ հիմնարկի առանձնացված ստորաբաժանումների կարգավիճակով:

Քաղաքաշինության ոլորտի լիցենզավորման ապահովման բնագավառում ծառայությունների որակի բարձրացման. սպառողների իրավունքների պաշտպանության, լիցենզավորված գործունեությամբ զբաղվողների նկատմամբ անհրաժեշտ պայմանների և պահանջների կատարման հսկողության և այլ ծառայություններ մատուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմի լիցենզավորման

բաժինը վերակազմավորման ձևով վերակազմակերպվեց «Լիցենզավորման կենտրոն» գործակալության՝ /ՀՀ Կառավարության 26.08.2010 թվականի N 1206-Ն որոշում/ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:

Թափոնների /թափոնների գործածության արդյունքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության նվազեցում, թափոնների անդրսահմանային փոխադրումների ընթացքում շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության կանխարգելում, ինչպես նաև օգոնային շերտը քայքայող նյութերի առաքման և մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների նորմավորման ապահովում/ և արտանետումների կառավարման բնագավառում ծառայություններ մատուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմում ստեղծվեց «Թափոնների և մթնոլորտ արտանետումների կառավարման գործակալություն»-ը՝ /ՀՀ Կառավարության 03.09.2010 թվականի N 1189-Ն որոշում/ հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգում կատարվող բարեփոխումների շրջանակներում համակարգի օպտիմալացման, խնդիրների և գործառույթների կրկնությունների բացառման նպատակով փոփոխություններ կատարվեցին նաև նախարարության Փրկարար ծառայության կանոնադրության մեջ և կառուցվածում, որի արդյունքում ծառայության պետական հրդեհային տեսչությունը ներառվեց նախարարության աշխատակազմում /ՀՀ Կառավարության 26.08.2010 թվականի N 1181-Ն որոշում /հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության նպատակների և խնդիրների, դրանց իրականացման համար անհրաժեշտ գործառույթների հստակեցման, նախարարության աշխատակազմի գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացման, նախարարության, նրա առանձնացված ստորաբաժանումների և նրա ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրություններում առանձին գործառույթների կրկնությունների բացառման նպատակով նախարարության աշխատակազմի երկրաբանական գործակալությունը և կոնցեսիոն գործակալությունը միաձուլման ձևով վերակազմակերպվեցին նախարարության աշխատակազմի ընդերքի տրամադրման գործակալության՝ /ՀՀ Կառավարության 19.08.2010 թվականի N 1126-Ն որոշում /հիմնարկի առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով:

Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կազմակերպությունների կողմից իրականացվող մշակութային ծրագրերի արդյունավետությունը բարձրացնելու, նախարարության ու պետական ոչ առևտրային կազմակերպությունների հիմնադրամի գործառույթներն ու փոխհարաբերությունները հստակեցնելու նպատակով անհրաժեշտություն է

առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել նաև ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի գործառույթներում և կառուցվածքում՝ արդյունքում լուծարվել է աշխատակազմի «Հրատարակչական գործի գործակալություն» առանձնացված ստորաբաժանումը՝ /ՀՀ Կառավարության 05.08.2010 թվականի N 1055-Ն որոշում/ և ստեղծվել է «Գրքի և հրատարակչական գործի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

2. Ելնելով օրենքով և այլ իրավական ակտերով նախարարությունների առանձնացված ստորաբաժանումներին վերապահված լիազորությունները լիարժեք և արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրանց մասնակցությունը նախարարության աշխատակազմի կողմից ապահովելու դրույթից, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նրանց պահպանման ծախսերը ներառված են համապատասխան նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերում :

3. ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է ՀՀ նախարարությունների աշխատակազմերի և այդ մարմինների ղեկավարների աշխատակազմերի պահպանման ծախսերը պետական բյուջեում առանձին ծրագրերով նախատեսելու սկզբունքը:

4. ՀՀ դատական օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների՝ որպես դատական ղեկարտամենտի առանձնացված ստորաբաժանումների, պահպանման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են մեկ տողով՝ որպես ՀՀ դատարանների պահպանում:

5. «ՀՀ դատական օրենսգրքի», «Սահմանադրական դատարանի մասին». «Դատախազության մասին» և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ՀՀ դատարանների, ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ պալատի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողերով և որի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով նշված մարմինների համար նախատեսված բյուջեի երկու տոկոսին:

6. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի /09.06.2010թ. ՀՕ-63-Ն/ պահանջներից ելնելով նախատեսվել է ապահովագրական վճարներ՝ 1 ծառայողական ավտոմեքենայի համար հաշվարկային միավոր է ընդունվել 40.0 հազ դրամը:

7. Պետական կառավարման մարմիններում «Mulberry» էլեկտրոնային համակարգի ներդրմամբ պայմանավորված համակարգչային տեխնիկայի քանակի ավելացման հետ կապված նրանց շահագործման և պահպանման համար նախատեսվել է անհրաժեշտ միջոցներ:

8. ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերը հաշվարկվել են հիմք ընդունելով 16660 հաստիքային միավորների քանակը, որը 2010 թվականի համեմատ պակասել է 260 միավորով: Թվաքանակի պակասեցումը հիմնականում պայմանավորված է վերոնշյալ գործոններով, ինչպես նաև պետական կառավարման առանձին մարմիններում կառուցվածքային փոփոխությունների հետևանքով աշխատողների թվաքանակի կրճատումներով:

ՀՀ պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի փոփոխությունը արտացոլված է N 2 աղյուսակում:

9 Քաղաքացիական /պետական, դատական/ ծառայողների, բացառությամբ ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների, աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է հիմք ընդունելով 40.0 հազար դրամ բազային պաշտոնային դրույքաչափը, հարկային և մաքսային ծառայողներինը՝ 55.5 հազ. դրամ, հարկադիր կատարողներինը՝ 42.0 հազար դրամ, պահպանելով 2010 թվականի մակարդակը: ՀՀ վերահսկիչ պալատի և ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի քաղաքացիական ծառայողների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ելնելով համապատասխան օրենքների պահանջներից: Աշխատավարձի ֆոնդը ծրագրավորվել է հաշվի առնելով վերոնշյալ ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ օրենսդրությամբ նախատեսված բնականոն աճերը:

Աշխատավարձի ֆոնդում ներառվել են նաև քաղծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու դեպքում քաղծառայողի հիմնական աշխատավարձի նկատմամբ 5 %-ի չափով սահմանվող հավելավճարները:

ՀՀ վճարեկ, վերաքննիչ և մասնագիտացված դատարանների դատավորների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ՀՀ դատական օրենսգրքի /հոդված 75/ պահանջներին համապատասխան: ՀՀ դատական դեպարտամենտի կազմում առանձնացված ստորաբաժանման կարգավիճակով գործող ՀՀ դատական կարգադրիչների ծառայության աշխատակիցների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է ելնելով ՀՀ դատական օրենսգրքի պահանջներից՝ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված չափերին և հաշվարկման կարգին համապատասխան՝ հիմք ընդունելով 14.4 հազար դրամ բազային պաշտոնային դրույքաչափը:

Դատախազների աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել «Դատախազության մասին» ՀՀ օրենքի հոդված 55-ով ամրագրված դրույթներին համապատասխան: Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմերի աշխատավարձերի ֆոնդերը հաշվարկվել է համապատասխանաբար «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» և «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան :

Միաժամանակ ՀՀ կառավարության 24.04.10 N 16 արձանարային որոշման պահանջներն ապահովելու նպատակով պետական կառավարման մարմինների աշխատողների թվաքանակի կրճատումների հետևանքով տնտեսված միջոցները թողնվել է պետական մարմինների աշխատավարձերի ֆոնդերում, որը պետք է ուղղվի լավագույն աշխատողների աշխատավարձերի բարձրացմանը կամ պարզևատրմանը:

10. Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն և վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված նորմաներով,

11. Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշմամբ հաստատված ծառայողական ավտոմեքենաների /բացառությամբ հարկային և մաքսային մարմիններին սպասարկման համար նախատեսված ծառայողական ավտոմեքենաների/ սահմանաքանակին համապատասխան 972 ավտոմեքենայի համար, 1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը հաշվարկվել է 1200.0 հազ. դրամի չափով, օրական 10 լիտր բենզինի հաշվարկով:

ՀՀ պետական կառավարման մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակի փոփոխությունը արտացոլված է սույն բացատրաբրի N 2 բ աղյուսակում:

12. Կապի ծառայությունների վճարները ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կապի և կոմունալ ծախսերի նորմաներ սահմանելու մասին» N 1536-Ն և ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 12-ի Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում կապի ծառայությունների նորմաները և հեռախոսակապից օգտվելու օրինակելի ներքին կանոնները հաստատելու մասին N 1956-Ն որոշումների պահանջներին համապատասխան, սակայն հեռախոսային խոսակցությունների տարեկան սահմանաչափը ծրագրավորվել է հաշվարկվածի 30 %-ի չափով, ՀՀ դատարանների կապի ծառայությունների ծախսերը հաշվարկվել է ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի «Հայաստանի Հանրապետության դա-

տարանների կապի միջոցների տեսակների, քանակի և կապի ծառայությունների, ինչպես նաև կոմունալ ծախսերի նորմաների մասին» N 732-Ա որոշման պահանջներին համապատասխան: Կապի ծախսերը հաշվարկվել է հաշվի առնելով նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի օգոստոսի 24-ի «Արմենտել» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցվող ծառայությունների սակագների սահմանման մասին» N 340-Ն որոշումը:

13. Էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր – ծրագրավորվել է ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 28-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նախագծում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գծով բյուջետային ծախսերի առանձին տեսակների ջեռուցման, վառելիքի և էլեկտրաէներգիայի ձեռքբերման ծավալների հաշվարկման հիմքում դրվող նորմաները հաստատելու մասին» կառավարության N 629-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով նաև սակագների բարձրացումը /բնական գազի 1մ3 սակագինը 132 դրամով 96.0 դրամի փոխարեն, իսկ ամսական 10.0 հազար մ3-ից ավելի օգտագործելու դեպքում 243.13 /215-ի փոխարեն/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, սակայն էլեկտրաէներգիայի ծախսերը ծրագրավորվել է հաշվարկվածի 65%-ի չափով:

14. Ջրմուղ - կոյուղուց օգտվելու վարձի վճարման ծախսեր - ծրագրավորվել են հաստատված սակագներին համապատասխան՝ Երևանում մեկ խորանարդ մետրը – 181 դրամ, մարզերում՝ 179.78 դրամ: ՀՀ պետական մարմինների կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելու վարձի վճարման ծախսերը հաշվարկվել է հիմք ընդունելով յուրաքանչյուր հաստիքային միավորի համար օրական 30 լիտր սահմանված նորմատիվը, բացի այդ ՀՀ դատարանների համար ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 12-ի N 732-Ն որոշման պահանջներին համապատասխան նախատեսվել է նաև լրացուցիչ ծախս՝ ելնելով դատական նիստերի դահլիճների ընդհանուր մակերեսի մեծությունից:

15. Հաշվի առնելով ՀՀ վարչապետի որոշումներով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար հատկացվող միջոցների առավել արդյունավետ օգտագործման հանգամանքը, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում պահպանվել է արտասահմանյան երկրներ մեկնելու համար նախատեսված գործուղման ծախսերը արտասահմանյան պաշտոնական գործուղումների ծախսերում ներառելու սկզբունքը:

16. ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2011 թվականի համար ծրագրավորվել է 6506.6 մլն դրամի չափով, որը 2010 թվականի մակարդակը գերազանցում է 274.2 մլն դրամով: Ծախսերի աճը պայմանավորված 2010 թ. ընթաց-

քում բացված /Ճապոնիա, Իրաք, Քուվեյթ, Ուզբեկստան, Չեխիա, Նիդերլանդներ, Իսպանիա / դեսպանությունների պահպանման համար 2011 թվականին անհրաժեշտ լրացուցիչ գումարների նախատեսմամբ:

ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների պահպանման ծախսերի ընդհանուր գումարը ՀՀ 2011 թվականի պետբյուջեի նախագծում ծրագրավորված է 55597.3 մլն դրամի չափով, որը 2009 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2010 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների նկատմամբ կազմում է համապատասխանաբար 112.3 և 106.3 տոկոս: Սույն համեմատությունը արտացոլված է բացատրագրի N 2 աղյուսակում:

Աշխատավարձի ֆոնդ - օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2011 թվականի համար ծրագրավորվել է 31359.2 մլն դրամի չափով, որը 2010 թվականից ավելի է 776.0 մլն դրամով: Աշխատավարձի ֆոնդը հաշվարկվել է հաշվի առնելով «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան քաղաքացիական /պետական, դատական/ ծառայողների աշխատավարձի բնականոն աճը, «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» և «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան հարկային ծառայողների, մաքսային ծառայողների, հարկադիր կատարողների և դատական կարգադրիչների աշխատավարձերի բնականոն աճերը, «ՀՀ դատական օրենսգրքի», «Դատախազության մասին» և «Հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքների պահանջներին համապատասխան դատավորների, դատախազների և հատուկ քննչական ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերի նկատմամբ հաշվարկվող հավելավճարների աճը, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամների աշխատավարձի բարձրացումը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատողների աշխատավարձերի կարգավորումը, ինչպես նաև առանձին մարմիններում գործառույթների և կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի փոփոխությունները :

Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ - հաշվարկվել են «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Էներգետիկ ծառայություններ` ներառում է էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսերը - ծրագրավորվել է 1412.2 մլն դրամի չափով, որը 2010 թվականի մակարդակը գերազանցում է

89.3 մլն դրամով: Ավելացումը հիմնականում պայմանավորված է բնական գազի սակագնի բարձրացմամբ:

Գոմունալ ծառայություններ՝ ներառում է ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև վարչական շենքերի աղբահանման և միջատազերծման հետ կապված ծախսերը - ծրագրավորվել է 127.1 մլն դրամի չափով, որը 2010 թվականի մակարդակը գերազանցում է 7.3 մլն դրամով: Ավելացումը պայմանավորված է ջրամատակարարման և ջրահեռացման սակագների բարձրացմամբ:

Կապի ծառայություններ - ծրագրավորվել է 1684.5 մլն դրամի չափով, որը 2010 մակարդակը գերազանցում է 179.8 մլն դրամով: Աճը պայմանավորված է պետական կառավարման առանձին մարմիններում կապի ծախսերի կանոնակարգմամբ, ինչպես նաև առանձին մարզերում բույսերի ներդրմամբ:

Գույքի և սարքավորումների վարձակալություն - ծրագրավորվել է ներկայացված պայմանագրերին համապատասխան:

Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսեր - ծրագրավորվել են 1894.8 մլն դրամի չափով:

Պայմանագրային ծառայությունների ձեռք բերում - ծրագրավորվել է 1397.7 մլն դրամի չափով, որը 2010 թվականի մակարդակը գերազանցում է 164.0 մլն դրամով: Պայմանագրային ծառայությունները ներառում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման վարչական ծառայությունները, համակարգչային ծառայությունները, աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայությունները, տեղեկատվական ծառայությունները, կառավարչական ծառայությունները, կենցաղային և հանրային սննդի ծառայությունները, ներկայացուցչական ծախսերը և ընդհանուր բնույթի այլ ծառայությունները:

Նյութեր - ծրագրավորվել է 894.3 մլն դրամի չափով, որը 2010 թվականի մակարդակը գերազանցում է 86.3 մլն դրամով: Նյութերը ներառում են գրասենյակային պիտույքների, գյուղատնտեսական ապրանքների, առողջապահական և լաբորատոր նյութերի, կենցաղային և հանրային սննդի նյութերի և հատուկ նպատակային այլ նյութերի ձեռք բերման, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ դատախազության զինդատախազների և ՀՀ դատարանների դատական կարգադրիչների համազգեստների ձեռքբերման ծախսերը:

Տրանսպորտային ծառայությունների ծախսերը տարանջատված են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման չորս հոդվածներում՝ տրանսպորտային նյութեր /բենզին, յուղեր, այլ նյութեր տրանսպորտային միջոցների համար/, մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում, ընդհանուր բնույթի այլ ծառայություններ /տեխնիկական զննման վճարներ՝ 1 մեքենայի համար 8.0 հազար դրամ/ և

այլ հարկեր /բնապահպանական վճարներ՝ 1 մեքենայի համար 2.5-3.0 հազար դրամ/։
Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրարավորվել են 1860.4 մլն
դրամի չափով։

Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին - ծրագրավորվել
է 644.5 մլն.դրամի չափով՝ «Պետական գնումների գործակալություն», «Սպասարկում» և
«Կոնդի առանձնատների տնտեսություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն-
ներին պետական աջակցության համար։

Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին – ծրագրավորվել է 577.8 մլն.դրամի չափով՝
ՀՀ օրենսդրությամբ Երևանի քաղաքապետարանի կենտրոնական ապարատի պահպանման
համար նախատեսված պետական աջակցություն։

Այլ նպաստներ բյուջեից - ծրագրավորված է 922.3 մլն դրամի չափով՝ ներառում է ՀՀ
Ազգային Ժողովի պատգամավորների պատգամավորական գործունեության հետ կապված
ծախսերը, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան
հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման ծախսերը, «Զինծառայողների և նրանց
ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին
համապատասխան ՀՀ դատարանների դատական կարգադրիչների պարենային բավարար-
ման համար անհրաժեշտ գումարը, ինչպես նաև ծառայողական պարտականությունները
կատարելիս հարկադիր կատարողի կողմից հասարակական տրանսպորտից օգտվելու և
անձնական օգտագործման ավտոմեքենան ծառայողական նպատակներով օգտագործելու
հետ կապված ծախսերի հատուցման գումարը։ Բացի այդ նախատեսված են համապա-
տասխան միջոցներ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայության,
համայնքային ենթակայության սոցիալական օգնության ծառայությունների գործունեության
կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված
լիազորությունների իրականացման ֆինանսավորումն ապահովելու նպատակով։

Այլ ծախսեր - ծրագրավորվել է 7504.1 մլն դրամի չափով։ Ներառում է՝ ՀՀ դեսպա-
նությունների և ներկայացուցչությունների, ՀՀ ռազմական կցորդների, արտասահմանում ՀՀ
առևտրային ներկայացուցչությունների պահպանման ծախսերը, ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային
Ժողովի նախագահի և ՀՀ վարչապետի ֆոնդերը, ՀՀ Նախագահի կողմից առանձին անձանց
պարգևատրելու համար անհրաժեշտ մեդալների և շքանշանների պատրաստման ծախսերը,
ՀՀ սահմանադրական դատարանի, ՀՀ դատարանների, ՀՀ դատախազության և ՀՀ վերահսկիչ
պալատի պահուստային ֆոնդերը։

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նախատեսվել են 355.3 մլն դրամի չափով՝ պետական կառավարման առանձին մարմիններում կարողությունների զարգացման համար:

Դրա հետ մեկտեղ պետական կառավարման ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Պետական հատվածի բարեփոխումների երկրորդ ծրագիր

Ծրագիր նպատակն է կատարելագործել հանրային հատվածի կառավարման իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ քաղաքականության մշակման ոլորտում գերատեսչական հզորությունների ուժեղացման, մարդկային կապիտալի արդյունավետության առավելագույնի հասցման և ներքին աշխատանքային հոսքերի և արտաքին հաղորդակցության համար տեղեկատվական համակարգերի ստեղծման միջոցով:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ա) քաղաքականության ձևավորման և ծառայությունների մատուցման ձևաչափում գերատեսչական կարողությունների զարգացում,
- բ) հանրային հատվածում մարդկային ռեսուրսների գործունեության արդյունավետության բարձրացում,
- գ) կատարողականի և թափանցիկության բարելավման նպատակով համակարգերի մշակում,
- դ) ժամանակին պահանջվող տեխնիկական աջակցություն,
- ե) ծրագրերի կառավարում և իրականացում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստման կանխավճարի ծրագիր

Ծրագրի նպատակն է օժանդակել Էլեկտրոնային հասարակության և ինովացիոն ծրագրի նախապատրաստմանը, որն ուղղված է տնային տնտեսությունների, բիզնեսի և պետական կազմակերպությունների համար հիմնացանցի, համակարգիչների և էլեկտրոնային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, ինչպես նաև գիտելիքահեն և տեխնոլոգիահեն հատվածի ծավալների ավելացմանը:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ապրանքների, տեխնիկական օժանդակության տրամադրում անձնավորված կենտրոնի համար, գրանցման կայանների և էլեկտրոնային իդենտիֆիկացիոն փաստաթղթերի և էլեկտրոնային անձնագրերի մշակում/տրամադրում առաջին տարվա համար,

- տեխնիկական օժանդակության տրամադրում և ընտրված Ծրագրի ֆինանսավորման գործիքների համար լրացուցիչ վարկավորման աղբյուրների ստեղծում՝ ֆինանսավորելու համար Ծրագրի ենթաբաղադրիչ հանդիսացող «Համակարգիչ բոլորի համար» ծրագրում ներգրավված լոգիստիկ կենտրոններին և մասնակցող սպառողներին.

- գործառնական ծախսերի ֆինանսավորման տրամադրում՝ Գործողությունների իրականացմանը օժանդակելու նպատակով:

Միաժամանակ 2011 թվականին պետական կառավարման ոլորտում ոլորտում Համաշխարհային բանկի աջակցությամբ նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ դրամաշնորհային ծրագրերը՝

- ա) Օտարերկրյա ներդրումների և արտահանման աջակցության երկրորդ դրամաշնորհային ծրագիր,

- բ) Ազգային ժողովի քաղաքականության ձևավորման և հանրության հետ երկխոսության կարողությունների հզորացման դրամաշնորհային ծրագիր,

- գ) Պետական պարտքի կառավարման դրամաշնորհային ծրագիր,

- դ) Հանրային հատվածի ներքին աուդիտի իրականացման դրամաշնորհային ծրագիր,

- ե) Ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար վերահսկողության փորձնական դրամաշնորհային ծրագիր,

- զ) ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարողությունների զարգացման դրամաշնորհային ծրագիր,

- է) ՀՀ կառավարության արդյունքների մոնիթորինգի բարելավման կարողությունների ստեղծման դրամաշնորհային ծրագիր,

Բացի այդ, 2011 թվականին արդարադատության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատախիրավական բարեփոխումների երկրորդ ծրագիր

Դատախիրավական բարեփոխումների երկրորդ վարկային ծրագրի հիմնական նպատակներն են.

- ա) դատական գործառնությունների և ծառայությունների արդյունավետությունը,

բ) արժանահավատությունը և թափանցիկությունը բարելավելու համար Հայաստանի դատախիզական համակարգին ապահովել անհրաժեշտ վարչարարություն, շինություններ և անդլայնված կարողություններ,

գ) շարունակել դատական ծառայությունների մասին իրազեկվածության և իրավական ու դատական տեղեկությունների մատչելիության բարելավումը:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքներն ըստ ծրագրի բաղադրիչների՝

Բաղադրիչ 1.

1. ՀՀ դատարանների համակարգչային տեխնիկայի նորացում և այլ սարքավորումների գնում,

2. դատական արխիվների և էլեկտրոնային շտեմարանի համար անհրաժեշտ ապրանքների ձեռքբերում:

Բաղադրիչ 2.

1. վերակառուցված և նոր կառուցված դատարանների շենքերի անվտանգության համակարգերով ապահովում,

2. վերակառուցված և նոր կառուցված դատարանների համար կահույքի և շերտավարագույրների ձեռքբերում և տեղադրում,

3. Մեղրիի, Եղեգնաձորի, Ապարանի, Սևանի, Իջևանի, Կապանի ընդհանուր իրավասության դատարանների, ինչպես նաև ՀՀ ԱՆ փորձագիտական կենտրոնի շենքերի վերակառուցման շինարարական աշխատանքների իրականացում,

4. վերը նշված շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության և նախագծող կազմակերպությունների հեղինակային հսկողության իրականացում:

Բաղադրիչ 3. ՀՀ արդարադատության ակադեմիայի նոր շենքի կառուցման շինարարական աշխատանքներ:

Միաժամանակ արդարադատության ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել՝

ա) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատախիզական բարեփոխումների երկրորդ ծրագրում ճապոնական դրամաշնորհային ծրագիրը,

բ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Դատախիզական բարեփոխումների երկրորդ ծրագրում հոլանդական դրամաշնորհային ծրագիրը:

Բնակչության առողջության պահպանումը պետության կողմից դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից մեկը:

Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված առողջապահության բնագավառի ծախսերը (առանց ՀՀ առողջապահության նախարարության պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) կազմում են 61453.1 մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 7243.0 մլն դրամ կամ 13.4 տոկոս: Առողջապահության ոլորտում պետական ծախսերի աճը՝ ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկն է:

Առկա խնդիր է դիտարկվում առողջապահության ոլորտին ուղղվող պետական ծախսերի առավել նպատակային և արդյունավետ ծախսային ուղղվածության ապահովումը, ինչպես նաև բուժօգնության ծառայությունների մատչելիության բարձրացումը: Առողջապահության ոլորտում պետության կողմից իրականացվող ծրագրերի նպատակներն են՝

- Բնակչության առողջության առաջնային պահպանումը,
- Բնակչության հիգիենիկ և համաճարակային անվտանգության ապահովումը,
- Մոր և մանկան առողջության ապահովումը,
- Բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը,
- Սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների կանխարգելումը և բժշկական օգնության ապահովումը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով առողջապահության ծախսերի ձևավորումն ունի երկու հիմնական մոտեցում.

- առողջապահական գերակայությունների պահպանում,
- սոցիալական ուղղվածության ապահովում:

«Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ»

«Դեղագործական ապրանքներ»

Դասը ընդգրկում է «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» և «Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» ծրագրերը, որոնց գծով համապատասխանաբար նախատեսվում են 3686.4 մլն դրամ և 1.1 մլն դրամ՝ 2010 թվականի չափով: Ծրագրերով նախատեսվում են կենտրոնացված միջոցներով դեղորայքի ձեռքբերման ծախսեր: Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի հոգեմետ, չարորակ նորագոյացություններով հիվանդների, շաքարային և ոչ շաքարային դիաբետով հիվանդների,

էպիլեպսիայով, պարբերական հիվանդությամբ հիվանդների, երիկամների փոխպատվաստում տարած հիվանդների համար դեղորայք:

«Արտահիվանդանոցային ծառայություններ»

Առողջապահության ոլորտի գերակա ուղղություն է հանդիսանում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա, որի նպատակն է ապահովել առողջության առաջնային պահպանման ոլորտի զարգացման շարունակությունը (ամբուլատոր-պոլիկլինիկական անվճար բուժօգնության իրականացման սկզբունքի պահպանմամբ), որպես ազգային առողջապահության համակարգի զարգացման և բարեփոխումների ամենարդյունավետ ուղու:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով «Արտահիվանդանոցային ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 23884.4 մլն դրամ: ՀՀ 2011 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 2851.1 մլն դրամով:

Առաջնային բուժօգնության ոլորտի շրջանակներում նախատեսվում են տասներեք ծրագրերի իրականացում: Այսպես.

- «Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագիր, որի գծով նախատեսվում է 8792.0 մլն դրամ՝ 2010 թվականի 8048.5 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 9.2 տոկոս,

- «Նեղ մասնագիտացված բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 2862.2 մլն դրամ 2010 թվականի 2615.4 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 9.4 տոկոս,

- «Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 1299.0 մլն դրամ 2010 թվականի 1171.9 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 10.8 տոկոս,

- «Շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների բուժման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 142.0 մլն դրամ 2010 թվականի չափով,

- «Օրթոդոնտոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 11.7 մլն դրամ 2010 թվականի չափով,

- «Բարձր ռիսկի խմբերում ընդգրկված բնակչության մոտ հիվանդությունների հայտնաբերման, առողջության գնահատման և բուժման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 128.0 մլն դրամ 2010 թվականի չափով,

- «Մպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 71.4 մլն դրամ 2010 թվականի 66.3 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 7.8 տոկոս,

- «Հեմոդիալիզի անցկացման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 1287.7 մլն դրամ 2010 թվականի 1201.9 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 7.1 տոկոս,

- «Ստոմատոլոգիական բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 744.7 մլն դրամ 2010 թվականի չավիով,

- «Երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 95.3 մլն դրամ 2010 թվականի 93.0 մլն դրամի դիմաց,

- «Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիր՝ նախատեսվում է 2843.0 մլն դրամ 2010 թվականի 2743.2 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 3.6 տոկոս,

- «Շտապ բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 2986.9 մլն դրամ 2010 թվականի 1466.4 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 103.7 տոկոս,

- «Զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 2620.6 մլն դրամ 2010 թվականի 2600.3 մլն դրամի դիմաց:

Նախագծով 2011 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը ՀՀ 2010 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է.

- տեղամասային թերապևտների (մանկաբույժների), ընտանեկան բժիշկների, դեռահասների կաբինետների բժիշկ-մասնագետների, բուժքույրերի, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման ծախսերի, տեղամասերի աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային (առաջին օգնության համար անհրաժեշտ դեղորայքի և վիրակապակյա նյութերի) ծախսերի 9.3 տոկոս ավելացմամբ (2010 թվականի 6246.8 մլն դրամի դիմաց 2011 թվականին նախատեսվում է 6828.0 մլն դրամ): Բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 84700 դրամ՝ 2010 թվականի 77000 դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 54250 դրամ, 2010 թվականի 49300 դրամի դիմաց: Լեռնային և բարձր լեռնային բնակավայրերում տեղամասային սկզբունքով աշխատող բուժանձնակազմին 2011 թվականին նախատեսվում է սահմանված աշխատավարձի նկատմամբ 10% և 20% հավելումներ,

- դպրոցներում երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերի 4.2 տոկոս ավելացմամբ (2010 թվականի 461.3 մլն դրամի դիմաց՝ 2011 թվականին նախատեսվում է 480.5 մլն դրամ),

- բնակչության սոցիալական խմբերին արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքի ծախսերի 10.7 տոկոս ավելացմամբ (2010 թվականի 1340.4 մլն դրամի դիմաց՝ 2011 թվականին նախատեսվում է 1483.5 մլն դրամ), որը պայմանավորված է արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց տրվող դեղորայքի միջին արժեքի ավելացմամբ,

- նեղ մասնագիտացված բժշկական օգնություն իրականացնող կաբինետների և դիսպանսերների բժիշկների, բուժքույրերի, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման ծախսերի, կաբինետների աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային ծախսերի 9.4 տոկոս ավելացմամբ (2010 թվականի 2615.4 մլն դրամի դիմաց 2011 թվականին նախատեսվում է 2862.2 մլն դրամ): Նշված բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 72600 դրամ՝ 2010 թվականի 66000 դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 43600 դրամ, 2010 թվականի 39600 դրամի դիմաց: Հակատուբերկուլյոզային, հոգեբուժական և մաշկավեներաբանական կաբինետներում աշխատող բուժանձնակազմին՝ աշխատանքային վնասակարության համար՝ նախատեսվում է սահմանված աշխատավարձի նկատմամբ 50 տոկոս հավելումներ,

- մանկաբարձագինեկոլոգիական օգնություն իրականացնող կաբինետների բժիշկների, մանկաբարձ-գինեկոլոգների, բուժքույրերի, մանկաբարձուհիների, կրտսեր բուժանձնակազմի և վարչատնտեսական անձնակազմի պահպանման ծախսերի, կաբինետների աշխատանքների ապահովման տնտեսական և դեղորայքային ծախսերի 10.8 տոկոս ավելացմամբ (2010 թվականի 1171.9 մլն դրամի դիմաց նախատեսվում է 1298.9 մլն դրամ): Նշված բժշկական անձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 100320 դրամ՝ 2010 թվականի 91200 դրամի դիմաց, իսկ միջին բուժանձնակազմի աշխատողների հաշվարկային միջին ամսական աշխատավարձը՝ 60170 դրամ, 2010 թվականի 54700 դրամի դիմաց,

- տարբեր մարզաձևերի ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների բժշկական հսկողության, հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման, ինչպես նաև ՀՀ հավաքական թիմերին անհրաժեշտ վիտամիններով, դեղամիջոցներով և

վերականգնողական միջոցներով ապահովման համար 2010 թվականի 66.3 մլն դրամի դիմաց՝ 2011 թվականին 71.4 մլն դրամ նախատեսամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխատողների աշխատավարձի 10 տոկոս ավելացմամբ,

- հեմոդիալիզի բուժման դեպքերի 31-ով ավելացմամբ՝ 85.8 մլն դրամ գումարով,

- երեխաների ստոմատոլոգիական առաջնային կանխարգելման ծառայություններ ծրագրում ընդգրկված 6 և 12 տարեկան երեխաների թվաքանակի 1923-ով ավելացմամբ՝ 2.3 մլն դրամ գումարով,

- լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների թվի 133.2 հազարով ավելի նախատեսմամբ՝ 99.8 մլն դրամ գումարով, որը հիմնականում պայմանավորված է հղիների թվաքանակի ավելացմամբ,

- շտապ բժշկական օգնության կանչի միջին արժեքի շուրջ 95 տոկոս ավելացմամբ՝ 1383.7 մլն դրամ գումարով և կանչերի թվի 16 հազարով ավելի նախատեսմամբ՝ 136.7 մլն դրամ գումարով: 2011 թվականին նախատեսվում է իրականացնել «03» շտապ բժշկական օգնության ծառայության բարեփոխումների ծրագիր: Գծային բրիգադի բժշկի հաշվարկային միջին ամսական աշխատավարձը նախատեսվում է 121500 դրամ (2010 թվականի՝ 51000 դրամի դիմաց), իսկ բուժքույրի՝ 85050 դրամ (2010 թվականի՝ 48000 դրամի դիմաց): Դեղորայքի և բժշկական նշանակության այլ պարագաների գծով նախատեսվում է շուրջ 64 տոկոս ավելացում, որը հիմնականում պայմանավորված է ժամանակակից և համեմատաբար արդյունավետ դեղամիջոցների կիրառմամբ, ինչպես նաև դեղորայքի շուկայում գների մոտ 30 տոկոս ավելացմամբ: Տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգման ծախսերի և պահեստամասերի գնման գծով նախատեսվում է ծախսերի կրկնակի անգամ, իսկ վառելանյութի՝ հիմնականում թանկացման հետ կապված 25 տոկոս ավելացումներ,

- զինկոմիսարիատներին կից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնելու համար 2010 թվականի 199.9 մլն դրամի դիմաց՝ 2011 թվականին 219.9 մլն դրամ նախատեսմամբ: Բժշկական հետազոտում իրականացնող բժշկի համար փոխհատուցման ծախսերը (ամսվա կտրվածքով) նախատեսվում են 71500 դրամ՝ 2010 թվականի 65000 դրամի դիմաց, իսկ բուժքույրի համար՝ 52800 դրամ, 2010 թվականի 48000 դրամի դիմաց,

Արտահիվանդանոցային բուժօգնության գծով ծրագրերը ներառում են՝

- ընտանեկան բժշկի և տեղամասային թերապևտի (մանկաբույժի) կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, հիվանդների բժշկական օգնության և նրանց նկատմամբ շարունակական հսկողության ապահովման, անհրաժեշտու-

թյան դեպքում, հիվանդանոցային բուժման կարիք ունեցողների հոսպիտալացման կազմակերպման միջոցառումների իրականացումը,

- արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց տեղամասային թերապևտի (մանկաբույժի) և ընտանեկան բժշկի միջոցով, իսկ առանձին հիվանդությունների գծով՝ համապատասխան մասնագետի միջոցով անհրաժեշտ դեղորայքով ապահովումը,

- ամբուլատոր-պոլիկլինիկական օդակի և դիսպանսերների նեղ մասնագետների կողմից բնակչության բուժական-խորհրդատվական մասնագիտացված օգնության ապահովումը (ուռուցքաբանական, ներզատաբանական, հոգեբուժական, մաշկավեներաբանական, հակատուբերկուլյոզային, նարկոլոգիական, ինֆեկցիոն, սրտաբանական, քիթ-կոկորդ-ականջաբանական, վիրաբուժական/վնասվածքաբանական, նյարդաբանական, ակնաբուժական և այլ կարիներտների միջոցով) ամբողջ բնակչության համար, առանց հաճախումների սահմանափակման,

- շարունակական հսկողություն պահանջող և առանձին հիվանդությունների ամբուլատոր բուժման կազմակերպումը,

- մտավոր, հոգեկան, լսողական, ֆիզիկական, շարժողական և այլ զարգացման խանգարումներով երեխաների առողջական վիճակի գնահատումը և վերականգնողական բուժման ամբուլատոր կազմակերպումը,

- ամբուլատոր-պոլիկլինիկական օդակում ըստ բժշկական ցուցումների լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների իրականացման ապահովումը ամբողջ բնակչության համար՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից,

- տուբերկուլյոզով, դիաբետով, չարորակ նորագոյացություններով և սիրտ-անոթային համակարգի հիվանդների (բարձր ռիսկի խմբում ընդգրկված բնորոշիչ ախտանիշներ ունեցող անձանց) լաբորատոր-գործիքային հետազոտությունների իրականացման ապահովումը,

- 6 և 12 տարեկան երեխաների բերանի խոռոչի հիգիենայի ծրագրի իրականացման ապահովումը,

- 15 տարեկան աղջիկների առողջական վիճակի գնահատումը և խորհրդատվությունը,

- հեմոդիալիզով հիվանդների բուժման ապահովումը,

- ստոմատոլոգիական օգնության ապահովումը մինչև 8 տարեկան, ինչպես նաև 12 տարեկան երեխաներին, 65 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց և սոցիալապես անապահով խմբերում ընդգրկվածներին,

- նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց առողջական վիճակի հետազոտումը, գնահատումը, բժշկական օգնության ու սպասարկման կազմակերպումը և առաջին անհրաժեշտության բժշկական պարագաներով և դեղորայքով ապահովումը,

- գյուղական բնակավայրերում բուժակ-մանկաբարձական կետերի միջոցով բնակչության մինչբժշկական օգնության և սպասարկման իրականացումը,

- հղիների և գինեկոլոգիական հիվանդություններով տառապող կանանց մանկաբարձագինեկոլոգիական օգնության ապահովումը՝ կանանց կոնսուլտացիաների (կաբինետների) միջոցով,

- տարբեր մարզաձևերի գծով ՀՀ հավաքական թիմերում ընդգրկված մարզիկների բժշկական հսկողության, հիվանդությունների և վնասվածքների ախտորոշման և բուժման իրականացումը: ՀՀ հավաքական թիմերի անդամներին բարձրորակ դեղորայքով, վիտամիններով և վերականգնողական միջոցներով ապահովումը և հակադոպինգային հսկողության իրականացումը,

- հանրապետության տարածքում ամբողջ բնակչության համար անհետաձգելի բժշկական օգնության ապահովումը շտապ բժշկական օգնության կանչերի միջոցով:

Ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության ֆինանսավորումը շարունակվելու է իրականացվել բնակչության մեկ շնչի հաշվով ֆինանսավորման սկզբունքով (հաշվարկի համար բնակչության հաշվարկային մեծությունը ընդունված է 3249.5 հազար, որից մեծահասակներ՝ 2493.4 հազար, երեխաներ՝ 673.8 հազար, նախագորակոչային և գորակոչային տարիքի պատանիներ՝ 82.3 հազար):

«Բնակչության առողջության առաջնային պահպանման ծառայություններ» ծրագրով տարվա կտրվածքով տեղամասային թերապևտի (ընտանեկան բժշկի) կողմից 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց բժշկական օգնության և սպասարկման համար մեկ բնակչի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 1683 դրամ՝ 2010 թվականի դրամի 1536 դրամի դիմաց: Նշված ծրագրով տարվա կտրվածքով տեղամասային մանկաբույժի (ընտանեկան բժշկի) կողմից մինչև 18 տարեկան երեխաների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ երեխայի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 3513 դրամ՝ 2010 թվականի 3198 դրամի դիմաց, իսկ դեռահասների կաբինետի բժիշկ-մասնագետի կողմից դեռահասների բժշկական օգնության և սպասարկման համար մեկ դեռահասի հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 3224 դրամ՝ 2010 թվականի 2958 դրամի դիմաց: Դպրոցներում իրականացվող երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծախսերը ըստ մեկ աշակերտի ֆինանսավորման նախատեսվում են տարեկան 1214 դրամ՝ 2010 թվականի 1112 դրամի դիմաց:

Նեղ մասնագիտական բժշկական օգնության գծով ըստ նեղ մասնագետի բուժօգնության իրականացման մեկ շնչի ֆինանսավորման միջինացված գումարը նախատեսվում է մեծահասակների համար 448 դրամ՝ 2010 թվականի 410 դրամի դիմաց, իսկ երեխաների (այդ թվում պատանիների) համար՝ 666 դրամ 2010 թվականի 611 դրամի դիմաց:

Մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով տարվա կտրվածքով մեկ կնոջ հաշվով հատկացվող միջինացված գումարը նախատեսվում է 986 դրամ՝ 2010 թվականի 901 դրամի դիմաց:

Լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների ծրագրի շրջանակներում 18 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտության ծախսերը ըստ մեկ շնչի ֆինանսավորման նախատեսվում են 622 դրամ՝ 2010 թվականի 588 դրամի դիմաց, մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով՝ 436 դրամ 2010 թվականի 375 դրամի դիմաց, գորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց համար 3023 դրամ և 3646 դրամ (ելնելով 2010 թվականի փաստացի կատարողականից), իսկ մինչև 18 տարեկան երեխաների համար 697 դրամ՝ 2010 թվականի չափով:

Նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց փորձաքննությունն անցկացնող բուժանձնակազմի կողմից բժշկական հետազոտման իրականացման մեկ շնչի ֆինանսավորման միջինացված գումարը նախատեսվում է 2672 դրամ՝ 2010 թվականի 2205 դրամի դիմաց:

«Հիվանդանոցային ծառայություններ»

Հիվանդանոցային բուժօգնության գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագիծը կազմում է 27370.9 մլն դրամ, որը գերազանցում է 2010 թվականի համապատասխան ցուցանիշը 6172.4 մլն դրամով կամ աճը կազմում է 29.1 տոկոս: Այդ ավելացման 52.8 տոկոսը մոտ 3261.9 մլն դրամ նախատեսվում է «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի գծով, որը պայմանավորված է նշյալ ծրագրի գծով հիվանդանոցային բուժօգնության մեկ օրվա միջին արժեքի շուրջ 70 տոկոս և դեպքերի թվի 6378-ով ավելացմամբ՝ կապված 2011 թվականին նախատեսվող երեխաների բուժօգնության բարեփոխումների ծրագրի իրականացմամբ:

Հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում իրականացվող մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքը (առանց «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի) նախատեսվում է 13650 դրամ՝ 2010 թվականի 12400 դրամի դիմաց կամ աճը կազմում է 10 տոկոս, որը հիմնականում պայմանավորված է բուժանձնակազմի աշխատավարձի 15 տոկոս բարձրացմամբ, դեղորայքի և բժշկական պարագաների, ինչպես նաև տնտեսական բնույթի ծախսերի 15-ական տոկոս ավելացմամբ: Բժշկի հաշվարկային միջին

ամսական աշխատավարձը նախատեսվում է 71300 դրամ (2010 թվականի 62000 դրամի դիմաց), իսկ բուժքույրի՝ 56400 դրամ (2010 թվականի 49000 դրամի դիմաց):

Ըստ վիճակագրական դիտարկումների տվյալների բնակչության 8-10%-ը կարիք ունեն ստանալու հիվանդանոցային բուժօգնություն (կամ մոտ 295000 դեպք), որից պետական պատվերի շրջանակներում 2010 թվականի պետական բյուջեով նախատեսվում է 215223 դեպք կամ կարիք ունեցողների 73 տոկոսը, իսկ 2011 թվականին՝ 240544 դեպք կամ կարիք ունեցողների 81.5 տոկոսը: Նախատեսվում է հիվանդանոցային բուժօգնություն ստացողների 25321 դեպքերի ավելացում, որից սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բուժօգնության գծով՝ 2530 դեպք, տուբերկուլյոզի բժշկական օգնության գծով՝ 543 դեպք, աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության գծով՝ 2695 դեպք, մանկաբարձական բժշկական օգնության գծով՝ 7874 դեպք, երեխաներին բժշկական օգնության գծով՝ 6378 դեպք, զորակոչային և նախազորակոչային տարիքի անձանց բժշկական օգնության և փորձաքննության գծով՝ 5202 դեպք, գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության գծով՝ 121 դեպք և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության գծով՝ 5 դեպք: Միաժամանակ վերականգնողական բժշկական օգնության գծով պակաս է նախատեսվում 27 դեպք:

Հիվանդանոցային բուժօգնության բոլոր ծրագրերի գծով դեպքերի թվաքանակի աճի համար հիմք է ընդունվել 2009 թվականի փաստացի կատարողականը, բացառությամբ մանկաբարձական բժշկական օգնության դեպքերի, որոնց ավելացումը պայմանավորված է 2009 թվականի ծնունդների փաստացի թվաքանակով, ինչպես նաև 2010-2011 թվականներին ծնունդների թվաքանակի կանխատեսվող աճով:

Հիվանդանոցային բուժօգնության ծառայության գծով հիվանդանոցային դեպքի դիմաց վճարումը կատարվում է ելնելով անվճար բուժօգնության համար հաստատված գներից: Գները հաշվարկվում են մեկ հիվանդի մեկ օրվա բուժման միջինացված արժեքի, բուժման միջին տևողության և ծառայության բարդության հաշվարկային գործակցի արտադրյալով: Որոշ ծրագրերի նկատմամբ կիրառվել է գների բարձրացման տարբերակված մոտեցում: 2010 թվականին ևս ֆինանսավորումը կիրականացվի սահմանափակված բյուջեի սկզբունքով:

Ինչպես 2010 թվականին, այնպես էլ 2011 թվականին հիվանդանոցային բուժօգնության շրջանակներում նախատեսվում է տասներեք ծրագրերի իրականացում: Այսպես.

- «Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 34168

հիվանդանոցային դեպքի բուժում 3831.8 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի 31638 դեպքի և 3482.0 մլն դրամի դիմաց: Դեպքերի ավելացումը նախատեսվում է ելնելով 2009 թվականի փաստացի կատարողականից, որը կազմել է 35997 դեպք:

«Բնակչության սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագիրը նպատակաուղղված է բժշկական օգնություն և ծառայություններ մատուցել բնակչության սոցիալապես անապահով խմբերին բժշկական օգնության և ծառայությունների բոլոր տեսակների համար, բացառությամբ՝ կոսմետոլոգիական, օրգանների ու հյուսվածքների փոխպատվաստման և ստոմատոլոգիական թանկարժեք ծառայությունների: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 14 %:

- «Անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 28830 հիվանդանոցային դեպքի բուժում 2900.6 մլն դրամ գումարով, 2010 թվականի նույն դեպքերի և 2502.6 մլն դրամի դիմաց: Ծախսերի նման ավելացումը (15.9 %) հիմնականում պայմանավորված է վերակենդանացման միջոցառումներ պահանջող դեպքերի բուժման արժեքների 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված մեկ դեպքի միջին արժեքի աճից ավելի նախատեսմամբ: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 10.6 %: Ծրագիրն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված անհետաձգելի վիճակների և հիվանդությունների ցանկի:

- «Տուբերկուլյոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է տուբերկուլյոզի 4954 հիվանդանոցային դեպքի բուժում 1305.0 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի 4411 դեպքի և 1186.1 մլն դրամի դիմաց:

Ծրագիրը ներառում է նոր հայտնաբերված տուբերկուլյոզով հիվանդների և կրկնակի հիվանդացածների բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, տուբերկուլյոզով քրոնիկ հիվանդների երկարատև բժշկական օգնության, սպասարկման և խնամքի ապահովումը հակատուբերկուլյոզային դիսպանսերներում, վերականգնողական բուժման կազմակերպումը հակատուբերկուլյոզային առողջարաններում: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 4.8 %:

- «Աղիքային և այլ ինֆեկցիոն հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է հիվանդանոցային 9542 դեպքի բուժում 1117.9 մլն դրամ գումարով, 2010 թվականի 6847 դեպքի և 688.0 մլն դրամի դիմաց: Երեխաների բուժօգնության բարեփոխումների ծրագրի իրականացման հետ կապված ծրագրում

ներառված մանկական բնակչության բուժօգնության մասով նախատեսվում է ծախսերի կտրուկ ավելացում: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 4.1%:

Ինֆեկցիոն հիվանդությունների բուժումը ներառում է աղիքային, վիրուսային և միջատներով տարածվող ինֆեկցիաներով ախտահարվածների բուժում, որն ունի սոցիալական նշանակություն: Ինֆեկցիոն հիվանդություններով տառապող անձանց բուժօգնության կազմակերպումը իրականացվում է ընդհանուր և մասնագիտացված ինֆեկցիոն հիվանդանոցներում, բաժանմունքներում:

- «Մեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 920 հիվանդանոցային դեպքի բուժում 170.1 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի 915 դեպքի և 154.7 մլն դրամի դիմաց:

Ծրագրով նախատեսվում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով տառապող անձանց, ինչպես նաև կոնտակտավորների մասնագիտացված բուժկանխարգելիչ օգնության իրականացումը և համապատասխան հսկողության կազմակերպումը մաշկավեներաբանական դիսպանսերներում: Ծրագրի շրջանակներում ներառվել է նաև ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ով հիվանդների բժշկական օգնության ծախսերը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 0.6 %:

- «Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 5382 հիվանդանոցային դեպքի բուժում 1786.2 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի նույն դեպքերի և 1620.0 մլն դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել քրոնիկ հոգեկան հիվանդների խնամքը, հիվանդների փորձաքննությունը, հարկադիր և սուր վիճակների բուժումը: Ծրագրով նախատեսվում է նարկոլոգիական դիսպանսերներում թմրամոլությամբ, թունամոլությամբ, ալկոհոլամոլությամբ տառապող անձանց հիվանդանոցային բուժման ապահովումը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 6.5 %:

- «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է հիվանդանոցային 7954 դեպքի բուժում 1035.3 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի նույն դեպքերի և 940.6 մլն դրամի դիմաց: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել չարորակ նորագոյացությունների համալիր, վիրահատական և ճառագայթային բուժում: Չարորակ հիվանդների ճառագայթային բուժում ցերեկային ստացիոնարի պայմաններում, ինչպես նաև քիմիաթերապևտիկ և

սիմպտոմատիկ բուժում: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 3.8 %:

- «Վերականգնողական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 3509 հիվանդանոցային դեպքի բուժում 561.5 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի 3536 դեպքի և 561.3 մլն դրամի դիմաց: Նշյալ ծրագրի գծով նախատեսվում է միայն սպինալ հիվանդների բուժման արժեքի ավելացում:

- «Զորակոչային և նախագորակոչային տարիքի անձանց փորձաքննության և բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 42909 հիվանդանոցային դեպքի բուժում 1017.6 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի 37707 դեպքի և 878.1 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 3.7 %:

- «Թրաֆիքինգի զոհերին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2.2 մլն դրամ:

- «Մանկաբարձական բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 60138 դեպք 6858.8 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի 52264 դեպքի և 5697.0 մլն դրամի դիմաց:

Ծրագրի շրջանակներում հղիության ախտաբանական ընթացքի հետ կապված նախատեսվում է բուժօգնության 1243 դեպքի ավելացում, իսկ 6631 դեպքի ավելացումը պայմանավորված է 2009 թվականի ծնունդների փաստացի թվաքանակով, ինչպես նաև 2010-2011 թվականներին ծնունդների թվաքանակի կանխատեսվող աճով:

Ծրագրի շրջանակներում ծննդաբերության հետ կապված բուժօգնության արժեքների ավելացում չի նախատեսվում:

Ծրագիրն ընդգրկում է ծննդաբերության հետ կապված՝ ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների բուժօգնությունը: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 25.1 %:

- «Գինեկոլոգիական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 4500 հիվանդանոցային դեպքի բուժում 396.1 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի 4379 դեպքի և 359.9 մլն դրամի դիմաց: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 1.4 %:

- «Երեխաներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 37738 հիվանդանոցային դեպքի բուժում 6388.0 մլն դրամ գումարով՝ 2010 թվականի 31360 դեպքի և 3126.1 մլն դրամի դիմաց:

Հաշվի առնելով 2011 թվականին նախատեսվող երեխաների բուժօգնության բարեփոխումների ծրագրի իրականացումը, սույն ծրագրի գծով նախատեսվում է բուժօգնության գների կտրուկ ավելացումներ: Ծախսերի ավելացումները հիմնականում կուղղվեն բուժանձնակազմի աշխատանքի վարձատրության, դեղորայքի, լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների, ինրպես նաև տնտեսական բնույթի ծախսերի ավելացմանը:

Ծրագրի գծով նախատեսվում է մինչև 7 տարեկան երեխաների հիվանդանոցային բժշկական օգնության իրականացում՝ անկախ երեխայի հիվանդության ախտորոշումից և սոցիալական կարգավիճակից, ինչպես նաև, մինչև 18 տարեկան երեխաների, հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող անհետաձգելի վիճակների և սուր հիվանդությունների դեպքերում, բուժօգնության իրականացում: Ընդհանուր հիվանդանոցային բուժօգնության ծախսերում սույն ծրագրի գումարը կազմում է 23.3 %:

«Հանրային առողջապահական ծառայություններ»

Հանրային առողջապահական ծառայությունների իրականացմանն ուղղվող ֆինանսական միջոցները կապահովեն Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունը, մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցության բացառումը, մարդու և նրա ապագա սերունդների կենսունակության համար բարենպաստ պայմանների ապահովումը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով «Հանրային առողջապահական ծառայություններ» խմբի գծով նախատեսվում է 2961.1 մլն դրամ: ՀՀ 2011 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 164.7 մլն դրամով:

Հանրային առողջապահական ծառայությունների շրջանակներում նախատեսվում է ութ ծրագրերի իրականացում: Այսպես՝

- «Հիգիենիկ և հակահամաճարակային փորձագիտական ծառայություններ» ծրագիր, որի գծով նախատեսվում է 1814.6 մլն դրամ՝ 2010 թվականի չափով:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել սանիտարա-քիմիական լաբորատոր հետազոտություններ, մանրէաբանական հետազոտություններ, ֆիզիկական գործոնների հետազոտություններ, խոլերայի նկատմամբ բաց ջրամբարների հետազոտություններ, վարակիչ օջախների ախտահանում և այլն:

- «Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 202.7 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել համաճարակաբանական հետազոտություններ վարակային հիվանդությունների օջախներում, մանրէաբանական հետազո-

տությունների իրականացում, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների, թունավորումների հաշվառում, համաճարակների, բռնկումների, արտակարգ իրավիճակների ժամանակ հատուկ հակահամաճարակային միջոցառումների իրականացում, մալարիայի դեմ պայքարի և կանխարգելման միջոցառումների իրականացում և այլն:

- Իմունականխարգելման ազգային ծրագիր՝ նախատեսվում է 230.0 մլն դրամ 2010 թվականի 190.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 21.1 տոկոս:

Ծրագրի շրջանակներում ձեռք կբերվի ԲՅԺ-ի (տուբերկուլոզ) պատվաստանյութ՝ 1.2 մլն դրամ, հեպատիտ Բ՝ 7.0 մլն դրամ, ԱԿԴՓ (դիֆթերիա, փայտացում, կապույտ հազ)՝ 12.9 մլն դրամ, հնգավալենտ պատվաստանյութ՝ 17.5 մլն դրամ, ԱԴՓ-Մ (դիֆթերիա, փայտացում)՝ 0.5 մլն դրամ, պոլիոմելիտ՝ 14.8 մլն դրամ, ԿԿԽ (կարմրուկ, կարմրախտ, խոզուկ)՝ 120.0 մլն դրամ, ներարկիչներ՝ 28.6 մլն դրամ, սեզոնային գրիպի պատվաստանյութ՝ 12.0 մլն դրամ և այլն:

- «Հատուկ վտանգավոր վարակների կանխարգելման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 228.8 մլն դրամ 2010 թվականի 215.4 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 6.2 տոկոս:

Ծրագրի գծով ավելացումը պայմանավորված է նախատեսվող հետազոտությունների քանակի 1006-ով (2010 թվականի 21568-ի դիմաց կիրականացվի 22574 հետազոտություն) ավելացմամբ՝ ելնելով 2009 թվականի փաստացի կատարողականից:

Հատուկ վտանգավոր վարակների կենտրոնը իրականացնում է էպիզոոտոլոգիական հետազոտություն հանրապետության տարածքում ժանտախտի, տուլարեմիայի և այլ բնական օջախային վարակների էպիզոոտիաները հայտնաբերելու և մարդկանց մեջ հիվանդացությունը ժամանակին կանխելու նպատակով: Նախատեսվում է 1600 էպիզոոտոլոգիական, 12250 ժանտախտի և էրիզիպելոյիդի, 2050 տուլարեմիայի, 2714 լեպտոսպիրոզի, 2050 խոլերայի և այլ հետազոտություններ:

- «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման և բուժօգնության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 112.9 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում իրականացվում է ՄԻԱՎ վարակի տարածվածության մասին տեղեկատվության ստացում, ընտրված խմբերում վարակի միտումների ընթացիկ հսկողություն: Նախատեսվում է ՄԻԱՎ հակամարմնի հայտնաբերման գծով համաճարակաբանական հետազոտություն՝ իմունոֆերմենտային անալիզի մեթոդով, արագ թեստավորման, ռեֆերենսային մեթոդով և այլն, ինչպես նաև մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում:

- «Վարակիչ հիվանդությունների օջախների ախտահանման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 60.7 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում հաշվարկվել է 3372 վարակիչ հիվանդների օջախների ախտահանում յուրաքանչյուրը 18000-ական դրամով:

- «Արյան հավաքագրման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 211.3 մլն դրամ 2010 թվականի 200.0 մլն դրամի դիմաց կամ աճը կազմում է 5.6 տոկոս:

Ծրագրի գծով ավելացումը պայմանավորված է դոնորական արյան վարակային անվտանգության հետազոտությունների թեստ-համակարգերի ձեռքբերման գների փոփոխության հետևանքով մեկ փորձանմուշի հետազոտման գնի 12.0 տոկոս ավելացմամբ (2010 թվականի 12.5 հազ. դրամի դիմաց մեկ փորձանմուշի հետազոտման գինը նախատեսվում է 14.0 հազ. դրամ):

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է հազվագույտ արյան հավաքագրման և պաշարման հետազոտություններ, արյան հիվանդություններով տառապող հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում, հանրապետության արյան ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերում և այլ հետազոտություններ:

- Ծխելու դեմ պայքարի և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագիր՝ նախատեսվում է 100.0 մլն դրամ:

Ծրագրի շրջանակներում կիրականացվի ծխախոտի օգտագործման համաճարակաբանական հսկողության համակարգի մշակում և ներդնում, ինչպես նաև հասարակության լայն խավերի համար ծխախոտի օգտագործման և առողջության վրա վերջինիս ազդեցության մասին տեղեկատվության պատրաստում, ներկայացում, ինչպես նաև հակածխախոտային ազգային ռազմավարության, ծխելու տարածվածության և դրանից բխող հետևանքների գնահատման մասին զեկույցի հրապարակում: ՀՀ պետական բյուջեից հատկացվում է ֆինանսական միջոցներ հասարակական կազմակերպություններին՝ որպես դրամաշնորհ տրամադրելու նպատակով, հակածխախոտային քարոզարշավների կազմակերպման համար:

«Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)»

«Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր»

Առողջապահական հարակից ծառայությունների և ծրագրերի շրջանակներում նախատեսվում է 14 ծրագրերի իրականացում: Այսպես՝

- «Դատաբժշկական և գենետիկ ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 330.9 մլն դրամ 2010 թվականի 315.0 մլն դրամի դիմաց:

Ծրագրի գծով ավելացումը պայմանավորված է անցկացվող փորձաքննությունների թվաքանակի 1750-ով (2010 թվականի 18420-ի դիմաց կիրականացվի 20170 հետազոտություն) ավելացմամբ՝ ելնելով 2009 թվականի փաստացի կատարողականից:

«Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունն, իր 11 մարզային բաժիններով սպասարկում է ՀՀ դատախազությանը, ՀՀ արդարադատության և ՀՀ պաշտպանության նախարարություններին, ինչպես նաև ՀՀ կառավարությանն առնթեր ազգային անվտանգության ծառայությանը և ՀՀ ոստիկանությանը, իրականացնում է դիակների, կենդանի անձանց, իրեղեն ապացույցների, դատաքիմիական, դատաբժշկաքրեագիտական, դատագենետիկ, հյուսվածքաբանական և դատակենսաբանական փորձաքննություններ, ինչպես նաև դիակների արտաշիրիմումներ:

- «Պաթանատոմիական ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 38.3 մլն դրամ՝ 2010 թվականի չափով:

Ծրագրի միջոցով կիրականացվի հիվանդությունների ճշտված ախտորոշում՝ սեկցիոն, վիրահատական և բիոպսիոն նյութերի հետազոտության միջոցով, մանկական դիակների դիահերձում, մահվան պատճառների ճշտում:

- «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ճանապարհաձախսի փոխհատուցում» ծրագիր՝ նախատեսվում է 40.4 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է 115 ուղեգրվող հիվանդի ճանապարհաձախսի փոխհատուցման գումար (նախատեսվում է նաև ուղեկցողի ճանապարհաձախսը):

- «Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիր՝ նախատեսվում է 395.5 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրի գծով նախատեսվում է յուրահատուկ ու բացառիկ բուժաբավորումներով և տեխնոլոգիաներով անվճար ախտորոշիչ հետազոտությունների իրականացում:

- «Դեղաքաղաքականությունից բխող փորձագիտական և մեթոդաբանական ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 20.0 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում կիրականացվի դեղագործական քաղաքականությանը վերաբերող աշխատանքներ, հիմնական և հսկվող դեղերի ցուցակների հրապարակում և այլն:

- «Հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 81.8 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում կիրականացվի հաշմանդամ երեխաների օրթեզների և կորսետների պատրաստումը:

- «Առողջապահության համակարգի զանգվածային տեղեկատվության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 80.0 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագիրը ընդգրկում է ամենամյա պետական նպատակային ծրագրերի շրջանակներում «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ կառավարության որոշման ու դրանից բխող ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված և ընդունված նորմատիվային ակտերի լուսաբանման աշխատանքներ, բնակչության առողջության պահպանման, բուժկանխարգելման, առողջապահության ոլորտի կառավարման հարցերի վերաբերյալ մեթոդական ձեռնարկների մշակում և տպագրում:

- «Մասնագիտական, խորհրդատվական և կազմակերպամեթոդական աջակցության ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 40.0 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է շաքարային դիաբետով հիվանդների դիսպանսեր հսկողության, կոնսուլտացիոն և լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների և հիվանդներին դեղերով ապահովման աշխատանքների իրականացում, հանրապետության ուռուցքաբանական ծառայություններին կազմակերպչամեթոդական օգնության ցուցաբերում, ակտիվ, ոչ ակտիվ և ախտորոշումը չճշտված տուբերկուլյոզով հիվանդների կոնսուլտացիոն բուժօգնության և ախտորոշիչ հետազոտությունների, ինչպես նաև դիսպանսեր հսկողության իրականացում, նարկոլոգիական, հոգեկան և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններով հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում, նախագորակոչային և գորակոչային տարիքի անձանց նյարդահոգեբանական փորձաքննության իրականացում, ինչպես նաև հաշվառման մեջ գտնվող հոգեկան հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում, պրոֆեսիոնալ հիվանդություններով տառապող հիվանդների կազմակերպչամեթոդական օգնության իրականացում, սպինալ հիվանդների դիսպանսեր հսկողության իրականացում:

- «Այլ բուժօգնության և սպասարկման ծառայություններ» ծրագիր՝ նախատեսվում է 15.0 մլն դրամ 2010 թվականի չափով:

- «Մարդասիրական օգնության կարգով ստացվող դեղերի և դեղագործական արտադրանքի ստացման, մաքսազերծման և բաշխման աշխատանքներ» ծրագիր՝ նախատեսվում է 40.0 մլն դրամ 2010 թվականի չափով:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է մարդասիրական օգնության կարգով ստացվող, հսկվող դեղերի և դեղագործական արտադրանքի փաստաթղթային և լաբորատորային դեղագրքային փորձաքննության ու եզրակացության իրականացում:

- Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագիր՝ նախատեսվում է 92.0 մլն դրամ 2010 թվականի 57.2 մլն դրամի դիմաց:

Ծրագրի գծով ծախսերի ավելացումը պայմանավորված է 10 հաստիքային միավորների (հոգեբան, Ֆթիզիատոր, համաճարակաբան, բուժքույր, համակարգչային մասնագետ, 2 օպերատոր ՏԲ տվյալների գծով, դեղաբան-բաժնի վարիչ, դեղագործ, լրագրող՝ հանրության հետ կապերի մասնագետ) ավելացմամբ՝ 21.1 մլն դրամով, աշխատողների ամսական աշխատավարձի միջինում 22.1 տոկոս ավելացմամբ՝ 12.4 մլն դրամով և այլ ծախսերի ավելացմամբ՝ 1.3 մլն դրամով:

Ծրագրի նպատակն է բնակչությանը պահպանել տուբերկուլոզի տարածման վտանգից՝ ապահովել հիվանդության վաղ հայտնաբերումը: Ծրագրի շրջանակներում «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակ» ՊՈԱԿ-ը իրականացնում է ծրագրի աշխատանքների կազմակերպման, այդ թվում՝ մոնիտորինգի, եռամսյակային վիճակագրական տվյալների հավաքագրում, հակատուբերկուլոզային բուժհաստատություններում տուբերկուլոզի ծառայության կազմակերպման և ԱՀԿ-ի կողմից մշակված ստանդարտ ընթացակարգերի կիրառման ֆունկցիաներ, ստուգայցերի հաճախակի կազմակերպում, հիվանդներին սոցիալ-հոգեբանական աջակցության ցուցաբերում և այլն:

- ՀՀ մարզային առողջապահական կազմակերպություններ բժիշկ-մասնագետների ժամանակավոր ուղեգրման ծախսերի փոխհատուցման ծրագիր՝ նախատեսվում է 50.2 մլն դրամ 2010 թվականի չափով:

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Առողջապահական համակարգի արդիականացման երկրորդ ծրագիր՝ նախատեսվում է 2238.6 մլն դրամ 2010 թվականի 3859.9 մլն դրամի դիմաց:

Ծրագիրը՝ առողջապահական համակարգի արդիականացման ծրագրի շարունակությունն է:

Ծրագրի շրջանակներում ընտանեկան բժշկության զարգացման ուղղությամբ 2011թ. շարունակվելու են ընտանեկան բժիշկների և բուժքույրերի մասնագիտացման գործընթացները 12-ամսյա և 6-ամսյա ուսումնական ծրագրերով: Նախատեսվում է հիմնականում քաղաքային վայրերի բժիշկների մասնագիտացում, քանի որ գյուղական վայրերի գրեթե բոլոր ընտանեկան բժիշկներն արդեն ընդգրկվել են մասնագիտացման ծրագրերում: 2011թ. նախատեսվում է իրականացնել 80 ընտանեկան բժիշկների և 200 ընտանեկան բուժքույրերի մասնագիտացում:

Հիվանդանոցային ցանցի օպտիմալացման և արդիականացման նպատակով 2011թ. շարունակվելու է աջակցությունը ընտրված հիվանդանոցային կազմակերպությունների

օպտիմալացման գործընթացներին, ներառյալ՝ ենթակառուցվածքների և ծառայությունների միավորում, կառավարման համակարգերի արդիականացում, հաշվետվական համակարգի ուժեղացում, որակի երաշխավորման համակարգերի ներդրում: 2011թ. ծրագրի շրջանակներում ֆինանսավորվելու են ՀՀ Շիրակի մարզի Գյումրիի նոր բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքները, ավարտվելու են նաև Գեղարքունիքի մարզի Գավառի բժշկական կենտրոնի վերանորոգման շինարարական աշխատանքները:

Կառավարման, առողջապահության քաղաքականության մշակման և արդյունավետության վերահսկման ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդման ուղղությամբ 2011թ. նախատեսվում է շարունակել Առողջապահության ազգային հաշիվների մշակման գործընթացը և մշակել 2009-2010թթ. առողջապահության ազգային հաշիվների զեկույցները:

Կշարունակվեն նաև Առողջապահական համակարգի գործունեության գնահատման զեկույցի մշակման աշխատանքները, ներառյալ՝ տեղեկատվության հավաքագրման, մշակման և վերլուծության աշխատանքներ:

- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագրի գծով նախատեսվում է 86.5 մլն դրամ՝ 2010 թվականի 70.3 մլն դրամի դիմաց:

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձրացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը, բարելավելով որակն ու մատչելիությունը, մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունն աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար:

2011 թվականին նախատեսվում է ավարտել շինարարական աշխատանքները 20-30 միկրոծրագրերում, որոնք ընտրվել են 2010 թվականի ընթացքում: Բոլոր շինարարական աշխատանքները պետք է ավարտվեն մինչև 2011 թվականի հունիսի 30-ը, սակայն վճարումները ավարտելու համար տրվում է ևս 4 ամիս:

Առողջապահության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2009 թվականի փաստացի, 2010 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 10 աղյուսակում:

2011 թվականի Առողջապահության պետական նպատակային ծրագիրը արտացոլված է սույն բացատրագրի N 2 հավելվածում:

Հ ա ն գ ա տ ի, մ շ ա կ ու յ թ ի և կ ր ո ն ի բ ն ա գ ա վ ա ռ ու մ (առանց պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները կազմում են **17267.3** մլն դրամ՝ ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված 15721.6 մլն դրամի դիմաց, կամ ծախսերը ՀՀ 2010 թվականի հաստատված պետական բյուջեի (այսուհետ՝ ՀՀ 2010 թվականի) նկատմամբ աճել են **1545.7** մլն դրամով (9.8 տոկոսով):

Ծախսերի աճը՝ **1545.7** մլն դրամով ՀՀ 2010 թվականի նկատմամբ պայմանավորված է՝

- աշխատանքի վարձատրության (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները) ծախսերի աճով՝ **752.5** մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճով՝ **68.5** մլն դրամով,
- էլեկտրաէներգիայի ծախսերի աճով՝ **8.9** մլն դրամով,
- գոյություն ունեցող ծրագրերի գծով ծախսերի աճով՝ **382.2** մլն դրամով,
- նոր ծրագրերի նախատեսմամբ՝ **719.8** մլն դրամ, որից. ներդրումների ծախսեր՝ 22.1 մլն դրամ,

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման, շինարարության և շենքերի, շինությունների ձեռքբերման ծախսերի աճով՝ **41.3** մլն դրամով, որից. 40.0 մլն դրամը կուղղվի ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի իրականացմանը:

Միաժամանակ ծախսերը նվազել են **427.5** մլն դրամով, որից.

- տարադրամի փոփոխության հետ կապված ծախսեր՝ **11.0** մլն դրամ,
- ավարտվող ծրագրերի գծով ծախսեր՝ **395.9** մլն դրամ,
- ներդրումների ծախսեր՝ **20.6** մլն դրամ:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված հատկացումները ներկայացված են ներքոհիշյալ խմբերում ընդգրկված ծառայությունների, մշակութային,

երիտասարդական, սպորտային ծրագրերի, գրականության հրատարակման ծախսերի տեսքով:

Հ ա ն գ ա տ ի և ս պ ո Ր տ ի գ ծ ո վ նախատեսված հատկացումները նպատակ ունեն ապահովել ազգաբնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումն ու երկարակեցության ապահովումը, բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը:

Հանգստի և սպորտի ծառայությունների համար 2011 թվականին նախատեսված են **1501.3** մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2010 թվականի՝ 1416.5 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են միջազգային տարբեր մակարդակի միջոցառումներին, ուսումնամարզական հավաքներին, հանրապետական առաջնություններին Հայաստանի հավաքական թիմերի մասնակցության ապահովման նպատակով ՀՀ մարզական ֆեդերացիաներին աջակցմանը, մարզական խաղերի և փառատոնների, Համահայկական խաղերի անցկացմանը, Աշխարհի, Եվրոպայի առաջնություններում հաղթողների և մրցանակակիրների պարգևատրման ծախսերի իրականացմանը, հաշմանդամային սպորտին, շախմատիստների պատրաստմանը և նավամոդելային սպորտին աջակցմանը:

Հանգստի և սպորտի ծառայությունների գծով ծախսերի աճը՝ **84.8** մլն դրամով, կամ **6.0** տոկոսով պայմանավորված է.

- աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ՝ 10 տոկոսով, կամ ծախսերի աճով՝ **4.8** մլն դրամով, ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները («Սպորտային միջոցառումների կազմակերպման կենտրոն»-ի գծով՝ 1.3 մլն դրամ, 14 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին կկազմի 79750 դրամ 2010 թվականին նախատեսված՝ 72500 դրամի դիմաց և «Զեսս» շախմատային ակադեմիայի գծով՝ 3.5 մլն դրամ, 48 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին կկազմի 51405 դրամ 2010 թվականին նախատեսված՝ 46732 դրամի դիմաց),

- «Ուսանողական մարզական միջոցառումներ» ծրագրի ծախսերի աճով՝ **18.7** մլն դրամով (միջոցառումը անց է կացվում երկու տարին մեկ ամգամ),

- «Հավաքական թիմերի ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին թոշակի հատկացում» ծրագրի ծախսերի աճով՝ **3.3** մլն դրամով (ԱՊՀ -ից Հայաստան վերադարձած սամբո մարզաձևի 5 չեմպիոններին թոշակի հատկացման ծախսեր),

- «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում ծրագրի ծախսերի աճով՝ **46.0** մլն դրամով (մասնակից ընտանիքների թվի ավելացում),

- նոր նախաձեռնությունների նախատեսմամբ՝ **155.6** մլն դրամ (Եվրոպայի երիտասարդության օլիմպիական փառատոններին մասնակցության ապահովում՝ 34.9 մլն դրամ, 2011 թվականին Երևանում կայանալիք խուլերի ըմբռամարտի Եվրոպայի առաջնության անցկացում՝ 13.7 մլն դրամ, Հայաստանի Հանրապետությունում ամառային առաջին պատանեկան սպարտակիադայի անցկացում՝ 20.0 մլն դրամ, Համահայկական խաղերի անցկացում՝ 80.0 մլն դրամ, Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում՝ 7.0 մլն դրամ):

Միաժամանակ ծախսերը նվազել են՝ **143.6** մլն դրամով, որից.

- անդամակցության ծախսերի նվազում՝ **3.2** մլն դրամով, պայմանավորված տարադրամի փոփոխությամբ (Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցում՝ 0.6 մլն դրամ, Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցում՝ 2.6 մլն դրամ),

- 2011 թվականին ավարտվող ծրագրերի ծախսեր՝ **140.4** մլն դրամ (Վանկուվերի ձմեռային օլիմպիական խաղերին մասնակցություն՝ 24.4 մլն դրամ, Մինգապուրում կայանալիք առաջին պատանեկան օլիմպիական խաղերին մասնակցություն՝ 50.3 մլն դրամ, Հայաստանի Հանրապետության տարածքում նետաձգության մեծահասակների Եվրոպայի «Գրան պրի» -ի 2-րդ փուլի կազմակերպում և անցկացում՝ 25.8 մլն դրամ, Սևծովյան երկրների մարզական խաղերին մասնակցություն՝ 39.9 մլն դրամ, վերջիններս 2010 թվականին չեն կայացել):

Մ շ ա կ ու թ ա յ ի ն ծ առ ա յ ու թ յ ու ն ն եր ի համար 2011 թվականին նախատեսված են **10654.5** մլն դրամ հատկացումներ (ՀՀ 2010 թվականի՝ 9437.0 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են գրադարանների, թանգարանների և ցուցասրահների, մշակույթի տների, ակումբների, կենտրոնների, այլ մշակութային կազմակերպությունների, թատերահամերգային կազմակերպությունների և կինեմատոգրաֆիայի գծով ծառայությունների, ինչպես նաև մշակութային միջոցառումների, Հայրենիք-սփյուռք գործակցության և «Հայկական տպագրության 500-ամյակ» ծրագրերի իրականացմանը, հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնմանը և պահպանմանը, մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը, շինարարությանը, շենքերի, շինությունների ձեռքբերմանը և ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի իրականացմանը:

Մշակութային ծառայությունների գծով ծախսերի աճը կազմում է **1217.5** մլն դրամ, կամ **12.9** տոկոս:

Գրադարանների գծով 2011 թվականի համար նախատեսված միջոցները՝ **1440.2** մլն դրամ (ՀՀ 2010 թվականի՝ 1434.7 մլն դրամի դիմաց) ուղղվելու են գրադարանային ծառայու-

թյունների (16 գրադարաններ, որից 10-ը մարզկենտրոններում), հրատարակությունների գրանցման, հաշվառման և մատենագիտական ծառայությունների (Հայաստանի ազգային գրապալատ), ներդրումների ծախսերի (յոթ գրադարաններում ազդանշանային համակարգերի տեղադրում) և գրադարանների հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը համապատասխանաբար՝ 1096.9 մլն, 58.5 մլն, 10.7 մլն և 274.1 մլն դրամ:

Գրադարանային ծառայությունների իրականացմանը ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել.

- գրադարանային հավաքածուների պահպանումը և սպասարկումը՝ 1013.4 մլն դրամ,
- գրադարանային հավաքածուների համալրումը՝ 61.8 մլն դրամ,
- գրադարանային միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպումը՝ 21.7 մլն դրամ,

Գրադարանների գծով ծախսերի նվազումը՝ 5.5 մլն դրամով, կամ 0.4 տոկոսով պայմանավորված է.

- գրադարանների հիմնանորոգման ծախսերի նվազմամբ՝ 124.3 մլն դրամով,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի ծառայությունների և ապրանքների ձեռքբերման ծախսերի նվազմամբ՝ 3.6 մլն դրամով:

Միաժամանակ, ծախսերը աճել են 133.4 մլն դրամով, որից.

- գրադարանների աշխատողների աշխատավարձերի բարձրացում՝ 15 տոկոսով (ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները), կամ ծախսերի աճ՝ 122.5 մլն դրամով,
- ջեռուցման ծախսերի աճ՝ 1.8 մլն դրամով,
- ջրմուղ-կոյուղուց օգտվելու ծախսերի աճ՝ 0.01 մլն դրամով,
- հակահրդեհային և ազդանշանային անվտանգության համակարգերի սպասարկման ծախսերի աճ՝ 2.7 մլն դրամով (2010 թվականին ներդրված համակարգերի սպասարկման ծախսեր՝ 1.0 մլն դրամ, 2011 թվականին ներդրված՝ 1.7 մլն դրամ),
- գրադարաններում հակահրդեհային և ազդանշանային անվտանգության համակարգերի ներդրման ծախսերի աճ՝ 6.4 մլն դրամով (նշված ծրագիրը ընդգրկում է 11 գրադարան, որից 4-ում համակարգերի ներդրման ծախսերը նախատեսվել են 2010 թվականին՝ 4.5 մլն դրամ, իսկ 7 գրադարաններում 2011 թվականին՝ 10.7 մլն դրամ):

Գրադարանների 1067 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին կկազմի 62868 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 54668 դրամի դիմաց:

Թանգարանների և ցուցասրահների գծով 2011 թվականի համար նախատեսված միջոցները՝ **1923.9** մլն դրամ (ՀՀ 2010 թվականի՝ 1500.1 մլն դրամի դիմաց) ուղղվելու են թանգարանային ծառայությունների իրականացմանը (36 թանգարաններ, որից 12-ը մարզ-կենտրոններում), համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը (Երևանի հինգ թանգարան) և թանգարանների հիմնանորոգմանը, համապատասխանաբար՝ 1450.9 մլն , 193.7 մլն և 279.3 մլն դրամ:

Թանգարանային ծառայությունների իրականացմանը ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել .

- թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանությունը՝ 1357.1 մլն դրամ,

- թանգարանային հավաքածուների հրապարակումը (ցուցադրությունների, ցուցահանդեսների, թանգարանային միջոցառումների կազմակերպում)՝ 93.8 մլն դրամ:

Թանգարանների և ցուցասրահների գծով ծախսերի աճը՝ **423.8** մլն դրամով, կամ **28.3** տոկոսով պայմանավորված է.

- թանգարանների աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ՝ 15 տոկոսով (ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները), կամ ծախսերի աճով՝ **151.7** մլն դրամով,

- ջեռուցման ծախսերի աճով՝ **20.9** մլն դրամով,

- ջրմուղ-կոյուղուց օգտվելու ծախսերի աճով՝ **0.03** մլն դրամով,

- թանգարանների հիմնանորոգման ծախսերի աճով՝ **279.3** մլն դրամով, որից. 40.0 մլն դրամը կուղղվի ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագրի իրականացմանը::

Միաժամանակ ՀՀ մշակույթի նախարարության թանգարանների գծով ծախսերը նվազել են **28.1** մլն դրամով, որից.

- «ՎԵԲ-կայքի ստեղծում» ծրագրի ծախսեր 1.1 մլն դրամ, որն ուղղվել է գրադարանների ջեռուցման ծախսերին,

- հակահրդեհային-ահագանգային անվտանգության և ջեռուցման համակարգերի ներդրման ծրագրի ավարտման հետ կապված ծախսեր՝ 27.0 մլն դրամ:

Թանգարանների և ցուցասրահների 1488 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին կկազմի 58572 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 50932 դրամի դիմաց:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով 2011 թվականի համար նախատեսված միջոցները՝ **604.0** մլն դրամ (ՀՀ 2010 թվականի՝ **343.0** մլն դրամի դիմաց) ուղղվելու են մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպմանը՝ 34.5 մլն դրամ (4 կազմակեր-

պություն) և մշակութային օբյեկտների հիմնանորոգմանը, շինարարությանը, շենքերի, շինությունների ձեռքբերմանը՝ **569.5** մլն դրամ:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների գծով ծախսերի աճը՝ **261.0** մլն դրամով, կամ **76.1** տոկոսով պայմանավորված է.

- մշակույթի տների աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ՝ 15 տոկոսով (ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները), կամ ծախսերի աճով՝ **3.2** մլն դրամով,

- Վայոց ձորի Եղեգնաձորի մշակույթի տան ջեռուցման ծախսերի նախատեսմամբ՝ **2.0** մլն դրամ (նշված մշակույթի տունը վերանորոգվել է «Տելեկոմ» ՓԲԸ կողմից),

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման, շինարարության և շենքերի, շինությունների ձեռքբերման ծախսերի աճով՝ **255.8** մլն դրամով:

Մշակույթի տների, ակումբների, կենտրոնների 31 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին կկազմի 57023 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 49585 դրամի դիմաց:

Այլ մշակութային կազմակերպությունների գծով 2011 թվականի համար նախատեսված միջոցները՝ **742.3** մլն դրամ (ՀՀ 2010 թվականի՝ 697.1 մլն դրամի դիմաց) ուղղվելու են արխիվային, տեղեկատվական-վերլուծական և հանրային իրազեկման, մշակութային արժեքների փորձաքննության ծառայությունների, Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացմանը, ժողովրդական ստեղծագործության ավանդույթների և ժողարվեստի պահպանմանը՝ 525.6 մլն դրամ, համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը՝ 194.6 մլն դրամ (Երևանի կենդանաբանական այգի) և «Հայրենիք - սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ում ներդրումների իրականացմանը՝ 22.1 մլն դրամ:

Այլ մշակութային կազմակերպությունների գծով ծախսերի աճը՝ **45.2** մլն դրամով, կամ **6.5** տոկոսով պայմանավորված է.

- այլ մշակութային կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ՝ 15 տոկոսով, կամ ծախսերի աճով՝ **54.0** մլն դրամով (ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները),

- ջեռուցման ծախսերի աճով՝ **0.2** մլն դրամով,

- «Արխիվային ծառայություններ» ծրագրի ծախսերի աճով՝ **8.9** մլն դրամով («Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ում 2010 թվականին ներդրված 3-րդ արխիվապահոցի օդակարգավորման և օդաորակման համակարգի շահագործման ծախսերի նախատեսում),

- նոր ծրագրերի նախատեսմամբ՝ **54.2** մլն դրամ («Հայրենիք-սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում»՝ 32.1 մլն դրամ և Ներդրումներ «Հայրենիք - սփյուռք կենտրոն» ՊՈԱԿ-ում»՝ 22.1 մլն դրամ):

Միաժամանակ մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսերը նվազել են՝ **72.1** մլն դրամով:

Այլ մշակութային կազմակերպությունների 519 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին կկազմի 58758 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 51094 դրամի դիմաց:

Արվեստի գծով 2011 թվականի համար նախատեսված միջոցները՝ **4958.4** մլն դրամ (ՀՀ 2010 թվականի՝ 4503.2 մլն դրամի դիմաց) կուղղվեն թատերական ներկայացումների, երաժշտարվեստի և պարարվեստի համերգների իրականացմանը (36 կազմակերպություն), օտարերկրյա պետություններում հայ մշակույթի զարգացմանն աջակցմանը, մշակութային միջոցառումների իրականացմանը, «ժողովրդական» պատվավոր կոչումների արժանացած անձանց պատվովճարի վճարմանը, «Հայկական տպագրության 500-ամյակին նվիրված միջոցառումների իրականացում» ծրագրին, համայնքային բյուջեներին սուբվենցիաների տրամադրմանը (Երևանի երեք թատրոններ) և մշակութային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների իրականացմանը, համապատասխանաբար՝ 2973.9 մլն, 44.1 մլն, 1089.7 մլն, 57.4 մլն, 500.0 մլն, 236.1 մլն և 57.2 մլն դրամ:

Արվեստի գծով ծախսերի աճը՝ **455.2** մլն դրամով, կամ **10.1** տոկոսով պայմանավորված է.

- Արվեստի բնագավառի աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ 15 տոկոսով (ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները) և Ալ. Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստա-ստեղծագործական և արտիստական անձնակազմի խաղացանկային ներկայացումներում ընդգրկված 351 առաջատար արտիստների և ստեղծագործողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 27.2 տոկոսով, կամ ծախսերի աճով, համապատասխանաբար՝ **286.6** մլն և **89.4** մլն դրամով,

- ջեռուցման ծախսերի աճով՝ **40.7** մլն դրամով,

- մարզային հյուրախաղերի անցկացման ծախսերի աճով՝ **20.0** մլն դրամով,

- ՀՀ սփյուռքի նախարարության մշակութային միջոցառումների ծախսերի աճով՝ **77.5** մլն դրամով, որից. նոր միջոցառումների նախատեսում՝ 88.7 մլն դրամ (Աջակցություն Վրաստանի հայ համայնքին՝ 19.7 մլն դրամ, Իրաքահայերի ինտեգրման ծրագիր՝ 3.0 մլն դրամ, Հայկական սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման և համախմբման ծրագիր՝ 10.0 մլն դրամ, ՀՀ անկախության 20-

ամյակին նվիրված միջոցառումների կազմակերպում սփյուռքի հայկական համայնքներում՝ 50.0 մլն դրամ և Սփյուռքի պատմության էլեկտրոնային թանգարանի ստեղծում՝ 6.0 մլն դրամ) և միջոցառումների ծախսերի նվազում՝ 11.2 մլն դրամով (Ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների իրականացում, Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների հավաքների կազմակերպման միջոցառումների ծախսերը նվազել են, համապատասխանաբար՝ 1.2 և 10.0 մլն դրամով և ուղղվել գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման ծախսերի իրականացմանը),

- նոր ծրագրի նախատեսմամբ՝ **500.0** մլն դրամ («Հայկական տպագրության 500-ամյակին նվիրված միջոցառումների իրականացում», որից. «Երևանը՝ 2012 թվականին գրքի համաշխարհային մայրաքաղաք» ծրագրի նախապատրաստական աշխատանքների իրականացում, գրական թարգմանությունների համատեղ ծրագրերի իրականացում, միջազգային գրքի տոնավաճառներին մասնակցություն, թարգմանիչների և հրատարակիչների V-րդ միջազգային գիտաժողովի կազմակերպում, Եվրոպայի հայկական գրատպության կենտրոններում ծրագրերի իրականացում, «Հարանց անապատ» գիտահանրամատչելի խաղարկային ֆիլմի ստեղծում):

Միաժամանակ, ծախսերը նվազել են **559.0** մլն դրամով, որից.

- մշակութային միջոցառումների գծով ավարտվող ծրագրերի ծախսեր՝ **255.6** մլն դրամ («Մեկ ազգ, մեկ մշակույթ» «փառատոնի անցկացում»՝ 138.0 մլն դրամ, Դելփյան խաղերի անցկացում Հայաստանում՝ 117.6 մլն դրամ),

- «Աջակցություն հայ մշակույթի միջազգային կենտրոններին» ծրագրով նախատեսված ծախսեր՝ **4.4** մլն դրամ, կապված տարադրամի փոփոխության հետ,

- մշակութային օբյեկտների հիմնանորոգման ծախսեր՝ **299.0** մլն դրամ:

Արվեստի բնագավառի 3559 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 53229 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 45625 դրամի դիմաց, այդ թվում Ալ. Սպենդիարյանի անվ.օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստա-ստեղծագործական և արտիստական անձնակազմի խաղացանկային ներկայացումներում ընդգրկված 351 առաջատար արտիստների և ստեղծագործողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 86484 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 67978 դրամի դիմաց:

Կինեմատոգրաֆիային ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ հայրենական կինոարտադրության, մա-

նուկների և պատանիների համար հայկական կինոնկարների արտադրության և հասարակական-քաղաքական իրադարձությունների, կինոտարեգրության վավերագրման խթանումը:

Կինեմատոգրաֆիայի գծով 2011 թվականի համար նախատեսված հատկացումները՝ **630.4** մլն դրամ (ՀՀ 2010 թվականի՝ 612.7 մլն դրամի դիմաց) կուղղվեն կինոարտադրության կազմակերպմանը՝ 455.0 մլն դրամ, կինո-ֆոտո-ֆոնո հավաքածուի պահպանմանն ու թվայնացմանը՝ 7.2 մլն դրամ և ազգային և փաստավավերագրական կինոծրագրերի իրականացմանը՝ 168.2 մլն դրամ:

Կինեմատոգրաֆիայի գծով ծախսերի աճը՝ **17.7** մլն դրամով, կամ 2.9 տոկոսով պայմանավորված է աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 15 տոկոսով (ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները) :

Կինեմատոգրաֆիայի բնագավառի 108 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին կկազմի 93885 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 81640 դրամի դիմաց:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով 2011 թվականի համար նախատեսված հատկացումները՝ **355.2** մլն դրամ (ՀՀ 2010 թվականի՝ 346.2 մլն դրամի դիմաց) կուղղվեն ՀՀ տարածքում պատմության և մշակույթի հուշարձանների պետական հաշվառմանը, պահպանական գոտիների նախագծերի, հուշարձանների պետական կադաստրի կազմմանը, հուշարձանների տեխնիկական վիճակի մոնիտորինգի իրականացմանը՝ 76.2 մլն դրամ, հուշարձանների վերականգնման աշխատանքների իրականացմանը՝ 215.0 մլն դրամ, Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը՝ 4.0 մլն դրամ և հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը՝ 60.0 մլն դրամ:

Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնման և պահպանման գծով ծախսերի աճը՝ **9.0** մլն դրամով, կամ **2.6** տոկոսով պայմանավորված է.

- պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 15 տոկոսով (ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները), կամ ծախսերի աճով՝ **6.0** մլն դրամով,

- պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի համար ջեռուցման ծախսերի նախատեսմամբ՝ **1.3** մլն դրամ:

- հուշարձանների վերանորոգման և վերականգնման ծախսերի աճով՝ **1.7** մլն դրամով:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի 57 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը 2011 թվականին կկազմի 59719 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 51930 դրամի դիմաց:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների իրականացմանը 2011 թվականին ուղղված հատկացումները՝ **4556.1** մլն դրամի չափով (ՀՀ 2010 թվականի՝ 4357.0 մլն դրամի դիմաց), նպատակ ունեն ապահովել քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության, մարզական, զվարճալի և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվություն ստանալու ՀՀ քաղաքացիների իրավունքը, գրահրատարակչական արտադրանքի տեսքով ազգային և համաշխարհային գրական, գիտական, մշակութային արժեքների մատչելիությունը:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների գծով ծախսերի աճը կազմում է **199.1** մլն դրամ, կամ **4.6** տոկոս:

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայությունների հատկացումները կուղղվեն հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, հրատարակչությունների և խմբագրությունների և տեղեկատվության ձեռքբերման, հավաքագրման և տարածման աշխատանքների իրականացմանը:

Հեռուստառադիոհաղորդումների գծով 2011 թվականին նախատեսված են **3413.9** մլն դրամ հատկացումներ (ՀՀ 2010 թվականի՝ 3390.9 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են հանրային հեռուստառադիոհաղորդումների պատրաստմանն ու հեռարձակմանը, հասարակական կարծիքի ուսումնասիրմանը, ԱՊՀ երկրներում հեռուստառադիոհաղորդումների հեռարձակմանը, տնտեսական վերլուծությունների իրականացմանը և գնումների գործընթացի հրապարակայնության ապահովմանը:

Հեռուստառադիոհաղորդումների գծով ծախսերի աճը՝ **23.0** մլն դրամով, կամ **0.7** տոկոսով պայմանավորված է.

- «Շիրակի» հանրային հեռուստառադիոյի աշխատողների աշխատավարձի բարձրացմամբ՝ 10 տոկոսով, կամ ծախսերի աճով՝ **1.6** մլն դրամ, ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները (28 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 46857 դրամ 2010 թվականին նախատեսված 42497 դրամի դիմաց),

- ջեռուցման ծախսերի աճով՝ **1.6** մլն դրամով (հանրային հեռուստառընկերության գծով՝ 0.8 մլն դրամով, հանրային ռադիոընկերության գծով՝ 0.7 մլն դրամով),

- «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության մասնաբաժնի ծախսերի ավելացմամբ 10 տոկոսով՝ **8.2** մլն դրամով,

- «Հայաստան-սփյուռք գործակցության թեմայով հեռուստահաղորդումների և տեսա-հոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» ծրագրի ծախսերի աճով՝ **15.0** մլն դրամով («Սփյուռքի ժամ» հեռուստահաղորդաշարի ծախսեր),

Միաժամանակ ծախսերը նվազել են **3.4** մլն դրամով, պայմանավորված հանրային հեռուստահաղորդումների հեռարձակման ծախսերի նվազմամբ :

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով 2011 թվականին նախատեսված են **992.6** մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2010 թվականի՝ 821.7 մլն դրամի դիմաց), որոնք ուղղվելու են գրականության, թերթերի, ամսագրերի, մենագրությունների, պետական և ոչ պետական մամուլի հրատարակման և թարգմանչական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև սփյուռքի համայնքներին հանրակրթական հաստատություններին ուսումնական և հանրամատչելի գրականության առաքման աշխատանքների կազմակերպմանը:

Հրատարակչությունների, խմբագրությունների գծով ծախսերի աճը՝ **170.9** մլն դրամով, կամ **20.8** տոկոսով պայմանավորված է.

- հրատարակչությունների, խմբագրությունների աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ՝ 10 տոկոսով, կամ ծախսերի աճով՝ **5.4** մլն դրամով, ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները, որից.

գիտական ամսագրերի խմբագրությունների գծով՝ **3.2** մլն դրամ (43 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 51783 դրամ՝ 2010թ. նախատեսված 47076 դրամի դիմաց),

մանկական, մանկապատանեկան թերթերի, ամսագրերի խմբագրությունների գծով՝ **2.2** մլն դրամ (43 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 40873 դրամ՝ 2010 թվականին նախատեսված 37157 դրամի դիմաց),

- «Հրատարակչական, տեղեկատվական և տպագրական ծառայություններ» ծրագրի ծախսերի աճով՝ **140.7** մլն դրամով (մուտքի վիզաների պիտակների տպագրության ծախսեր՝ 40.0 մլն դրամ՝ 160.0 հազ. օրինակ պիտակների տպագրության համար և պաշտոնական տեղեկագրերի հրատարակման ծախսեր՝ 100.7 մլն դրամ, կապված տպագրական մամուլի փաստացի ծավալների հետ),

- Թարգմանչական ծառայությունների ծախսերի աճով՝ **18.0** մլն դրամով (թարգմանվող նյութերի էջերի ծավալի ավելացում՝ 10000 էջ՝ նախատեսված 8500 էջի դիմաց),

- նոր նախաձեռնության նախատեսմամբ՝ **10.0** մլն դրամ (Արևմտահայերենի հիմնական դասագրքի ստեղծում):

Միաժամանակ, «Մանկական, մանկապատանեկան թերթերի և ամսագրերի հրատարակում» ծրագրի ծախսերը նվազել են՝ **3.2** մլն դրամով (2011 թվականին սուբսիդավորվող ամսագրերի ցանկից հանվել են «Նախաշավիղ» և «Հայոց լեզու և գրականություն» ամսագրերը՝ համաձայն հայտի):

Տեղեկատվության ձեռքբերման գծով 2011 թվականին նախատեսված են **149.6** մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2010 թվականի՝ 144.4 մլն դրամի դիմաց), որոնք կուղղվեն տեղեկատվության պահպանմանը, արխիվացմանը, պետական կառավարման մարմիններին, զանգվածային լրատվական միջոցներին և օտարերկրյա դեսպանատներին պաշտոնական ինֆորմացիայի հաղորդման նպատակով տեղեկատվության ձեռքբերմանը և հանրային իրազեկման ապահովմանը, համապատասխանաբար՝ 73.9 մլն և 75.7 մլն դրամ:

Տեղեկատվության ձեռքբերման գծով ծախսերի աճը՝ **5.2** մլն դրամով, կամ **3.6** տոկոսով պայմանավորված է.

- «Արմենպրես» ՓԲԸ-ի աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ՝ 10 տոկոսով, ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարների ծախսերը (79 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 53886 դրամ 2010 թվականին նախատեսված 48987 դրամի դիմաց):

Կրոնական և հասարակական այլ ծառայություններ խմբին 2011 թվականին ուղղված հատկացումները՝ **555.3** մլն դրամի չափով (ՀՀ 2010 թվականի՝ 511.0 մլն դրամի դիմաց), նպատակ ունեն ապահովել երիտասարդական ծրագրերի իրականացումը և քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին աջակցության տրամադրումը:

Երիտասարդական ծրագրերի իրականացման համար 2011 թվականին նախատեսված են **375.7** մլն դրամ հատկացումներ՝ (ՀՀ 2010 թվականի՝ 331.4 մլն դրամի դիմաց), որոնք կուղղվեն հասարակական կյանքին երիտասարդների ակտիվ մասնակցության խթանմանը, երիտասարդների զբաղվածության հնարավորությունների մեծացմանը, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խթանմանը, պետական երիտասարդական քաղաքականության իրականացման համագործակցության մակարդակի բարձրացմանը, հայրենասիրական դաստիարակությանը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի գործունեության, Հայաստանում ինտելեկտուալ խաղերի զարգացմանն աջակցմանը և Հայաստանի և Միլյուրոքի երիտասարդության միջև կապերի ամրապնդմանը :

Երիտասարդական ծրագրերի գծով ծախսերի աճը՝ **44.3** մլն դրամով, կամ **13.4** տոկոսով պայմանավորված է.

- Երիտասարդական կենտրոնների աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ՝ 10 տոկոսով, կամ ծախսերի աճով՝ **4.3** մլն դրամով, ներառյալ պարտադիր սոց. ապահովության վճարները (47 աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 66084 դրամ նախատեսված 60077 դրամի դիմաց),

- «Արի տուն» ծրագրի շրջանակներում սփուռքի երիտասարդության պարբերական այցելություններ Հայաստան» ծրագրի գծով ծախսերի աճով՝ 40.0 մլն դրամով:

Քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին, ազգային փոքրամասնություններին 2011 թվականին աջակցություն տրամադրելու նպատակով հատկացումները՝ 179.6 մլն դրամ, ինչպես և ՀՀ 2010 թվականին կուղղվեն ազգային փոքրամասնություններին, հասարակական կազմակերպություններին պետական աջակցության և «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն, ՀՀ Ազգային Ժողովի ընտրություններում 3 և ավելի տոկոս ձայն հավաքած կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին նյութական աջակցության տրամադրմանը, համապատասխանաբար՝ 10.0 մլն, 100.0 մլն և 69.6 մլն դրամ:

Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի ծախսերի համեմատությունը՝ 2009 թվականի փաստացի և 2010 թվականի բյուջետային տարվա հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված է սույն բացատրագրի N 11 աղյուսակում:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի 2011 թվականի տարեկան ծրագիրը արտացոլված է սույն բացատրագրի N 3 հավելվածում:

Կրթության ոլորտը համարվում է երկրի զարգացման առաջնային գերակայություններից մեկը և ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված կրթության բնագավառի ծախսերը (առանց պետական կառավարման ապարատի պահպանման և գիտության գծով ծախսերի) կազմում են 107879.3 մլն դրամ: Ծախսերի աճը ՀՀ 2010 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (այսուհետ՝ 2010 թվականի) կազմում է 8584.7 մլն դրամ կամ 8.6 տոկոս:

Կրթության բնագավառում հիմնական գերակայություն է համարվում հանրակրթության ոլորտը, որի գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 68258,9 մլն դրամ: 2010 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 2741,4 մլն դրամով կամ 4,2 տոկոսով:

Նախագծով 2011 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը 2010 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է.

ա) աշխատողների աշխատավարձերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ծախսերի ավելացմամբ՝ 1973,6 մլն դրամով, պայմանավորված 12-ամյա ուսուցման անցնելու հետ կապված երեխաների թվաքանակի ավելացմամբ, ինչպես նաև 2011 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 32.5 հազար դրամի չափով նախատեսմամբ: Ընդ որում, նշված ծախսերում հաշվի է առնվել ավագ դպրոցների սովորողների թվաքանակի 20.4 հազարով ավելացման հետ կապված ծախսերի աճը՝ 448.4

մին դրամի չափով (նախագծի հաշվարկներում ավագ դպրոցների երեխաների թվաքանակը նախատեսվել է 31.5 հազար՝ 2010 թվականի 11.1 հազարի դիմաց, իսկ ավագ դպրոցների թիվը կազմել է 91՝ 2010 թվականի 48-ի դիմաց):

բ) ապրանքների գնման և ծառայությունների վճարման ծախսերն աճել են 827.6 մլն դրամով, այդ թվում՝ կոմունալ ծառայությունների վճարների գծով ծախսերի աճը կազմել է 479.7 մլն դրամ՝ կապված երեխաների թվաքանակի ավելացման և գազի ու ջրի սակագների փոփոխությունները հաշվի առնելու հետ:

Ավագ դպրոցների համար լաբորատոր սարքավորումների ձեռքբերման գծով ծախսերը նվազել են 59.8 մլն դրամով (հաշվարկներում 99.8 մլն դրամ է նախատեսվել 30 ավագ դպրոցների ֆիզիկայի, քիմիայի և կենսաբանության լաբորատորիաների համար սարքավորումների ձեռքբերման գծով):

Հանրակրթության գծով ծախսերի հաշվարկներում աշակերտ/ ուսուցչական դրույք և աշակերտ/ ոչ ուսուցչական դրույք հարաբերակցությունները նախատեսվել են, համապատասխանաբար՝ 14.47 և 24.16: Աշխատավարձի գծով ծախսերի հաշվարկներում հիմք են ընդունվել ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով աշխատողների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը: Միաժամանակ, հաշվի է առնվել ինչպես ավագ դպրոցներում մանկավարժական անձնակազմի աշխատավարձի 20% հավելումը, այնպես էլ 2011 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 32.5 հազար դրամի չափով նախատեսվող սահմանումը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով հանրակրթության գծով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 51868.0 մլն դրամը հնարավորություն կտա մանկավարժական անձնակազմի (26714.8 դրույք՝ ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 118.0 հազ. դրամի՝ 2010 թվականի 116.6 հազ. դրամի դիմաց (աճը կապված է ավագ դպրոցներում մանկավարժական անձնակազմի աշխատավարձի 20% հավելումը հաշվարկելու հետ), 3963.5 վարչական դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 176.2 հազ. դրամի, հաշվապահների 1323.5 դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 87.9 հազ. դրամի, 10717.5 ուսումնասօժանդակ ու տնտեսական դրույքներինը՝ 33.1 հազ. դրամի՝ 2010 թվականի 30.5 հազ. դրամի դիմաց:

Հանրապետության բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը կիրականացվի ըստ աշակերտների թվի՝ հետևյալ բանաձևով.

$$Ըգ = Մթ \times Սգ + Պգ,$$

որտեղ^a

Ըգ-ն մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ընդամենը գումարն է,

Մթ-ն՝ հաստատության սովորողների թիվը,

Սգ-ն՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը, որը 2011 թվականին կազմում է 105775 դրամ,

Պգ-ն՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը, որը 2011 թվականին կազմում է 17160.0 հազ. դրամ:

Հաշվարկը կատարելիս՝ կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.2 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.02 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով, ավագ դպրոցների համար՝ 1.15 գործակցով:

Ընդ որում, բանաձևի կիրառման արդյունքում, հանրակրթական հաստատություններին հատկացվող բյուջետային ծախսերի համաչափությունն ապահովելու նպատակով, թույլատրվում է պետական կառավարման մարմիններին, ՀՀ կառավարության սահմանած կարգով, սահմանափակ գումարի չափով իրենց ենթակայության հաստատությունների ծախսերում կատարել վերաբաշխումներ:

Նախագծով միջոցներ են նախատեսվել նաև նախադպրոցական կրթության գծով, որի ծախսերը հաշվարկվել են՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից: Նախադպրոցական կրթության գծով միջոցները նախատեսվել են ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում նախադպրոցական ծրագրերում ընդգրկված՝ համապատասխանաբար 125 և 375 երեխաների հաշվով, ինչպես նաև 2011 թվականի սեպտեմբերից նշված ծրագրերում ընդգրկվելիք 1250 երեխաների հաշվով, որից 620-ը ՀՀ Արագածոտնի մարզում, 630-ը՝ ՀՀ Արարատի մարզում:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ նախադպրոցական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «01. Նախադպրոցական կրթություն» դասում 97.0 մլն դրամի չափով, իսկ հանրակրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում 24228.2 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01.

Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 28993.9 և 14939.8 մլն դրամի չափով:

Հանրակրթության ոլորտում շարունակում է գերակայություն մնալ նաև հատուկ կրթության համակարգը: Պետական ռազմավարությունն այս բնագավառում ուղղված է մի կողմից հատուկ հաստատություններում երեխաների կրթության և խնամքի որակի բարելավմանը, մյուս կողմից՝ այլընտրանքային ծառայությունների ձևավորմանը, ինչը հնարավորություն կտա աստիճանաբար բեռնաթափել հատուկ դպրոցները: Այս ոլորտում կարևորվում է նաև ներառական դպրոցների ցանցի զարգացումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպումը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով ներառական կրթության գծով նախատեսվել է 842.3 մլն դրամ՝ հանրապետության 60 հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 1543 երեխաների ուսուցման կազմակերպման գծով:

Ներառական կրթության հաշվարկներում երեխաների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվը բարձրացվել է 15%-ով, որը երթևեկ սովորողների համար կկազմի 781 դրամ՝ 2010 թվականի 679 դրամի դիմաց:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ ներառական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 361.7 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 442.6 և 38.0 մլն դրամի չափով:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով հատուկ կրթության գծով նախատեսվել է 4650.8 մլն դրամ: ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 433.1 մլն դրամով կամ 10.3 տոկոսով:

Հաշվարկներում հաշվի են առնվել 2011 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 32.5 հազար դրամի չափով նախատեսվող սահմանումը, ինչպես նաև սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվի 15%-ով բարձրացումը, որը գիշերող սովորողների համար կկազմի 1297 դրամ, երթևեկների համար՝ 781 դրամ՝ 2010 թվականի համապատասխանաբար 1128 և 679 դրամի դիմաց:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով հատուկ կրթության գծով նախատեսված ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 2610.9 մլն դրամը հնարավորություն կտա 1340.4 մանկավարժական դրույքների (ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 114.7 հազ. դրամի, 111.5 վարչական դրույքներինը՝ 170.0 հազ. դրամի, հաշվապահների 32 դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 87.6 հազ. դրամի, իսկ 1194.2 ուսումնաօժանդակ և տնտեսական դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 35.2 հազ. դրամի:

Հաշվարկներում հաշվի են առնվել նաև գազի ու ջրի սակագների փոփոխությունները:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հատուկ կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 1013.6 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 2311.0 և 1326.2 մլն դրամի չափով:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով «Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն» դասի գծով նախատեսվել է 1900.6 մլն դրամ, որը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ նվազել է 9.8 մլն դրամով կամ 0.5 տոկոսով: Նվազումը հիմնականում պայմանավորված է սովորողների թվաքանակի պակասեցմամբ:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունների ծախսերում աշխատավարձի գծով հաշվարկված 1287.5 մլն դրամը հնարավորություն կտա 699.4 մանկավարժական դրույքների (ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, հասցնել 105.2 հազ. դրամի, 70.5 վարչական դրույքներինը՝ 157.8 հազ. դրամի, հաշվապահների 29 դրույքներինը՝ 79.8 հազ. դրամի, 606.1 ուսումնաօժանդակ ու տնտեսական դրույքներինը՝ 33.5 հազ. դրամի:

«Միջին մասնագիտական կրթություն» դասի գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 3165.1 մլն դրամ: Աճը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 194.3 մլն դրամ կամ 6.5 տոկոս:

Նախագծի հաշվարկներում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձերը հաշվարկվել են 10% աճով, բացառությամբ հանրակրթական ծրագրեր իրականացնողների, իսկ ուսումնասօժանդակ անձնակազմի գծով աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով 2011 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 32.5 հազ.դրամի չափով սահմանումը: Հաշվարկներում հաշվի է առնվել նաև սովորողների սննդի կազմակերպման համար նախատեսված հաշվարկային նորմատիվի 15%-ով բարձրացումը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կազմում է շուրջ 65.2 հազ. դրամ, վարչական անձնակազմինը՝ 57.6 հազ. դրամ, ուսումնասօժանդակ ու տնտեսական անձնակազմինը՝ 34.2 հազ. դրամ:

Հաշվարկներում հաշվի են առնվել նաև գազի ու ջրի սակագների փոփոխությունները:

Բարձրագույն կրթության գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 7716.4 մլն դրամ, որը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի համապատասխան ծախսերի նկատմամբ աճել է 193.8 մլն դրամով կամ 2.6 տոկոսով:

Հաշվարկներում հաշվի է առնվել 2011 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 32.5 հազ.դրամի չափով սահմանումը: Միաժամանակ, բուհերի վճարովի համակարգում սովորող, արտոնություն ունեցող 693 ուսանողների ուսման փոխհատուցման գծով լրացուցիչ նախատեսվել է 150.8 մլն դրամ:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով բարձրագույն կրթական հաստատությունների դասախոսական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը հասցվել է 38.5 հազ. դրամի, վարչական անձնակազմինը՝ 35.5 հազ. դրամի, ուսումնասօժանդակ ու տնտեսական անձնակազմինը՝ 32.5 հազ. դրամի:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով «Արտադպրոցական դաստիարակություն» դասի գծով նախատեսվել է 2484.0 մլն դրամ, որը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 170.5 մլն դրամով կամ 7.4 տոկոսով:

Նախագծի հաշվարկներում արտադպրոցական հաստատությունների մանկավարժական և վարչական անձնակազմի միջին ամսական աշխատավարձերը հաշվարկվել են 10% աճով, իսկ ուսումնասօժանդակ անձնակազմի գծով աշխատավարձերի բարձրացումը նախատեսվել է՝ հաշվի առնելով 2011 թվականին հանրապետությունում նվազագույն աշխա-

տավարձի 32.5 հազ. դրամի չափով սահմանումը: Միաժամանակ, միջոցներ են նախատեսվել ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնի նոր հիմնվելիք 4 մասնաճյուղերի 20 ուսուցիչների աշխատավարձի գծով:

Նախագծով արտադպրոցական դաստիարակությանն աջակցության գծով նախատեսվել է 10.0 մլն դրամ (վերջինս ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված չի եղել): Հաշվարկներում հաշվի են առնվել նաև գազի ու ջրի սակագների փոփոխությունները:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով արտադպրոցական դաստիարակության հաստատությունների մանկավարժական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը հասցվել է 50.9 հազ. դրամի, վարչական անձնակազմինը՝ 62.4 հազ. դրամի, ուսումնաօժանդակ ու տնտեսական անձնակազմինը՝ 39.0 հազ. դրամի:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով «Լրացուցիչ կրթություն» դասի գծով նախատեսվել է 1154.2 մլն դրամ, որը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 201.8 մլն դրամով կամ 21.2 տոկոսով, որը հիմնականում պայմանավորված է 2011 թվականին հանրապետությունում նվազագույն աշխատավարձի 32.5 հազ. դրամի չափով սահմանման, ինչպես նաև վերապատրաստվողների թվաքանակի ավելացման հետ կապված լրացուցիչ ծախսերի նախատեսմամբ: Մասնավորապես՝

- ՀՀ արդարադատության նախարարությանը նախատեսված ծախսերը, քրեակատարողական ծառայողների վերապատրաստման և հատուկ ուսուցման հետ կապված, ավելացվել են 134.8 մլն դրամով,

- «Դատախազության դպրոց» ՊՈԱԿ-ի գծով ծախսերն աճել են 41.1 մլն դրամով, պայմանավորված էլեկտրոնային ուսուցման և թրաֆիքինգի գծով, համապատասխանաբար 18.0 և 13.3 մլն դրամի չափով ծախսերի նախատեսմամբ: Այլ ծախսերի գծով աճը կազմել է 9.8 մլն դրամ՝ պայմանավորված դատախազության աշխատակազմի վերապատրաստման ենթակա պետական ծառայողների թվաքանակի ավելացմամբ:

- ՀՀ արտաքին գործերի նախարարությանը Դիվանագիտական դպրոցի գծով նախատեսվել է 24.4 մլն դրամ (վերջինս ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված չի եղել):

- «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի գծով ծախսերն աճել են 9.8 մլն դրամով՝ պայմանավորված ինչպես նվազագույն աշխատավարձի աճով, այնպես էլ բուհական կրթության 60 տեղերի հաշվով միջոցների նախատեսմամբ:

Միաժամանակ, որոշ ծրագրերի գծով ծախսերը նվազել են, մասնավորապես.

- «Դատական դպրոց» ՊՈԱԿ-ի գծով նվազումը կազմել է 13.2 մլն դրամ, որից 11,7 մլն դրամն ունկնդիրների կրթաթոշակի գծով է:

- Վերապատրաստումների գծով 3.0 մլն դրամի չափով ծախս չի նախատեսվել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը:

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման համաձայն՝ հանրակրթական ծրագրերի իրականացմանն օժանդակության շրջանակներում իրականացվող մի շարք ծրագրեր, ինչպես նաև մասնագիտական կրթության գծով որոշ ծրագրեր նախատեսվել են «Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ» դասում:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել ներքոհիշյալ ծրագրերի գծով, այսպես.

- տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակում՝ 764.6 մլն դրամ («Կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետությունը տարրական ընդհանուր կրթական ծրագրերով սովորող բոլոր երեխաներին անվճար ապահովում է դասագրքերով (բացառությամբ օտար լեզվի և երաժշտության դասագրքերի), իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերով): Նշված գումարից 270.2 մլն դրամը ավագ դպրոցների 4 նոր դասագրքերի հրատարակման ծախսն է: Միաժամանակ, «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրով նախատեսվել է 120.0 մլն դրամ:

- համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ՝ 858.0 մլն դրամ (հաշվարկներում միջոցներ են նախատեսվել հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման, Մայքրոսոֆթի համակարգչային ծրագրերի արտոնագրման նպատակով: 2011 թվականի սեպտեմբերից Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցում կընդգրկվեն 256 դպրոց կամ՝ 2011 թվականին արդեն նշված ցանցում ընդգրկված կլինի շուրջ 1200 դպրոց):

- ավարտական փաստաթղթերի, գովասանագրերի, դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում՝ 402.1 մլն դրամ,

- դպրոցականների սպարտակիադայի և օլիմպիադաների անցկացում, համապատասխանաբար, 35.0 և 41.6 մլն դրամ,

- փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին՝ 83.2 մլն դրամ,

- կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում՝ 491.5 մլն դրամ,

- գնահատման և թեստավորման ծառայություններ՝ 375.0 մլն դրամ (հաշվարկներում միջոցներ են նախատեսվել քննությունների թեստերի մշակման, ուղեցույցերի մշակման և տպագրության, TIMSS-2011 և PIRLS-2011 միջազգային ստուգատես-հետազոտությունների հիմնական փուլին Հայաստանի Հանրապետության մասնակցության գծով):

- սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում, ինչպես նաև Ջավախքի դպրոցներին գույքի տրամադրում, համապատասխանաբար, 80.0 մլն և 30.0 մլն դրամ,

- հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 52.4 մլն դրամ:

Նախագծով միջոցներ են նախատեսվել նաև ներքոհիշյալ նոր ծրագրերի գծով.

«Մենամարտ» վարժասարքի ձեռքբերում՝ 111.0 մլն դրամ, «Ուսում-2» համակարգի ներդրում՝ 67.5 մլն դրամ, «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացում՝ 67.3 մլն դրամ, ուսուցիչների ատեստավորման գծով ծախսեր՝ 13.3 մլն դրամ:

Վերոնշյալներից բացի, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով:

Բացի այդ, 2011 թվականին կրթության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային ծրագրերը.

Կրթության որակի և համապատասխանության երկրորդ վարկային ծրագիր (Համաշխարհային բանկ), որի գծով 2011 թվականից սկսած նախատեսվում է իրականացնել հետևյալ բաղադրիչները՝

- դրամաշնորհների տրամադրում համալսարանների որակի ներքին ապահովման համակարգերի ներդրման և համապատասխան ստորաբաժանումների հիմնման նպատակով,
- նախադպրոցական կրթության միկրոծրագրեր իրականացնելու նպատակով դրամաշնորհների տրամադրում,
- ուսուցիչների որակավորման բարձրացման, ատեստավորման և ուսուցչական տարակարգերի շնորհման միասնական համակարգի և տարբերակված աշխատավարձերի իրավանորմատիվային փաստաթղթերի փաթեթի մշակում,

- ուսուցիչների վերապատրաստման և մասնագիտական զարգացման համակարգի մշակում,
- դպրոցների տնօրենների վերապատրաստման նյութերի մշակում,
- դպրոցական համակարգչային ցանցի ընդլայնում,
- կրթական միջավայրի ծրագրային ապահովման ստեղծում,
- ավագ դպրոցների ռեսուրս-կենտրոնների հիմնում,
- ավագ դպրոցի ուսուցիչների վերապատրաստում,
- ավագ դպրոցների տնօրենների և գրադարանավարների մասնագիտական որակավորման բարձրացման համար վերապատրաստումների նյութերի մշակում և վերապատրաստողների ուսուցում,
- գրադարանների կառավարման համակարգչային ծրագրի գնում,
- ուսանողական վարկերի համակարգի մշակում,
- բարձրագույն կրթության ֆինանսավորման ռազմավարության մշակում,
- ուսանողական վարկավորման պահանջարկի, շրջանավարտների հետբուհական գործունեության և աշխատուժի շուկայի ուսումնասիրություն:

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի երրորդ ծրագիր

(Համաշխարհային բանկ)

Ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ կառավարության քաղաքականությանը՝ բարձրացնելու աղքատների և խոցելի խմբերի կենսամակարդակը, բարելավելով որակն ու մատչելիությունը և մեծացնել համայնքային ենթակառուցվածքների և ծառայությունների տարածվածությունը աղքատության առավել բարձր աստիճան ունեցող համայնքներում և ամենախոցելի խմբերի համար:

2011 թվականին նախատեսվում է շինարարական աշխատանքներ իրականացնել 20-30 միկրոծրագրերով, որոնց ընտրությունը կիրականացվի 2010 թվականի ընթացքում:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով միջոցներ են նախատեսվել նաև մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող մի շարք ծրագրերի գծով, մասնավորապես.

- բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ՝ 90.0 մլն դրամ,
- մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ՝ 65.7 մլն դրամ,
- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈԻ) բարեփոխումներ՝ 165.2 մլն դրամ, ինչպես նաև

բարեփոխումների շրջանակներում գույքի և սարքավորումների ձեռքբերում՝ 1600.0 մլն դրամ (վերջինս ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված չի եղել):

- Բեռլինի Ազատ համալսարանում գործող հայագիտության բաժանմունքում աշխատանքների իրականացում՝ 6.9 մլն դրամ:

Նախագծով միջոցներ են նախատեսվել նաև ներքոհիշյալ նոր ծրագրերի գծով.

Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին՝ 100.0 մլն դրամ, Հալեպի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում՝ 4.4 մլն դրամ, ՄԱԿ-ի զարգացման աջակցության ծրագիր՝ 209.9 մլն դրամ:

Կրթության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2009 թվական) փաստացի և ընթացիկ (2010 թվական) բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 12 աղյուսակում:

Գիտությունը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն գտնվում է պետության հովանավորության ներքո: Հիմք ընդունելով 2007 թվականի հուլիսի 11-ի ՀՀ վարչապետի կողմից վավերացված «Գիտության ոլորտի բարեփոխումների հայեցակարգային դրույթները», 2011 թվականին ՀՀ պետական բյուջեով նախատեսված գիտության ծախսերը կուղղվեն ոլորտում առկա հետևյալ առաջնահերթ խնդիրներին.

- գիտության ոլորտի պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորմանը,
- գիտության ոլորտում համապատասխան ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմանը,
- գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացմանը,
- գիտության ոլորտի ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացմանը,
- գիտական ոլորտի գիտական փորձաքննության անկախ համակարգի ստեղծմանը,
- գիտության և տեխնոլոգիաների զարգացման գերակա ուղղությունների հստակեցմանը,
- գիտության և կրթության ինտեգրման ապահովմանը,
- գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման վերածումը իրական դրամաշնորհային համակարգի
- գիտական ներուժի վերարտադրությանը և երիտասարդացմանը,

• գիտական արդյունքի ապրանքայնացմանն ու դուրսբերմանը ներքին և արտաքին շուկա:

Գիտության ոլորտի հիմնական նպատակն է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման մեջ գիտության գործուն դեր ունենալը, գիտական հետազոտությունների արդյունքները տնտեսության մեջ արդյունավետ օգտագործելը:

Գիտության զարգացումը ուղղորդվելու է «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի և գիտության ու գիտատեխնիկական քաղաքականության հիմնադրույթներով, ըստ որի պետության կողմից գիտության ֆինանսավորումն կիրականացվի

- բազային,
- պայմանագրային (թեմատիկ) ,
- նպատակային-ծրագրային ֆինանսավորման ձևերով:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով գիտության բնագավառի ծախսերը կազմում են **9433.1** մլն դրամ:

Գիտության ծախսերն ամբողջովին արտացոլված են սույն բացատրագրի NN 22-3, 22-4 աղյուսակներում, և ըստ ուղղությունների նախատեսվում են.

• Բազային ֆինանսավորում ստացող կազմակերպությունների համար ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է **6833.7** մլն դրամ՝ 2010 թվականի հաստատված բյուջեի **5205.2** մլն դրամի դիմաց, այդ թվում

Գիտական և գիտատեխնիկական գործունեության հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների իրականացման գծով նախատեսվում է 177.6 մլն դրամ՝ 2010 թվականի հաստատված բյուջեի 10.8 մլն դրամի դիմաց, որը հատկացվել էր Սփյուռքի գաղթօջախների պատմության ուսումնասիրման, հետազոտությունների անցկացման համար, ընդ որում ծրագրերը կընտրվեն մրցութային կարգով:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրերի իրականացման համար նախատեսվում է 6264.5 մլն դրամ՝ 2010 թվականի հաստատված բյուջեի 4855.9 մլն դրամի դիմաց, որից.

Ծրագրի շրջանակներում «Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա» ՊՈԱԿ-ին նախատեսվում է 665.6 մլն դրամ, որից կիրառական հետազոտությունների իրականացման, գիտական ենթակառուցվածքի պահպանման և զարգացման, միջազգային գիտական համագործակցության համար՝ 575.6 մլն դրամ /համաձայն ՀՀ կառավարության 17.06.2010թ. N 758-Ն որոշման/, իսկ ֆիզիկայի բնագավառում արդիական ներուժի ապահովման համար՝ 90.0 մլն դրամ :

Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանման ծրագրի գծով նախատեսվել է 309.1 մլն դրամ, 2010 թվականի 241.6 մլն դրամի դիմաց:

Գիտական կադրերի պատրաստման պետական ծրագրի գծով նախատեսվում է 82.4 մլն դրամ, 2010 թվականի 96.8 մլն դրամի դիմաց, որից սփյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման համար՝ 3.6 մլն դրամ:

2011 թվականին գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ծրագրում ընդգրկված գիտաշխատողի մեկ հաստիքի միջին հաշվարկային աշխատավարձը նախատեսվել է բարձրացնել 10 տոկոսով, այսինքն նախկին 55 հազ. դրամի փոխարեն 60 հազ. դրամի հաշվարկով:

- Պետական նպատակային-ծրագրային ֆինանսավորման համար նախատեսվում է **1249.1** մլն դրամ՝ 2010 թվականին 1073.6 մլն դրամի դիմաց: Իրականացվող 6 ծրագրերից 5 ծրագրերը կշարունակվեն. դրանք են՝ ՀՀ պաշտպանության նախարարության պատվերով կատարվող հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքները, որի համար նախատեսվել է 1122.7 մլն դրամ՝ 2010 թվականի 950.6 մլն դրամի դիմաց, իսկ «ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Հայոց պատմություն» բազմահատորյակի տպագրություն» ծրագրի գծով 25.0 մլն դրամ, «Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ – թանգարան («Մատենադարան») ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց» բազմահատորյակի ստեղծում և հրատարակում» ծրագրի գծով 21.2 մլն դրամ, «ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Հայկական ազգային ԳՐԻԴ միջավայրի ստեղծում» ծրագրի գծով 25.0 մլն դրամ, ՀՀ մշակույթի նախարարության Պատմամշակութային ժառանգության ԳՀԿ-ի միջոցով կատարվող «Շենգավիթ» ծրագրի գծով 31.8 մլն դրամ, այսինքն վերգիններիս համար պահպանվել է ընթացիկ տարվա մակարդակը: Ինչպես նաև կկատարվեն 2 նոր ծրագրեր՝ «ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները, ուսումնասիրության խնդիրները ու հեռանկարները» ծրագիրը, որի համար նախատեսվում է 8.4 մլն դրամ և «ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնին» ՊՈԱԿ-ի միջոցով կատարվող «Մննդի որակի և անվտանգության ապահովման գիտամեթոդական հիմունքների մշակում» ծրագիրը, որի համար նախատեսվում է 15.0 մլն դրամ:

- Պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման համար նախատեսվում է **820.4** մլն դրամ, որից 90000.0 հազ. դրամ՝ հատուկ երիտասարդական դրամաշնորհային մրցույթ հայտարարելու համար, ինչը կնպաստի գիտական ներուժի երիտասարդացմանը և որո-

շակիորեն կմեղմի երիտասարդ կադրերի արտահոսքը գիտության ոլորտից, այդ թվում՝ նաև արտերկիր:

• ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով, առանձին ծրագրով նախատեսվում է նաև **529.9** մլն դրամ՝ գիտաշխատողների գիտական աստիճանների համար հավելավճարներ տրամադրելու համար, պահպանելով գործող չափերը, որը գիտության դոկտորների համար սահմանվել է 20 հազ. դրամ, իսկ թեկնածուների համար՝ 10 հազ. դրամ:

Գիտության բնագավառի ծախսերի համեմատությունը՝ նախորդ տարվա (2009 թվական) փաստացի և ընթացիկ (2010 թվական) բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 13 աղյուսակում:

Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեում ընդգրկելու նպատակով գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական ծրագրերի ցանկը ներկայացված է սույն բացատրագրի N 7 հավելվածում:

Սոցիալական պաշտպանության ոլորտի համար նախատեսվող միջոցառումներն ուղղվելու են բնակչության սոցիալական ապահովության քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների՝ պետական կենսաթոշակային ապահովության, սոցիալական աջակցության, աշխատանքի, բնակչության զբաղվածության, ընտանիքի, հաշմանդամների և տարեցների սոցիալական պաշտպանության, փախստականների սոցիալական խնդիրների լուծման, օրենսդրության կատարելագործման ու դրա իրականացման ապահովմանը, ինչպես նաև անհատական ծածկագրային համակարգի ներդրման գործընթացի շարունակությանը:

2011 թվականին սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը (առանց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության և ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության պահպանման ծախսերի) կկազմեն 268 451. 3 մլն դրամ կամ 2011 թվականի պետական բյուջեի ծախսերը 2010 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ աճում են 27 377. 5 մլն դրամով (2010թ.՝ 241 073. 9 մլն դրամ) (ստորև ներկայացված տեքստում համեմատությունը կատարվում է 2010 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ):

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերը ըստ խմբերի և դասերի բնութագրվում են հետևյալ կերպ.

Վատատողություն

- «Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևան-

քով պատճառված վնասի փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է 89.9 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 87.5 մլն դրամ): 2010թ. նկատմամբ ծախսերի աճը պայմանավորված է 01.01.2011թ-ից ամսական նվազագույն աշխատավարձի 2500 դրամով բարձրացմամբ (գործողը՝ 30000 դրամ է), թվաքանակի 39 մարդով նվազման պայմաններում (2010թ. 802 մարդ):

- **«Բժշկա-սոցիալական վերականգնման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է 102.4 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 102.5 մլն դրամ): Ծրագրով նախատեսվում է մեկ հիվանդի բուժման միջին գինը սահմանել առողջապահության ոլորտում մեկ օրվա բուժման միջին գնի չափով՝ 13650 դրամ 2010թ.՝ 12400 դրամի դիմաց, իսկ անվճար բուժօգնություն ստացողների թիվը կկազմի 577 մարդ 2010թ. 589 մարդու դիմաց:

Անաշխատունակություն

- **«Հոգեկան առողջության վերականգնման ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է 64.8 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը): Ծրագրով նախատեսվում է մեկ հիվանդի բուժման միջին գինը սահմանել առողջապահության ոլորտում մեկ օրվա բուժման միջին գնի չափով՝ 13650 դրամ 2010թ.՝ 12400 դրամի դիմաց, իսկ անվճար բուժօգնություն ստացողների թիվը կկազմի 336 մարդ 2010թ. 392 մարդու դիմաց:

- **«Հաշմանդամներին պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնման, տեխնիկական միջոցներով ապահովում և դրանց վերանորոգում»** ծրագրի գծով ծախսը կազմում է 858.6 մլն դրամ (2010թ.՝ 857.5 մլն դրամ): 2011թ. նախատեսվում է արտադրել և բաշխել պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական և վերանորոգման պարագաներ, ընդամենը՝ 13945 պարագա 2010թ. 13801 դիմաց, կամ 144 պարագաներով ավելի, առանձին պարագաների գնի փոփոխության պայմաններում: Այսպիսով.

ա) 12498 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների գծով (5099 պրոթեզաօրթոպեդիկ և 7399 վերականգնողական)՝ 748.8 մլն դրամ,

բ) 1257 պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագայի վերանորոգման գծով՝ շուրջ 69.0 մլն դրամ,

գ) ձայնաստեղծ սարքերի գծով՝ 100 հատ՝ 35.0 մլն դրամ,

դ) 90 աչքի պրոթեզների գծով՝ 5.9 մլն դրամ:

- **«Հաշմանդամներին սայլակներով և լսողական սարքերով ապահովում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում 8.4 մլն դրամի չափով (2010թ. 119.2 մլն դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է.

ա/ 2011թ. նախատեսվում է բաշխել 1300 լտողական սարք 2010թ. 1318 դիմաց: Համաձայն ՀՀ Կառավարության 2007 թ. ապրիլի 12-ի թիվ 453-Ն որոշման՝ լտողական սարքերը հատկացվում են երեք տարին մեկ անգամ, ինչպես նաև առաջին անգամ լտողական սարքի կարիք ունեցող և հաջորդ տարվա 1-ին եռամսյակում լտողական սարք ստացող հաշմանդամներին ապահովելու նպատակով, այսպիսով.

- ռուսական արտադրության լտողական սարքերի պահանջը կկազմի 1100 հատ՝ 36,3 մլն դրամ,

- եվրոպական արտադրության լտողական սարքերի պահանջը կկազմի 200 հատ՝ շուրջ 16.0 մլն դրամ և 200 հատ ներդիր մինչև 12 տարեկան երեխաների համար 2.5 մլն դրամ (19-25 տարեկան հաշմանդամ երիտասարդներին և առաջին անգամ ստացողներին նրանցով ապահովելու համար):

բ/ 2011թ. սայլակների թվի պահանջը կկազմի 400 հատ՝ 56.0 մլն դրամ (2010թ. 450 հատ): Համաձայն ՀՀ կառավարության N453-Ն որոշման սայլակները տրվում են երեք տարին մեկ անգամ, առաջին անգամ սայլակի կարիք ունեցող հաշմանդամներին, ինչպես նաև հաջորդ տարվա 1-ին եռամսյակում սայլակ ստացող հաշմանդամներին ապահովելու նպատակով: Նշված չափաքանակով սայլակների առկայությունը հնարավորություն կտա հաշմանդամներին սայլակները ստանալ անմիջապես՝ առանց հերթերի:

- **«Դպրոցն ավարտած, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած հաշմանդամների համար հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, տետրերի պատրաստման և «խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 10.5 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց «Արև» համակարգով ուսուցում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում 3.9 մլն դրամի չափով (2010թ. 7.7 մլն դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրի շահառուների (հաշմանդամների) թվի նվազմամբ 10 մարդով (2010թ.՝ 20 շահառու):

- **«Տեսողությունից հաշմանդամություն ունեցող անձանց համակարգչային տեխնիկայով և այլ օժանդակ սարքերով ապահովում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում 4.3 մլն դրամի չափով (2010թ.՝ 8.5 մլն դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրի շահառուների (հաշմանդամների) թվի նվազմամբ 10 մարդով (2010թ.՝ 20 շահառու):

- **«Մտավոր խնդիրներ ունեցող հաշմանդամ դեռահասների և երիտասարդների սոցիալ-վերականգնողական ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 16.5 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

Շերտություն

- **«Սպայական անձնակազմի և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 20764.8 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 20163.3 մլն դրամ): Ծախսերի աճը 2010 թվականի նկատմամբ կազմում է 601.5 մլն դրամ, որը պայմանավորված է բոլոր ուժային կառույցներում երկարամյա ծառայության, հաշմանդանության 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ կենսաթոշակատուների, կերակրողին կորցնելու գծով նշանակված կենսաթոշակատուների ընտանիքների անդամների թվաքանակներում առ 01.07.2010թ. դրությամբ ճշտված ցուցանիշներով, կենսաթոշակների տարբեր չափերի տեսակարար կշիռների փոփոխությամբ, ինչպես նաև հիմնական կենսաթոշակի չափի 4700 դրամով բարձրացմամբ (գործողը՝ 5800 դրամ է), նախատեսվում է 01.01.2011թ.-ից բազային կենսաթոշակի չափը հավասարեցնել հիմնական կենսաթոշակին (01.11.2010թ.՝ 10500 դրամ), արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը աճում է 1190.1 դրամով (2010թ.՝ 44764.2 դրամ) իսկ կենսաթոշակատուների միջին տարեկան թիվը՝ 357 մարդով (2010թ.՝ 36484 մարդ):

- **«Շարքային զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 3110.8 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 2864.1 մլն դրամ): Ծախսերի աճը 2010թ. նկատմամբ շուրջ 246.8 մլն դրամով պայմանավորված է հաշմանդանության 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ կենսաթոշակատուների, ինչպես նաև կերակրողին կորցնելու գծով նշանակված կենսաթոշակատուների ընտանիքների անդամների թվաքանակներում առ 01.07.2010թ. դրությամբ ճշտված ցուցանիշներով, կենսաթոշակների տարբեր չափերի տեսակարար կշիռների փոփոխությամբ, ինչպես նաև հիմնական կենսաթոշակի չափի 4700 դրամով բարձրացմամբ (գործողը՝ 5800 դրամ է), նախատեսվում է 01.01.2011թ.-ից բազային կենսաթոշակի չափը հավասարեցնել հիմնական կենսաթոշակին (01.11.2010թ.՝ 10500 դրամ), արդյունքում միջին ամսական կենսաթոշակի չափը աճում է 6233.1 դրամով (2010թ.՝ 19728.2 դրամ), կենսաթոշակատուների միջին տարեկան թվի՝ 2112 մարդով նվազման պայմաններում (2010թ.՝ 9698 մարդ):

- **«Սոցիալական կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 8579.6 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 6514.4 մլն դրամ): Ծախսերի աճը 2010թ. նկատմամբ կազմում է 2065.2 մլն դրամով, որը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի չափի 2500 դրամով բարձրացմամբ (գործողը՝ 8000 դրամ է), ինչպես նաև թվաքանակի աճով՝ 871 մարդ (2010թ.՝ 50124 մարդ):

- **«Ապահովագրական կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 163981.6 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 148015.6 մլն դրամ): Ծախսերի աճը 2010թ. նկատմամբ 15966.0

մլն դրամով պայմանավորված է ըստ առանձին միջակայքերի միջին աշխատանքային ստաժ ունեցող կենսաթոշակառուների կենսաթոշակների չափերի հաշվարկման բանաձևով հաշվարկված հավելման միջին չափերի, մինչև 25 և 25-ից ավել տարվա ապահովագրական ստաժ ունեցող, ինչպես նաև հաշմանդառության 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամ կենսաթոշակառուների թվաքանակներում առ 01.07.2010թ. դրությամբ ճշտված ցուցանիշներով, կենսաթոշակների տարբեր չափերի տեսակարար կշիռների փոփոխությամբ, ինչպես նաև 2010թ. նոյեմբերի 1-ից նախատեսված հիմնական կենսաթոշակի չափի 2500 դրամով բարձրացմամբ (գործողը՝ 8000 դրամ է), կանխատեսվում է կենսաթոշակառուների թվաքանակի նվազում 512 մարդով (2010թ.՝ 466021 մարդ), իսկ աշխատանքային կենսաթոշակի միջին ամսական չափը կկազմի 28396.1 դրամ 2010թ. 25738.4 դրամի դիմաց, պահպանելով 2010թ. համար նախատեսված ապահովագրական ստաժի մեկ տարվա արժեքը՝ 450 դրամ:

- **«ՀՀ օրենքներով և ՀՀ կառավարության որոշումներով նշանակված կենսաթոշակներ»** ծրագրով նախատեսվում է 432.9 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 413.8 մլն դրամ): Ծախսերը ՀՀ 2010 թվականի համեմատությամբ աճել են 19.1 մլն դրամով, որը պայմանավորված է հիմնական կենսաթոշակի չափի 2500 դրամով բարձրացմամբ (գործողը՝ 8000 դրամ է), ինչպես նաև կենսաթոշակառուների միջին տարեկան թվի՝ 6 մարդով ավելացմամբ:

Ծրագրոում ընդգրկված են դատավորների կենսաթոշակներին տրվող հավելման ծախսերը, ինչպես նաև «ՀՀ Նախագահի, Ազգային Ժողովի պատգամավորների, վարչապետի, կառավարության անդամների, սահմանադրական դատարանի անդամների, Ազգային Ժողովի վերահսկիչ պալատի նախագահի և դատավորների կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ գոհվելու կամ աշխատունակությունը լրիվ կորցնելու դեպքում նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նշանակված կենսաթոշակների ծախսերը:

- **«Տարեցների շուրջօրյա խնամքի ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 132.2 մլն դրամի չափով (2010թ.՝ 1350.9 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է, ինչպես Վարդենիսի տուն-ինտերնատի համար 40 խնամվողների (2010թ.՝ 1010 մարդ) և հաստիքների՝ 21.5 մարդով (2010թ.՝ 625.5 հաստիքային միավոր) ավելացմամբ, այնպես էլ ներքոհիշյալ այլ գործոններով.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճի 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ) և Վարդենիսի տուն-ինտերնատում հաստիքների ավելացման արդյունքում միայն աշխատավարձի և սոցվճարի գծով լրացուցիչ ծախսը կազմում է 19.7 մլն դրամ

բ/ գազի սակագնի փոփոխության հետ կապված՝ 5.3 մլն դրամ

զ/ ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վճարի գծով՝ 0.5 մլն դրամ (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.))

դ/ ինտերնետ կապի գծով՝ 0.5 մլն դրամ (հիմք՝ ՀՀ կառավարության 17.12.2009թ. հ. 1521-Ն որոշումը)

ե/ սննդի գծով գների թանկացման հետ կապված՝ 89.7 մլն դրամ (խնամվողների մեկ օրվա սննդի գումարը 2011 թվականին կկազմի 1430.5 դրամ 2010թ. 1243.9 դրամի դիմաց կամ 15%-ով ավելի)

զ/ տրանսպորտի պահպանման գծով՝ 8.8 մլն դրամ

է/ սանհիգենիկ պարագաների գծով՝ 2.9 մլն դրամ

ը/ խնամվողների և հաստիքների ավելացման հետ կապված առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի 4.8 մլն դրամով ավելացմամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի չորս տուն-ինտերնատներում 2011թ. կխնամվեն տարեկան 1050 միայնակ ծեր և հաշմանդամ կենսաթոշակառու, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների 5.6% աճի պայմաններում:

- **«Ներդրումներ «Տարեցների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 15.3 մլն դրամի չափով, որը կուղղվի կապիտալ՝ գույքի, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը:

- **«Տնային պայմաններում միայնակ տարեցների սոցիալական սպասարկում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 91.5 մլն դրամի չափով (2010թ.՝ 91.0 մլն դրամ): Ծախսերում ներառվել են ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վճարի գծով 0.1 մլն դրամի (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.)) և դեղորայքի գծով՝ 0.4 մլն դրամի չափով ծախսերը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոնի» ՊՈԱԿ-ի կողմից Երևան քաղաքում 2011 թվականին կսպասարկվի տարեկան 1500 միայնակ ծեր ու հաշմանդամ կենսաթոշակառու, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների 0.5% աճի պայմաններում:

- **«Ներդրումներ «Միայնակ տարեցների սոցիալական սպասարկման կենտրոն» ՊՈԱԿ-ում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 2.1 մլն դրամի չափով, որը կուղղվի կապիտալ՝ գույքի, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը:

- «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 15.7 մլն դրամի չափով (2010թ.՝ 15.3 մլն դրամ): Ծախսերում ներառվել են գազի սակագնի փոփոխության հետ կապված՝ 0.2 մլն դրամի և սննդի գծով գների թանկացման հետ կապված՝ 0.2 մլն դրամի չափով ծախսերը (խնամվողների մեկ օրվա սննդի գումարը 2011 թվականին կկազմի 388.2 դրամ 2010 թվականի 337.6 դրամի դիմաց կամ 15%-ով ավելի):

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կողմից կսպասարկվի տարեկան 50 մարդ, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների 2.5% աճի պայմաններում:

- «ՀՀ մարզերում միայնակ տարեցներին, հաշմանդամներին տնային պայմաններում և տարեցների ցերեկային խնամքի կենտրոններում սոցիալական սպասարկում» ծրագրի ծախսը կազմում է 197.1 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Վանաձորի տարեցների տանը խնամվողներին շուրջօրյա խնամք և սոցիալական սպասարկում» ծրագրի ծախսը կազմում է 14.4 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

Հարազատին կորցրած անձինք

- «Հայաստանի զոհված ազգային հերոսի կամ Մարտական խաչ շքանշանով հետմահու պարգևատրված անձի ընտանիքներին նպաստ» ծրագրի ծախսը կազմում է 154.8 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի (25.05.2005թ. ՀՕ-206-Ն) 36-րդ հոդվածով նախատեսված նպաստի վճարում» ծրագրով (գործազուրկների մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձնաց տրվող թաղման նպաստ) նախատեսվում է 7.0 մլն դրամի չափով ծախս:

- «ՀՀ կառավարության 18.11.1992թ. N584 որոշման 49-րդ կետով նախատեսված նպաստի վճարում» ծրագրի (աշխատող քաղաքացիների մահվան դեպքում ընտանիքին տրվող թաղման նպաստ) ծախսը կազմում է 17.5 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

Ընտանիքի անդամներ և զավակներ

- «Ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 4 474.1 մլն դրամի չափով (2010թ.՝ 31 022.0 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է հետևյալով. 01.05.2010թ. գազի սակագնի փոփոխությամբ պայմանավորված բարձրացել է ընտանեկան նպաստի ամսական չափը և դարձել է 26853 դրամ, որը կպահպանվաի նաև 2011 թվականին (2010 թվականի համար նախատեսված 23350 դրամի դիմաց): 2011 թվականին նպաստառուների թիվը կկազմի 110.2 հազ. ընտանիք (2010 թ.՝ 110.7 հազ. ընտանիք), պահպանելով նպաստի ամսական չափի տարբերակման սկզբունքը: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն 15.0%-ով:

- «Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 599.5 մլն դրամի չափով (2010թ.՝ 1740.5 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (նպաստի ամսական չափը կազմում է ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի 60%), ինչպես նաև կանխատեսվող նպաստառուների թվի աճով՝ 1942 մարդ 2010թ. 8058 մարդու դիմաց: Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն 8.3%-ով:

- «Երեխայի ծննդյան միանվագ նպաստ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ շուրջ 399 մլն դրամի չափով (2010թ.՝ 4276.1 մլն դրամի դիմաց): Ծախսերի աճը պայմանավորված է նպաստառուների թվի աճով 3651 մարդով, որից 3-րդ և ավելի երեխաների մասով 569 մարդով (2010թ. համապատասխանաբար 40609 մարդ և 5910 մարդ) պահպանելով 2010թ. պետական բյուջեով նախատեսված նպաստի չափերը՝ 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում 50.0 հազ. դրամ, իսկ 3-րդ և ավելի երեխայի ծննդյան դեպքում 430.0 հազ. դրամ:

- «Հղիության և ծննդաբերության նպաստ» ծրագրով նախատեսվում է 2247.2 մլն դրամի չափով ծախս: Ծախսերի աճը 2010 թ. բյուջեի նկատմամբ կազմում է շուրջ 200.0 մլն դրամ, որը պայմանավորված է բյուջեով նախատեսվածի նկատմամբ ծննդաբերության նպաստի օրերի թվի աճով՝ 43154 օր, արդյունքում օրերի թիվը 2011թ. կկազմի 1012174 օր (2010թ.՝ 969020), նվազագույն ամսական աշխատավարձի 2500 դրամով բարձրացմամբ, ինչպես նաև միջին օրական նպաստի չափի աճով՝ 107.5 դրամ, արդյունքում միջին օրական նպաստի չափը կկազմի 2220.2 դրամ (2010թ.՝ 2112.7 դրամ):

- «Երեխաների շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 120.6 մլն դրամի չափով (2010թ. 1681.7 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամ (2010թ. 30.0 հազ. դրամ), արդյունքում աշխատավարձին ուղղվող ծախսերն ավելանում են 80.1 մլն դրամ, իսկ մանկատներում միջին ամսական հաշվարկային աշխատավարձի չափը կկազմի 98.7

հազ. դրամ 2010թ. 91.8 հազ. դրամի դիմաց, այդ թվում հատուկ տիպի մանկատների աշխատողների աշտատավարձը կկազմի 146.3 հազ. դրամ 2010թ.՝ 135.0 հազ. դրամի դիմաց

բ/ գազի սակագնի փոփոխության և Խարբերդի ու Գյումրու մանկատների նոր մասնաշենքերի շահագործման հետ կապված լրացուցիչ ծախսերի ավելացմամբ՝ 15.7 մլն դրամ

գ/ սննդի գծով գների թանկացման հետ կապված՝ 22.1 մլն դրամ (մեկ օրվա սննդի գումարը մեկ շահառուի հաշվով կկազմի 1334.5 դրամ 2010թ. 1161 դրամի դիմաց կամ 15%-ով ավելի)

դ/ ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վճարի գծով՝ 0.6 մլն դրամ (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.)

ե/ ինտերնետ կապի գծով՝ 0.2 մլն դրամ (հիմք՝ ՀՀ կառավարության 17.12.2009թ. N1521-Ն որոշումը)

զ/ տրանսպորտի պահպանման գծով՝ 4.8 մլն դրամ

է/ սանհիգենիկ պարագաների գծով՝ 5.5 մլն դրամ

ը/մանկատան վերակազմակերպման հետևանքով որպես գիշերօթիկ հաստատություն ծախսերը նվազում են 8.4 մլն դրամի չափով (հիմք՝ ՀՀ կառավարության 20.05.2010թ. հ. 730-Ն որոշումը), արդյունքում 2011 թվականին հաստիքների թիվը կկազմի 839 մարդ (2010թ. 854 հաստիքի դիմաց), իսկ խմանվողների թիվը՝ 860 մարդ (2010թ. 935 երեխայի դիմաց): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն 16.5%-ով:

- **«Ներդրումներ «Երեխաների տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ներում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 11.6 մլն դրամի չափով, որը կուղղվի կապիտալ՝ գույքի, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը:

- **«Երեխաների տուն-ինտերնատներում խնամվող դպրոցական տարիքի երեխաներին դրամական աջակցության տրամադրում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում 3.8 մլն դրամի չափով (2010թ.՝ 12.8 մլն դրամ): Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է մանկատների երեխաներին հասանելիք գրպանի ծախսերի ընդհանուր մակարդակի նվազմամբ՝ կապված 1 մանկատան վերակազմակերպմամբ, որպես գիշերօթիկ հաստատություն: Միաժամանակ, հաշվի առնելով վերջին տարիների դինամիկան, 2011 թվականին նախատեսվում է անձնական մանր ծախսերի համար գումար տրամադրել 300 երեխայի (150-ը՝ 2000 դրամ՝ 7-12 տարեկան և 150-ը՝ 3000 դրամ՝ 13-18 տարեկան) 2010թ.՝ 440 երեխայի փոխարեն:

- **«ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն»** ծրագրի ծախսը կազմում է 36.1 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «ՀՀ մանկական խնամակալական կազմակերպությունների շրջանավարտներին կրթաթոշակի և միանվագ դրամական օգնության տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 3.8 մլն դրամի չափով (2010թ.՝ 4.3 մլն դրամ): Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է մանկատան շրջանավարտների միանվագ դրամական օգնություն և կրթաթոշակ ստացողների թվի փոփոխությամբ համապատասխանաբար 40 և 15 շահառու (2010թ. 50 և 19 շահառու):

- «ՀՀ մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաներին ընտանիքներ վերադարձնելու ծառայություններ (բեռնաթափում)» ծրագրի ծախսը կազմում է 11.8 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին դրամական օժանդակության փաթեթի տրամադրում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 9.7 մլն դրամի չափով (2010թ.՝ 8.7 մլն դրամ): Ծախսերի նման դինամիկան պայմանավորված է յուրաքանչյուր երեխայի համար նախատեսվող օժանդակության փաթեթի (սննդի գծով 15%-ով ավելի և այլ ծախսերի) գումարի ավելացմամբ, արդյունքում այն կկազմի տարեկան 194.0 հազ. դրամ (2010թ.՝ տարեկան 173.0 հազ. դրամ և Լոռու մարզում ընտրված 50 ընտանիքների թիվը): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն 12.1%-ով:

- «Ռիսկի գոտում հայտնված երեխաներին սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 7.1 մլն դրամի չափով (2010թ. 137.6 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ)՝ 0.4 մլն դրամ

բ/ գազի սակագնի փոփոխության հետ կապված՝ 0.9 մլն դրամ

գ/ սննդի գծով գների թանկացման հետ կապված՝ 4.0 մլն դրամ (սննդի մեկ օրվա ծախսը մեկ շահառուի հաշվով 2011 թվականին կկազմի 598.6 դրամ, 2010թ. 521 դրամի դիմաց կամ 15%-ով ավելի)

դ/ ավտոմեքենաների պարտադիր ապահովագրական վճարի գծով՝ 0.1 մլն դրամ (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.))

ե/ տրանսպորտի պահպանման գծով՝ 2.1 մլն դրամ

զ/ առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով 0.4 մլն դրամ ծախսերի նվազման պայմաններում:

2011 թվականին կպահպանվի 2 հոգաձույթյան կենտրոնների ծառայություններից օգտվողների թիվը՝ 200 երեխա, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների 5.1%-ով աճի պայմաններում:

- **«Ներդրումներ «Երեխաների սոցիալական հոգաձույթյան կենտրոն» ՊՈԱԿ-ներում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 4.0 մլն դրամի չափով, որը կուղղվի կապիտալ՝ գույքի, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը:

- **«Երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 130.4 մլն դրամի չափով (2010թ.՝ 879.3 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ սննդի գծով գների թանկացման հետ կապված՝ 56.6 մլն դրամ (սննդի մեկ օրվա ծախսը մեկ շահառուի հաշվով 2011 թվականին կկազմի 1335.4 դրամ, 2010թ. 1161 դրամի դիմաց կամ 15%-ով ավելի)

բ/ ՀՀ նվազագույն ամսական աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամ (2010թ. 30.0 հազ. դրամ) և 1 մանկատան վերակազմակերպմամբ (հիմք՝ ՀՀ կառավարության 20.05.2010թ. N 730-Ն որոշումը), որպես գիշերօթիկ հաստատության, արդյունքում հաստիքների թիվը 2011 թվականին կկազմի 642 մարդ (2010թ. 588 հաստիք), խնամվողների թիվը՝ 800 մարդ (2010թ. 725 երեխա), իսկ ծախսերը միայն աշխատավարձի և սոց.վճարի գծով՝ 48.9 մլն դրամ

գ/ գազի սակագնի փոփոխության հետ կապված՝ 11.9 մլն դրամ

դ/ ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վճարի գծով՝ 0.2 մլն դրամ (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.))

ե/ ինտերնետ կապի գծով՝ 0.1 մլն դրամ (հիմք՝ ՀՀ կառավարության 17.12.2009թ. N 1521-Ն որոշումը)

զ/ սանհիգիենիկ պարագաների գծով՝ 0.6 մլն դրամ

է/ վերակազմակերպմամբ պայմանավորված առանձին տնտեսագիտական դասակարգման հոդվածների գծով ծախսերի ավելացմամբ՝ 12.1 մլն դրամ

2011թ. նախատեսվում է 8 գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամել 800 երեխա, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների 4.1%-ով աճի պայմաններում:

- **«Ներդրումներ երեխաների գիշերօթիկ խնամքի և պաշտպանության հաստատություն հանդիսացող ՊՈԱԿ-ներում»** ծրագրի գծով նախատեսվում է ծախս 24.0 մլն դրամի չափով, որը կուղղվի կապիտալ՝ գույքի, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը:

- «Երեխաների խնամքի ցերեկային կենտրոնների կողմից դժվար իրավիճակներում գտնվող երեխաների սոցիալական հոգածության ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 51.4 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Հայաստանի Հանրապետությունում խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 3.0 մլն դրամի չափով (2010թ.՝ 25.2 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ խնամատար ծնողների համար նախատեսված նվազագույն աշխատավարձի չափի աճով 2.5 հազ. դրամով (2010թ.՝ 30.0 հազ. դրամ)՝ 0.8 մլն դրամ (պահպանելով 2010թ. խնամատար ընտանիքների թիվը՝ 23 ընտանիք)

բ/ օժանդակության փաթեթի (սննդի գծով 15%-ով ավելի) ծախսերի ավելացմամբ՝ 2.2 մլն դրամ (պահպանելով 2010թ. ընտանիքներ տեղափոխվող երեխաների թիվը՝ 25 երեխա): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն 11.8%-ով:

- «Մարդասիրական օգնության կարգով ստացվող պարենամթերքի բաշխման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 9.1 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 05-1680 գործով 15.07.2005թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.1 մլն դրամ (պահպանվել է 2010 թ. պետական բյուջեով նախատեսված չափը):

- «ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 07-3832 գործով 03.11.2007թ. վճռի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից կերակրողը կորցնելու կապակցությամբ կրած վնասի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.9 մլն դրամի չափով ծախս (2010թ. 1.2 մլն դրամ):

- «Միանվագ սոցիալական ապահովագրության վճարներ ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 170.9 մլն դրամով (2010թ. 211.0 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է ՀՀ պաշտպանության և փրկարարական ծառայության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ու փրկարար ծառայողների ընտանիքներին տրամադրվող միանվագ սոցիալական ապահովագրության վճարների հիմքում դրված ՀՀ օրենսդրության սահմանված կենսաթոշակի բազային չափի աճով և համապատասխանեցնելով հիմնական կենսաթոշակի չափին՝ 2011թ. 10500 դրամ (2010թ. կենսաթոշակի բազային չափը՝ 5800 դրամ):

- «Վարժական հավաքների և զինծառայության և փրկարարական ծառայության ընթացքում մահացած (զոհված) զինծառայողների ու փրկարար ծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման հետ կապված ծախսերի փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 370.0 մլն դրամ (պահպանվել է 2010 թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի գործով վճիռների համաձայն կրած վնասների փոխհատուցում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 4.1 մլն դրամի չափով:

Գործազրկություն

- «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի ծախսը կազմում է 689.5 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Երիտասարդների մասնագիտական կողմնորոշման և խորհրդատվական ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 20.7 մլն դրամի չափով (2010թ. 20.6 մլն դրամ): Ծախսերում ներառվել են ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վճարի գծով 0.04 մլն դրամի չափով ծախսերը (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կնվազեն 7.1%-ով:

- «Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու նպատակով պետական գրանցման համար գործազուրկներին և աշխատանք փնտրող չզբաղված հաշմանդամներին տրամադրվող ֆինասական աջակցություն» ծրագրով նախատեսվում է հատկացնել 1.86 մլն դրամի չափով ծախս: Ծրագրով նախատեսվել է 130 անհատ ձեռներեցի ցուցաբերել աջակցություն 1.86 մլն դրամի չափով (անհատ ձեռնարկատեր գրանցվելու դեպքում մեկ անձի համար պահանջվում է բազային տուրքի եռապատիկի, առևտրային կազմակերպության դեպքում՝ բազային տուրքի 12-ապատիկի, կնիքի և դրոշմակնիքի պատրաստման թույլտվություն տալու համար՝ բազային տուրքի 6-ապատիկի, ֆիրմայի անվանումը գրանցելու համար՝ բազային տուրքի 6-ապատիկի, կնիք ձեռք բերելու համար՝ կնիք պատրաստող պետական մասնագիտացված կազմակերպության կողմից սահմանված գների սանդղակի նվազագույն գնի (8000 դրամ) չափով աջակցություն, միջին գումարը կազմում է 14.3 հազ.դրամ:

- «Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի ընդունելիս աշխատավարձի մասնակի փոխհատուցում գործատուին» ծրագրով նախատեսվում է հատկացնել 89.8 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 64.8 մլնդրամ): Ծախսերի աճը ՀՀ 2010 թվականի նկատ-

մամբ պայմանավորված է ամսական նվազագույն աշխատավարձի 01.01.2011թ կանխատեսվող 2500 դրամով բարձրացմամբ, 230 շահառուի համար:

- **«Ապահովագրական ստաժ չունեցող կամ մինչև մեկ տարվա ապահովագրական ստաժ ունեցող աշխատանք փնտրող չգրադված հաշմանդամների մասնագիտական ուսուցման և աշխատանքային ունակությունների վերակազմման կազմակերպում»** ծրագրով նախատեսվում է 13.1 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2010թ. բյուջեով նախատեսված չափը, մեկ հաշմանդամի մասնագիտական ուսուցման, աշխատանքային ունակությունների վերականգնման (ներառյալ կրթաթոշակը) համար 2010 թվականին կնքված պայմանագրերով միջին ծախսը 170. 0 հազ.դրամ x 77 շահառու):

- **«Գործազրկության նպաստ»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 4878.8 մլն դրամի չափով ծախս (2010թ. 4536.0 մլն դրամ): Ծախսերի աճը 2010թ պետական բյուջեի նկատմամբ կազմում է 342.8 մլն դրամ, որը պայմանավորված է ամսական նվազագույն աշխատավարձի 01.01.2011թ կանխատեսվող 2500 դրամով բարձրացմամբ պայմանավորված նպաստի ամսական չափը կբարձրանա 1500 դրամով և կկազմի 19500 դրամ (գործողը՝ 18000 դրամ), գործազրկության նպաստ ստացողների միջին տարեկան թվաքանակը նվազում է 150 մարդով և կկազմի 20850 մարդ (հաշվարկներում հաշվի է առնվել գործազուրկների միջին տարեկան թվաքանակը, որը կազմում է 20850 մարդ 12 ամսվա կտրվածքով՝ փաստացի գործազրկության նպաստի վճարման միջին տարեկան տևողությունը կազմում է 10 ամիս, արդյունքում նպաստ կվճարվի շուրջ 25020 անձանց):

- **«Գործազուրկների, աշխատաշուկայում անմրցունակ խմբերի և երկարամյա ծառայության ու արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց մասնագիտական ուսուցում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 228.9 մլն դրամի չափով ծախս: Ծախսերի նվազումը 2010թ պետական բյուջեի նկատմամբ պայմանավորված է (2010թ. պետական բյուջեով 232.9 մլն դրամ), ծրագրում ընդգրկված շահառուների թվաքանակի 24 մարդով նվազմամբ և կկազմի 1346 մարդ (2010թ.՝ 1370 մարդ, մասնագիտական ուսուցման համար մեկ շահառուի 2010 թվականին կնքված պայմանագրերով միջին ծախսը՝ 170. 0 հազ.դրամ):

- **«Այլ վայր աշխատանքի գործուղվող գործազուրկների նյութական ծախսերի հատուցում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 15.9 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2010թ. նախատեսված չափը, «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 2335-Ն որոշմամբ սահմանված՝ գ/ամսական գումար բնակարանային վարձի և կոմունալ ծախսերի համար «Նվազագույն

ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված ամսական աշխատավարձի չափով՝ միջին տարեկան ծախսը՝ 530 հազ.դրամ: 2011 թվականին նախատեսվում է այլ վայր աշխատանքի գործուղել 30 գործազուրկի: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների ընտանիքի անդամների միջին թիվը հաշվարկվում է 4 անձ):

- **«Երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակ ստացող աշխատանք փնտրող չգրադված անձանց վերամասնագիտացում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 2.55 մլն դրամ: Ծախսերի նվազումը 2010 թ. բյուջեի նկատմամբ (2010թ. պետական բյուջեով 3.4 մլն դրամ), պայմանավորված է ծրագրում ընդգրկված շահառուների թվաքանակի 5 մարդով նվազմամբ (2010թ. պետական բյուջեով 20 մարդ, վերամասնագիտական ուսուցման համար մեկ շահառուի 2010 թվականին կնքված պայմանագրերով միջին տարեկան ծախսը՝ 170.0 հազ.դրամ՝ ներառյալ կրթաթոշակը):

- **«Աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 5.0 մլն դրամի չափով ծախս (պահպանվել է 2010թ. բյուջեով նախատեսված չափը): Սույն ծրագրի նապատակն է աշխատաշուկայի հետազոտման և կանխատեսման աշխատանքների կազմակերպման համար կատարել ուսումնասիրություն նախնական (արհեստագործական) ուսումնական հաստատություններում անվճար ուսուցանվող մասնագիտությունների վերաբեյալ և աշխատաշուկայում զբաղվածության խնդիրները վեր հանելուն ուղղված նպատակային հետազոտություններ՝ մեկ հետազոտություն:

- **«Թափուր աշխատատեղերի տոնավաճառի կազմակերպման ծառայություններ»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 4.2 մլն դրամ (պահպանվել է 2010թ. բյուջեով նախատեսված չափը): Սույն ծրագրով նախատեսվում է 2010թ. 5 մարգում և Երևան քաղաքում՝ յուրաքանչյուրում կազմակերպել մեկ աշխատանքի տոնավաճառ, որի համար անհրաժեշտ կլինի՝ $6 \times 700.0 = 4.200.0$ հազ. դրամ (մեկ աշխատանքի տոնավաճառ կազմակերպելու համար անհրաժեշտ է 20 ստենդ (մեկ հատը -25,0 հազ դրամ) $20 \times 25.0 = 500.0$ հազ. դրամ, տարածքի վարձակալության համար – 200.0 հազ. դրամ):

- **«Աշխատանք փնտրող հաշմանդամների աշխատանքային վերականգնման, մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 6.0 մլն դրամի չափով (2010թ.՝ 9.8 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ կենտրոնի շահագործման հետ կապված հաշվարկների ճշտմամբ՝ 5.96 մլն դրամ, արդյունքում հաստիքների թիվը կավելանա 2 մարդով (2010թ.՝ 9 հաստիքային միավոր) և լրացուցիչ ծախսը միայն աշխատավարձի և սոցվճարի գծով կազմում է 1.1 մլն դրամ

բ/ ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վճարի գծով՝ 0.04 մլն դրամ (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.)): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն 61.0%-ով:

- **«Մասնագիտություն ունեցող, սակայն մասնագիտական աշխատանքային ստաժունեցող գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 36.6 մլն դրամ: 2010թ. բյուջեով նման ծրագիր նախատեսված չի եղել, այն ընդունվել է 2011-2013 ՄԺԾԾ-ով: Նախատեսվում է մասնագիտություն ունեցող, սակայն աշխատանքային փորձ չունեցող 200 գործազուրկների և հաշմանդամների համար կազմակերպել աշխատանքային պրակտիկա գործատուի մոտ, աշխատանքային պրակտիկայի կազմակերպման միջին տարեկան գինը՝ 178.2 հազ.դրամ: Շահառուն ձեռք բերելով իր մասնագիտական որակավորմանը համապատասխան աշխատանքային փորձ, աշխատաշուկայում կդառնա առավել մրցունակ և կտեղավորվի աշխատանքի: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նրանում ընդգրկված անձին տրամադրել աշխատավարձ՝ ամսական նվազագույն աշխատավարձի չափով, ուսուցանող անձին՝ փոխհատուցում միջին ամսական աշխատավարձի 20%-ի չափով, իսկ գործատուին տրամադրվում է գումար՝ սոցվճարի չափով:

- **«Կազմակերպություններում հաշմանդամների համար աշխատատեղերի հարմարեցում»** ծրագրով նախատեսվում է հատկացնել 4.0 մլն դրամ: 2010թ. բյուջեով նման ծրագիր նախատեսված չի եղել, այն ընդունվել է 2011-2013 ՄԺԾԾ-ով, այս ծրագրով նախատեսվում է զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված թվով 20 հաշմանդամների աշխատանքի տեղավորման նպատակով աշխատատեղերի հարմարեցում գործատուի մոտ, որը նպաստելու է հաշմանդամություն ունեցող անձանց հասարակություն ինտեգրմանը՝ նրանց համար հավասար պայմանների ապահովմանը, աշխատատեղերի միջին տարեկան գինը՝ 200.0 հազ.դրամ է:

Բնակարանային ապահովում

- **«Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի նվազում 2011թ. ընդհանուր հատկացումները կկազմի 220.0 մլն դրամ (2010թ. 343.8 մլն դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է ծրագրի շրջանակներում նախատեսված շինարարական աշխատանքների ավարտմամբ:

- «Զոհված (մահացած) և առաջին, երկրորդ և երրորդ կարգի հաշմանդամ զինծառայողների անօթևան ընտանիքներին բնակարանով ապահովման և բակարանային պայմանների բարելավում» ծրագրով նախատեսվում է հատկացնել 500.0 մլն դրամ (պահպանվել է 2010 թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)

Անօթևան մարդկանց համար ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 4.7 մլն դրամ (2010թ.՝ 54.2 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ գազի սակագնի փոփոխության հետ կապված՝ 0.8 մլն դրամ

բ/ սննդի գծով գների թանկացման հետ կապված՝ 3.8 մլն դրամ (մեկ շահառուի գծով մեկ օրվա ծախսը 2011 թվականին կկազմի 1335.4 դրամ 2010թ. 1161 դրամի դիմաց կամ 15%-ով ավելի):

գ/ փափուկ գույքի գծով ծախսի ավելացմամբ՝ 0.1 մլն դրամ

Երևանի թիվ 1 տուն-ինտերնատին կից անօթևանների ժամանակավոր կացարանում կսպասարկվի տարեկան 60 անօթևան մարդ մինչև 60 օր տևողությամբ, մեկ շահառուի հաշվով բյուջետային հատկացումների 8.6%-ով աճի պայմաններում:

- «Ներդրումներ «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 2.2 մլն դրամի չափով, որը կուղղվի կապիտալ՝ գույքի, սարքերի և սարքավորումների ձեռքբերմանը:

- «Բռնադատված քաղաքացիներին պատճառված վնասի դիմաց միանվագ դրամական փոխհատուցում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 0.5 մլն դրամի չափով (2010թ.՝ շուրջ 1.0 մլն դրամ): 2011 թվականին միանվագ դրամական փոխհատուցում կստանան 40 բռնադատվածներ (2010թ.՝ 83 բռնադատված)՝ անփոփոխ թողնելով փոխհատուցման չափը՝ 12.0 հազ. դրամ:

- «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ում ավանդատու հանդիսացող քաղաքացիների, որպես նախկին ԽՍՀՄ Խնայրանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում» ծրագրի ծախսը կազմում է 1.7 մլրդ. դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Փախստականների սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագրով ծախս է նախատեսվում 17.1 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 16.9 մլն դրամ): Ծախսերի աճը 2010թ. նկատմամբ պայմանավորված է ամսական նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

- «Փախստականների կեցության խնդիրների լուծման միջոցառումներ» ծրագրով նախատեսվում է հատկացնել շուրջ 11.9 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ շուրջ 11.2 մլն դրամ): Ծախսերի աճը 2010թ. նկատմամբ պայմանավորված է ամսական նվազագույն աշխատավարձի բարձրացմամբ:

- «Վետերանների պատվովճարներ» ծրագրով նախատեսվում է հատկացնել 700.8 մլն դրամի չափով ծախս (2010թ.՝ 848.2 մլն դրամ): Ծախսերը 2010 թվականի համեմատությամբ նվազում են 147.4 մլն դրամի չափով, որը պայմանավորված է ստացողների թվաքանակի նվազմամբ՝ 614 մարդով (2010թ.՝ 3534 մարդ), անփոփոխ է թողնվել վետերանների պատվովճարի ամսական չափը՝ 20.0 հազ. դրամ:

- «ՀՄ պատերազմի վետերաններին, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին դրամական օգնության տրամադրում» ծրագրով ծախս է նախատեսվել 2972.9 մլն դրամ (2010թ.՝ 2573.7 մլն դրամ): Ծախսերը 2010 թվականի համեմատությամբ աճում են շուրջ 399.2 մլն դրամով, որը պայմանավորված է գազի սակագնի բարձրացմամբ պայմանավորված ըստ առանձին տեսակների հատուցման միջին ամսական չափերի 1768.7 դրամով բարձրացմամբ (գործող միջին ամսական չափը կազմում է 8128 դրամ), աճը կկազմի շուրջ 21.8 % կամ միջին ամսական չափը կկազմի 9896.7 դրամ: Հայրենական մեծ պատերազմի վետերանների, 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում. նշված պատճառներով հաշմանդամ դարձած զինծառայողների, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների թվաքանակը նվազում է 1354 մարդով, դրամական օգնության ամսական չափերը կկազմեն՝

ա/ ՀՊ մասնակիցների նրանց հավասարեցված անձանց՝ 5500 դրամ (2010թ.՝ 4500 դրամ),

բ/ ՀՊ հաշմանդամներ և նրանց հավասարեցված անձանց, Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների ընտանիքի անդամներ /այրիներ և մանկուց հաշմանդամ երեխաներ՝ 8200 դրամ(2010թ.՝ 6800 դրամ),

գ/ Հաշմանդամ զինծառայողներ (նրանց հավասարեցված անձիք) և զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքներ՝ 11000 դրամ (2010թ.՝ 9100 դրամ),

դ/ 5 հոգուց ավելի զոհված (մահացած) զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ընտանիքների անդամների համար, հինգից ավելի յուրաքանչյուր անձի համար լրացուցիչ՝ 3600 դրամ (2010թ.՝ 3000 դրամ):

2011թ. դրամական օգնություն կստանան շուրջ 25033 մարդ (2010թ.՝ 26387 մարդ):

Մոցիալական ապշտպանությանը տրամադրող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)

- «Հաշմանդամների տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 18.1 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «ԲՄՓ ձևաթղթի տպագրության ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 8.8 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Գործազուկների տվյալների տեղեկատվական համակարգի /»Գործ» համակարգ/ վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 24.9 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Մոցիալական ապահովության քարտերի համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է շուրջ 148.0 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Երեխաների տվյալների «Մանուկ» տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 15.3 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Մոցիալական ապահովության առանձին ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 73.4 մլն դրամով (2010թ.՝ 524.2 մլն դրամ), որը պայմանավորված է նպաստներին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

- «Կենսաթոշակային ապահովության և ապահովագրության ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 261.8 մլն դրամով (2010թ.՝ 2312.5 մլն դրամ), որը պայմանավորված է կենսաթոշակներին ուղղվող ծախսերի փոփոխությամբ:

- «Վետերանների պատվովճար և ՀՀ պատերազմի վետերաններին ու 25.11.1998թ. ՀՕ-258 օրենքի 13 հոդվածում նշված անձանց ընտանիքներին դրամական օգնության տրամադրման հետ կապված վճարման ծառայություններ» ծրագրով նախատեսվում է 15.8 մլն դրամի չափով ծախս (2010թ. 16.6 մլն դրամ): Ծախսերի նվազումը պայմանավորված է նրանում ներառված ծրագրերի գծով ծախսերի փոփոխությամբ:

- «Ընտանեկան նպաստի և դրամական օգնության տրամադրման հետ կապված վարչարարական ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 19.0 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 10.06.1993թ. ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 14.8 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Ընտանեկան նպաստի տվյալների տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 31.3 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «ՄՕՏԳ ձևաթղթի տպագրության ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 17.4 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Երեխայի ծննդյան և խնամքի համար տրամադրվող նպաստների համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ» ծրագրի ծախսը կազմում է 9.5 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Մեթոդաբանական ձեռնարկների մշակում, հետազոտությունների անցկացում և սոցիալական ապահովության ոլորտի կադրերի վերապատրաստում» ծրագրի գծով նախատեսվում է ծախս 84.8 մլն դրամ (2010թ.՝ 84.5 մլն դրամ):

Ծախսերում ներառվել են ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վճարի գծով՝ 0.04 մլն դրամի չափով ծախսերը (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.)):

- «Հանրային իրազեկման միջոցառումների իրականացում» ծրագրի ծախսը կազմում է 26.1 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Փախստականների և նրանց ընտանիքների վերաբերյալ տեղեկատվության կուտակում» ծրագրի ծախսը կազմում է 44.0 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- «Ժամանակավոր անաշխատունակության դեպքում նպաստի վճարում» ծրագրով նախատեսվում է 2562.9 մլն դրամի չափով ծախս (2010թ. 2363.1մլն դրամ): 2011թ. բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի աճը 2010 թ. բյուջեի նկատմամբ կազմում է շուրջ 199.8 մլն դրամ, որը պայմանավորված է՝ ա) բյուջեով նախատեսվածի նկատմամբ նպաստի օրերի թվի

աճով՝ 65943 օր, (2010թ. բյուջեով նախատեսված 941468 օր), բ) միջին օրական նպաստի չափի 23.2 դրամով բարձրացմամբ (2010թ.՝ 2699 դրամ):

- **«Կենսաթոշակների նշանակման ու վճարման «Արաքս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 18.0 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«Անհատական (անձնավորված) հաշվառման «Պատնաս» համակարգչային համակարգի ծրագրային սպասարկման ապահովման ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 36.0 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«Ժամանակավոր անաշխատունակության թերթիկների տպագրություն»** ծրագրի ծախսը կազմում է 21.6 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«Կենսաթոշակի նշանակման և վճարման համար անհրաժեշտ ձևաթղթերի տպագրություն»** ծրագրի ծախսը կազմում է 2.0 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«Բարեգործական ծրագրերի հաշվառման տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 5.3 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«ՀՀ աշխատանքի պետական տեսչության տեղեկատվական համակարգի վարման, սպասարկման և տեղեկատվության տրամադրման ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 5.7 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«Վարձատրվող հասարակական աշխատանքների կատարման հետ կապված վարչարարական ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 10.5 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«Թրաֆիքինգի գոհերին սոցիալ-հոգեբանական վերականգնողական ծառայություններ»** ծրագրի գծով նախատեսվում է ծախսերի աճ 6.9 մլն դրամի չափով (2010թ. 84.5 մլն դրամ): Ծախսերի աճը պայմանավորված է.

ա/ կենտրոնի ամբողջ ծախսերը ՀՀ պետական բյուջեից իրականացնելու հետ (2010թ.՝ «Ամբոր» ՀԿ հետ միասին ծախսերը կատարվել են 5 ամսվա համար 50% չափով, իսկ 7 ամսվա համար՝ 100% չափով):

բ/ ավտոմեքենաների պարտադիր ապահովագրության վճարի գծով՝ 0.04 մլն դրամ (հիմք՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-63-Ն 09.06.2010թ.)):

2011 թվականին կենտրոնի կողմից նախատեսվում է ծառայություն մատուցել 8 մարդու համար (թրաֆիկինգի գոհերի ժամանակավոր տեղավորման ժամկետները որոշվելու են խիստ անհատապես, բայց ոչ ավել, քան 60 օր): Բյուջետային հատկացումները մեկ շահառուի հաշվով կաճեն 26.6%, պայմանավորված նրանով, որ 2011թ. կենտրոնի ամբողջ ծախսերը կկատարվեն ՀՀ պետական բյուջեից, պահպանելով 2010թ. շահառուների թիվը:

- **«Սոցիալական ապահովության քարտերի համակարգի հետ կապված վարչարարական ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 6.5 մլն դրամ (պահպանվել է 2010թ. պետական բյուջեով նախատեսված չափաքանակը):

- **«Աշխատողների աշխատանքային պարտավորությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման հետ կապված վճարման ծառայություններ»** ծրագրի ծախսը կազմում է 1.3 մլն դրամ (2010թ. 1.2 մլն դրամ): Ծախսերի աճը 2010թ. նկատմամբ պայմանավորված է վնասի փոխհատուցմանն ուղղվող գումարի փոփոխությամբ:

Սոցիալական պաշտպանության ոլորտի ծախսերի համեմատությունը՝ 2009 թվականի փաստացի, 2010 թվականի հաստատված պետական բյուջեի նկատմամբ և 2011 թվականի բյուջետային տարվա հաստատված համապատասխան ցուցանիշների հետ, արտացոլված են սույն բացատրագրի N 14 աղյուսակում:

Զբաղվածության կարգավորման 2011 թվականի պետական ծրագիրը, երեխաների իրավունքների պաշտպանության 2011 թվականի տարեկան ծրագիրը և հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2011 թվականի տարեկան ծրագիրը արտացոլված են սույն բացատրագրի համապատասխանաբար NN 4 -րդ, 5-րդ և 6 -րդ հավելվածներում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագիր

Ծրագրի նպատակն է բնակչության աղքատ և խոցելի խավի սոցիալական պաշտպանվածության բարձրացումը:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կարիքների համար համակարգիչների ձեռքբերում,
- ավարտական մոնիտորինգի և աուդիտի իրականացում:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման ծրագրի Լրացուցուցիչ ֆինանսավորման ծրագիր

Ծրագրի նպատակն է մարդկային զարգացման խթանման և սոցիալական ապահովության համակարգերի և հանրային հատվածի հիմնական գործառույթների բարելավում:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ընդհանուր աջակցություն սոցիալական պաշտպանության ոլորտի, աշխատանքին և զբաղվածությանը,
- կենսաթոշակների վարչարարություն, սոցիալական աջակցության վարչարարության բարելավում և ծրագրի կառավարում:

ՀՀ պետական բյուջեի նախագծում ընդգրկված և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող ծախսային ծրագրերի համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում հատկացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2011 թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել ՀՀ 2010 թ. պետական բյուջեով սահմանված գումարների չափով` **758.0** մլն դրամ:

2011թ. համար կանխատեսվող բյուջետային հատկացումները նախատեսվում է ուղղել Նախագծում ընդգրկված տնտեսության այլ ոլորտների հետևյալ ծախսային ծրագրերին, այդ թվում`

«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» ծախսային ծրագրի իրականացման համար Նախագծով նախատեսվել է **150.0** մլն դրամ, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել ծրագրային միջոցառումների գծով հետևյալ աշխատանքների ֆինանսավորումը`

- «ՓՄՁ սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների պահպանում և ամրապնդում»` **50.0** մլն դրամ,
- «Ծրագիրն իրականացնող անձնակազմի և փորձագետների վարձատրությանն ուղղված ծախսերին»` **100.0** մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է` ՓՄՁ սուբյեկտներին տեխնիկական, ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերում:

«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ» ծախսային ծրագիրը շարունակական է և այդ նպատակի համար Նախագծով նախատեսվել է` **50.0** մլն դրամ: Նշված հատկացումների հաշվին նախատեսվում է իրականացնել զբոսաշրջային ոլորտի ծրագրային միջոցառումների հետևյալ ծախսերը.

1) Զբոսաշրջության ոլորտի գովազդա-տեղեկատվական ապահովման համակարգի զարգացում՝ **20.9** մլն դրամ, որից՝

ա) գովազդային նյութերի մշակում, պատրաստում, տպագրում և բաշխում՝ **4.2** մլն դրամ,

բ) մասնակցություն զբոսաշրջային ցուցահանդեսներին՝ **9.5** մլն դրամ,

գ) ավանդական տոնակատարությունների կազմակերպում և անցկացում՝ **3.2** մլն դրամ,

դ) օտարերկրյա լրագրողների և տուրօպերատորների Հայաստան այցելությունների կազմակերպում՝ **4.0** մլն դրամ

2. «Միջազգային համագործակցություն»՝ **2.7** մլն դրամ,

բ) Ծրագրային միջոցառումների իրականացման աշխատանքների վարձատրություն՝ **26.4** մլն դրամ:

«Ստանդարտների մշակման ծառայություններ» ծախսային ծրագիրը շարունակական է: և Նախագծով նախատեսվել է՝ **14.0** մլն դրամ, որը նպատակաուղղվելու է ծրագրային հետևյալ միջոցառումների ֆինանսավորմանը.

1) Ազգային ստանդարտների մշակմանը՝ **5.8** մլն դրամ,

2) Միջպետական և միջազգային ստանդարտացման աշխատանքների կազմակերպմանը՝ **3.4** մլն դրամ,

3) Ստանդարտացման ազգային ֆոնդի վարման և տեղեկատվական սպասարկման աշխատանքների կազմակերպմանը՝ **4.8** մլն դրամ:

Ծրագրի նպատակն է՝ ՀՀ ստանդարտացման բնագավառի միջազգային և եվրոպական համակարգերին ինտեգրումը, որը կնպաստի սպառողների շահերի պաշտպանությանը՝ անվտանգ ապրանքների ձեռք բերման հարցերում, կապահովի հայրենական արտադրողների կողմից մրցունակ ապրանքների արտադրմանը և ծառայությունների մատուցմանը:

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ» ծախսային ծրագիրը շարունակական է և այդ նպատակի համար Նախագծով նախատեսվել է՝ **80.0** մլն դրամ, որը նպատակաուղղվելու է.

1. «Հայաստանի SS ոլորտի ներկայացում և խթանում Հայաստանում և արտերկրում հետազոտություն, հասարակական իրազեկում»՝ **50.0** մլն դրամ

2. «Միջազգային համագործակցություն»՝ **20.0** մլն դրամ,

3. «Միջազգային SS կազմակերպությունների հետ (HP,Intel) «Համակարգիչ բոլորի համար» համագործակցություն»՝ **10.0** մլն դրամ:

Ծրագրի իրականացման հիմնական նպատակներից են՝

- ստեղծել Տեղեկատվական և գիտելիքի վրա հիմնված առաջադեմ հասարակություն՝ ՏՀՏ կատարելագործված ենթակառուցվածքներով, համակարգչային բարձր գրագիտությամբ, համակարգչային հագեցվածության և ինտերնետ հասանելիության բարձր աստիճանով, ինչպես նաև համատարած կիրառվող էլեկտրոնային ծառայությունների համակարգերի և մեծածավալ տեղական ՏՏ շուկայի առկայությամբ,

- ապահովել զարգացած և համաշխարհային ճանաչում ունեցող ՏՏ ոլորտ՝ մեծ հավելյալ արժեք ստեղծող հետազոտական և բարդ ինժեներական լուծումներ և ծառայություններ մատուցող ընկերություններով, միջազգային շուկաներում մրցունակ տեղական ՏՏ արտադրանքով,

- ապահովել մրցունակ «Հայկական ՏՏ ապրանքային նշանի»-ի ստեղծումը, դրա ներթափանցումն ու ներկայությունը համաշխարհային շուկայում և, հատկապես, աճի բարձր պոտենցիալով շուկայական թիրախային սեգմենտներում: Նպաստել ՏՀՏ ենթակառուցվածքների և տեղեկատվական հասարակության խթանման միջոցով տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտների աճի և եկամուտների բարձրացմանը և գիտելիքահենք տնտեսության ձևավորմանը,

- ապահովել ոլորտի արդյունավետության աճի պահպանում և առավել զարգացում (մինչև տարեկան 5% չափով),

- ապահովել որակյալ աշխատուժի աճի պահպանում և առավել զարգացում (մինչև տարեկան 5% չափով):

«Գյումրու տեխնոպարկի գործունեության իրականացում» ծախսային ծրագիրը շարունակական է և Նախագծով նախատեսվել է՝ **200.0** մլն դրամ, որը նպատակաուղղվելու է ծրագրային հետևյալ միջոցառումների իրականացմանը.

1. «Տեխնոպարկի գործունեության կառավարում (Գյումրու տնտեսական զարգացման հիմնադրամ)՝ **46.7** մլն դրամ,

2.«Նորարարությունների ու ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործում»՝ **62.0** մլն դրամ,

3. «Համաշխարհային բանկի՝ GTC տեխնոլոգիաների ընդլայման նախագծի բարձրացման վարկային ծրագրի համաֆինանսավորում»՝ **41.1** մլն դրամ,

4. «Ծրագրային ապահովման, դիզայնի, մուլտիմեդիայի լաբորատորիայի հիմնում»՝ **50.2** մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Գյումրու Տեխնոպարկի ներքո ինովացիոն համակարգի ձևավորումը: Միաժամանակ Գյումրու Տեխնոպարկ գործունեության իրականացման պետական աջակցության ծրագիրն ունի հետևյալ ենթանպատակները.

- Արտադրական և գիտական սուբյեկտների մտավոր, տեղեկատվական, նյութատեխնիկական և ֆինանսական ռեսուրսների ինտեգրացում և ակտիվացում՝ մարզի և հանրապետության գիտաարտադրական ներուժի զարգացման համար;

- Մարզում փոքր ու միջին ձեռնարկությունների ստեղծման, զարգացման պայմանների և բարենպաստ միջավայրի ձևավորում;

- Մասնակցություն՝ շուկայական տնտեսական այնպիսի մեխանիզմների ձևավորմանը, որոնք կխթանեն մրցունակ ապրանքների արտադրությունը:

- Բարձր տեխնոլոգիական արտադրությունների ստեղծում, որով կապահովվի կարևոր օժանդակող փոքրաքանակ արտադրանքներ,

- Առաջադեմ տեխնոլոգիաների ձեռքբերման, աջակցման նպատակով ներդրումային միջոցների ներգրավում (այդ թվում՝ օտարերկրյա);

- Գիտատար արտադրանք նախաձեռնողներին և արտադրողներին հասցեական արտոնությունների տրամադրում,

- Գիտատեխնիկական, մտավոր և կադրային ներուժի պահպանման ու զարգացման պայմանների ձևավորում, երիտասարդ կադրերի պատրաստում,

- Օրինակելի նախատիպ հանդիսանալ հանրապետության այլ տարածքներում և մարզերում տեխնոլոգիական ուղղվածության տեխնոպարկերի և ինկուբատորների ստեղծման համար:

«Պետական աջակցություն «Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը» ծախսային ծրագիրը շարունակական է: Նախագծով նշված ծրագրի իրականացման համար նախատեսվել է՝ 264.0 մլն դրամորը նպատակաուղղվելու է ծրագրային հետևյալ միջոցառումների իրականացմանը.

- «Հիմնական գրասենյակ»՝ 148.5 մլն դրամ,

- «գրոսաշրջության»՝ 36.4 մլն դրամ,

- «առողջապահության»՝ 30.4 մլն դրամ,

- «կրթության»՝ 21.8 մլն դրամ,

- «ուլորտները հատող»՝ 13.5 մլն դրամ,

- «ֆոնդահայթհայթմանը»՝ և ծրագրերի կառավարման աշխատակիցների աշխատավարձերի ծախսերին 13.4 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ հասցնել ՀՀ տնտեսության տարբեր ճյուղերը երկարաժամկետ մրցունակության առավելագույն աստիճանի:

Նախագծով այս ոլորտների նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2009թ. բյուջետային տարվա փաստացի և 2010թ. բյուջետային տարվա համար հաստատված համապա-

տասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N 3 աղյուսակում (առանց վարկային ծրագրերի):

ՀՀ պետական բյուջեի նախագծում ընդգրկված և ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչության կողմից իրականացվող ծախսային ծրագրերի համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում հատկացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2011 թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել ՀՀ 2010 թ. պետական բյուջեով սահմանված գումարների չափով՝ **56.1** մլն դրամ:

2011թ. համար կանխատեսվող բյուջետային հատկացումները նախատեսվում է ուղղել Նախագծում ընդգրկված հետևյալ ծախսային ծրագրերին, այդ թվում՝

Պետական գույքի կառավարման ոլորտի «Աճուրդների կազմակերպման և անցկացման աշխատանքներ» ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է հատկացնել՝ **21.1** մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց ամրագրված գույքի օտարման գործընթացի կազմակերպումը:

Պետական գույքի կառավարման ոլորտի «Պետական գույքի հաշվառման, գույքագրման, ուսումնասիրությունների և գնահատման աշխատանքների իրականացում» ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է հատկացնել՝ **35.0** մլն դրամ :

Ծրագրի իրականացման հիմնական նպատակն է՝

1. ՀՀ պետական սեփականություն հանդիսացող գույքի արդյունավետ կառավարման ու հաշվառման կազմակերպումն է: Հաշվառման աշխատանքներն ամփոփվում, կատարվում է վերլուծություն, տրամադրվում են տեղեկանքներ Պետական գույքի կառավարման վարչությանը, որի հիման վրա Վարչությունը ՀՀ կառավարություն է ներկայացնում առաջարկություններ պետական գույքի արդյունավետ կառավարման վերաբերյալ :

2. Գույքագրման արդյունքում հնարավորություն է ստեղծում ծանոթանալու ընկերությունների ֆինանսատնտեսական վիճակին, գույքի վիճակի ուսումնասիրմանը, զարգացման հետևանքներին, որոնց արդյունքում ներկայացվում է դրանց տնօրինման, արդյունավետ կառավարման, ինչպես նաև մասնավորեցման վերաբերյալ օպտիմալ առաջարկներ:

Այս ոլորտի համար նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2009թ. բյուջետային տարվա փաստացի և 2010թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N 3 բ աղյուսակում (առանց վար-

կային ծրագրերի), իսկ պետական ոչ առևտրային կազմակերպության 2011 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային կանխատեսվող ցուցանիշներն արտացոլված են սույն բացատրագրի N 20-9 աղյուսակում:

ՀՀ կառավարության աշխատակազմի «Զարգացման հայկական գործակալության» «Տնտեսական գործունեության արդյունավետ վարման և աջակցման միջոցառումների իրականացում» ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է հատկացնել՝ 125.0 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ տնտեսական խորհրդատվության աջակցման տրամադրում, վերլուծությունների պատրաստում:

Այս ոլորտի համար նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2009թ. բյուջետային տարվա փաստացի և 2010թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N 3ա աղյուսակում (առանց վարկային ծրագրերի), իսկ պետական ոչ առևտրային կազմակերպության 2011 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային կանխատեսվող ցուցանիշներն արտացոլված են սույն բացատրագրի N 20-9 աղյուսակում:

ՀՀ պետական բյուջեի նախագծում քննարկված և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող <Տեխնիկական անվտանգության կանոնակարգման> ոլորտի <Տեխնիկական անվտանգության կանոնակարգման ծառայություններ> ծախսային ծրագրերը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ 50.4 մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության տարածքում տեխնաձին վթարների կանխարգելումը, դրանց հետևանքների վերացումը, նման վթարների հտնանքով հասարակությանը և տնտեսությանը հասցվող վնասների ռիսկի նվազեցումը, ինչպես նաև բնակչության և շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Այս ոլորտի համար նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2009թ. բյուջետային տարվա փաստացի և 2010թ. բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N 3ա աղյուսակում (առանց վարկային ծրագրերի), իսկ պետական ոչ առևտրային կազմակերպության 2011 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ծրագրային կանխատեսվող ցուցանիշներն արտացոլված են սույն բացատրագրի N 20-9 աղյուսակում:

Գյուղատնտեսության ոլորտի համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 3956.316 մլն դրամ, 2010 թվականի պետական բյուջեով հաստատված 4307.976 մլն դրամի դիմաց:

2011 թվականի համար կանխատեսվող բյուջետային հատկացումները նախատեսվում է ուղղել Նախագծում ընդգրկված ոլորտի հետևյալ ծախսային ծրագրերին, այդ թվում՝

Գյուղատնտեսության բնագավառում հատկացումներն ուղղվելու են.

Հողերի ագրոքիմիական հետազոտությունների կատարման, բերրիության բարձրացման միջոցառումներ՝ (48.130 մլն դրամ): Սույն ծախսային ծրագրի գծով Նախագծով ամրագրված գումարը նախատեսվում է նպատակաուղղել՝ 141 համայնքներում 61490 հեկտար տարածության վրա ագրոքիմիական դաշտային հետազոտությունների, հողանմուշների և պարարտանյութերի լաբորատոր փորձաքննությունների, 141 համայնքներում ագրոքիմիական քարտեզների և մշակաբույսերի պարարտացման գիտականորեն հիմնավորված երաշխավորագրերի կազմման աշխատանքների իրականացմանը:

Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի, լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում՝ (72.1 մլն դրամ): Սույն ծախսային ծրագրի գծով կանխատեսվող գումարը նախատեսվում է նպատակաուղղել՝ բույսերի կարանտին առավել վտանգավոր վնասակար օրգանիզմների և թաքնված վարակի հայտնաբերման նպատակով 199062 հեկտար տարածության վրա դաշտային հետազոտությունների, թվով 6000 փորձանմուշների փորձաքննությունների, թունանյութերի ազդող նյութի որոշման նպատակով թվով 600 փորձանմուշների լաբորատոր փորձաքննությունների իրականացմանը:

Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում՝ (150.0 մլն դրամ): Սույն ծախսային ծրագրի գծով կանխատեսվող գումարը նախատեսվում է նպատակաուղղել՝ գյուղատնտեսական մշակաբույսերի զանգվածային տարածված և վնասակար օրգանիզմների դեմ բույսերի պաշտպանության միջոցառումներին, այդ թվում պայքար մկնանման կրծողների դեմ՝ 137259 հեկտար տարածության վրա, պայքար մորեխների դեմ՝ 4000 հեկտարի վրա, պայքար անտառի վնասատուների և հիվանդությունների դեմ՝ 4965 հեկտարի վրա, միջատասպան թունանյութի ձեռքբերում 1000 հեկտարի համար:

Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումների իրականացում:

նացում՝ (190.898 մլն դրամ): Սույն ծախսային ծրագրի գծով կանխատեսվող գումարը նախատեսվում է նպատակաուղղել՝ անասնաբուժական փորձաքննությունների, դաբաղի և խոզերի ժանտախտի սերոմոնիտորինգի, սննդի շղթայի օբյեկտներին վերաբերվող լաբորատոր փորձաքննությունների իրականացմանը և պատվաստանյութերի ու ախտորոշիչ միջոցների առաքմանը:

Նախագծով նախատեսվող գումարի աճը 2010 թ. բյուջեի համեմատ 5898.2 հազ. դրամի չափով պայմանավորված է 2011թ. նվազագույն աշխատավարձի շեմի և 2010թ. գազի սակագների բարձրացմամբ:

ՀՀ կառավարությանն առնջեր ոստիկանության անասնաբուժական կարանտինային սահմանափակումների իրականացում՝ (40,1 մլն դրամ): Սույն ծախսային ծրագրով ամրագրված գումարը նախատեսվում է նպատակաուղղել՝ հանրապետության տարածքում կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների բռնկման օջախների վերացմանը, հիվանդության հետագա տարածման կանխարգելմանը, կարանտինային սահմանափակումների իրականացմանը, բնակչության պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Պայմանագրային հիմունքներով պահպանության, անվտանգության ապահովման ծառայությունների իրականացման ծախսերի նորմատիվները սահմանվել են ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 4-ի N 625-Ն որոշմամբ:

Սերմերի որակի ստուգման և պետական սորտավորման միջոցառումներ՝ (51.1 մլն դրամ): Սույն ծախսային ծրագրի իրականացումը հնարավորություն կտա բարձրակարգ սերմերով ապահովելու գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին ու անհատներին: Նշված գումարների հաշվին նախատեսվում է իրականացնել՝ սելեկցիոն նվաճումների պետական գրանցամատյանի վարում, բույսերի նոր սորտերի նկարագրությունների և բնութագրերի կազմում, բույսերի նոր սորտերի դաշտային փորձարկումներ, բույսերի սերմերի որակի լաբորատոր հետազոտություններ և փաստաթղթավորում:

Նախագծով նախատեսվող գումարի աճը 2010թ. բյուջեի համեմատ 15.0 մլն դրամի չափով պայմանավորված է ՀՀ կառավարության 08.07.2010թ. N 933-Ն որոշմամբ, որի համաձայն «Գյուղատնտեսական հողօգտագործողներին պետական աջակցության տրամադրման համակարգում» ծրագրով 2010թ. պետական բյուջեով նախատեսված գումարից 15.0 մլն դրամը ուղղվել է նշված ծրագրին: Նման մոտեցումը կիրառվել է նաև 2011թ. համար:

Գյուղատնտեսական կենդանիների արհեստական սերմնավորման միջոցառումների իրականացում (6,3մլն դրամ): Սույն ծախսային ծրագրով ամրագրված գումարը նախատեսվում է նպատակաուղղել՝ կովերի արհեստական սերմնավորման նպատակով խորը սառեցված սերմնահեղուկի բանկի՝ 341.8 հազ. չափաբաժնի պահպանմանը:

Գյուղական խորհրդատվական ծառայությունների իրականացում` (293.1 մլն դրամ):

Ծրագրին հատկացվող գումարը նպատակաուղղվելու է ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում գործող թվով 10 ԳԱՄԿ-ների և ԳԱՀԿ-ի գործունեության միջոցով մարզերում խորհրդատվական ծառայությունների մատուցմանը:

Նախագծով նախատեսվող գումարը պայմանավորված է ՀՀ կառավարության և Համաշխարհային Բանկի միջազգային զարգացման ընկերակցության միջև 2005 թվականի հուլիսի 20-ին ստորագրված «Գյուղական ձեռնարկությունների և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման» վարկային համաձայնագրի (վարկ N 4095-AM) 4-րդ հավելվածի 3-րդ կետի «(a)» և «(b)» ենթակետերի պահանջներով:

Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին` (550.0 մլն դրամ):

Սույն ծախսային ծրագրով ամրագրված գումարի շրջանակներում նախատեսվում է ագրարային ոլորտում սերմնաբուծության բնագավառում պետական աջակցության տարբեր մեխանիզմների կիրառմամբ նպաստել հացահատիկային մշակաբույսերի տեղական արտադրության ավելացմանը և ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

Ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 971-Ն որոշմամբ, որի համաձայն նախատեսվել է սուբսիդավորման փոխարեն հողօգտագործողներին տրամադրել սերմացու: 2011թ. նախատեսվում է արտերկրից ներմուծել մինչև 800 տ և սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսություններից ձեռք բերել 900 տ էլիտային վերարտադրության սերմացու և իրականացնել շուրջ 5660 հեկտար ցանքս:

Ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագիր` (291.888 մլն դրամ):

Սույն ծախսային ծրագրով ամրագրված գումարը նախատեսվում է նպատակաուղղել հանրապետության տարածաշրջաններում աշնանացան և գարնանացան ցորենի ու գարու ցանքերի մշակության աշխատանքների բարելավման նպատակով ճյուղի զարգացման համար տնտեսական բարենպաստ միջավայրի նախադրյալների ստեղծմանը և տնտեսվարող սուբյեկտների արտադրական կարողությունների բարձրացման աջակցմանը: Ծրագիրն ընդունվել է ՀՀ կառավարության 15.03.2007թ. N 451-Ա որոշմամբ, համաձայն որի նախատեսվել է աշնանացան և գարնանացան ցորենի ու գարու 3586 տ սուպերէլիտային և էլիտային սերմերի արտադրության համար լրավճարների (սուբսիդիայի) տրամադրում, նպատակ ունենալով բարձր վերարտադրության հացահատիկային մշակաբույսերի սերմերով ապահովել հանրապետության գյուղացիական տնտեսություններին:

Սննդամթերքի լաբորատոր փորձարկումներ` (5.0 մլն դրամ):

Ծրագրի նպատակն է հանրապետությունում սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության տեսուչների կողմից սննդամթերքի արտադրության, մշակման, վերամշակման և

իրացման գծով տնտեսվարող սուբյեկտների օբյեկտներում տեսչական գործառույթներ իրականացնելու ժամանակ վերցված նմուշների լաբորատոր փորձաքննության աշխատանքների անցկացում: Ծրագրի գծով պայմանական պարտավորությունների հիմք է հանդիսանում «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքը և ՀՀ կառավարության 28.12.2006թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 5-ի N 1516-Ն և 2002 թվականի նոյեմբերի 21-ի N 1915-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1898-Ն որոշումը:

Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ (1,000.0 մլն դրամ): Ծրագրին հատկացվող գումարը նպատակամղվելու է կենդանիների վարակիչ (դաբաղ, սիբիրախտ, խոզերի ժանտախտ) և ոչ վարակիչ (բրուցելյոզ, տուբերկուլյոզ, պաստերելյոզ, էմկար և մեղուների վարատոզ) հիվանդությունների կանխատեսման և վերացման միջոցառումների իրականացման համար կենսապատրաստուկների ձեռքբերմանը և անասնաբուժական մասնագետների վարձատրությանը:

Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման աջակցություն՝ (5.8 մլն դրամ): Ծրագրին հատկացվող գումարը նպատակառուղիվելու է բուսասանիտարական վերահսկողության կատարելագործմանը, կարանտին վնասակար օրգանիզմների ներթափանցման կանխարգելմանը, արտադրվող բուսական մթերքի որակի բարձրացմանը: Նախատեսվում է 20 կարանտին վնասակար օրգանիզմների մեթոդական ուղեցույցների մշակում և տպագրություն, մասնագիտական վերապատրաստման ամենամյա դասընթացների կազմակերպում:

Հակակարկտային կայանքների տեղակայում՝ (468.0 մլն դրամ): Ծրագրին հատկացվող գումարը նպատակառուղիվելու է ՀՀ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի և Լոռու մարզերում ընդհանուր թվով 35 ռադիոնոդեմային գազագեներատորային և 32 ռեագենտային կայանքների տեղակայմանը: Ծրագիրն իրականացվում է ՀՀ կառավարության 12.11.2009թ. N 1520-Ն որոշման համաձայն:

Ներդրումներ ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հանրապետական անասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ում՝ (21.060 մլն դրամ): Ծրագրով նախատեսվում է կենսապատվաստուկները և ախտորոշիչ միջոցները անասնաբուժական նորմերին համապատասխան պահպանելու նպատակով հանրապետության 39 տարածաշրջանների անասնաբուժական լաբորատորիաները համալրել մեկական սառնարաններով:

Անտառային տնտեսության բնագավառում հատկացումներն ուղղվելու են.

Անտառայահպանական ծառայություններ՝ (708.7 մլն դրամ): Ծրագրի նպատակն է 319.0 հազ. հեկտար տարածքի վրա իրականացնել անտառային պետական ֆոնդի անտառների և անտառային տնտեսություն վարող կազմակերպությունների պահպանման աշխատանքներ:

Անտառային պետական մոնիտորինգի իրականացում (53,97 մլն դրամ): Ծրագրին հատկացվող գումարը նպատակաուղղվելու է ապօրինի հատումների ու բնափայտի տեղափոխման, իրացման և այլ բացասական գործողությունների կանխարգելման աշխատանքներին, ինչպես նաև նախատեսվում է այդ նպատակով իրականացնել համապատասխան դիտարկումներ, ուսումնասիրություններ և կատարել պետական անտառային մոնիտորինգ:

Գյուղատնտեսության ոլորտի համար 2011 թվականի նախատեսվող բյուջետային ծախսերի (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) համեմատությունը՝ 2009 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2010 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 4 աղյուսակում:

Բացի այդ, գյուղատնտեսության ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին ծրագիր

Նշված ծրագրի հիմնական նպատակն է բարելավել Հայաստանի Հանրապետության գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը:

2011 թվականին ծրագրի շրջանակներում նախատեսվում է գյուղատնտեսական արտադրանքի ապրանքաարժեքային շղթայի զարգացումը խթանելու նպատակով գյուղատնտեսական վերամշակող մասնավոր ձեռնարկություններին տրամադրել բաժնետիրական ֆինանսավորում՝ բաժնեմասը հետագայում ետ գնելու պայմանով:

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Գյուղական կարողությունների ստեղծում ծրագիր

Ծրագրի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում, ինչպես նաև ստեղծել պտղի և ընկուզեղենի արտադրության համար անհրաժեշտ ծառայությունների մատուցման նպատակով կառույց, որը գյուղաբնակների համար կապահովի ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներից օգտվելու հնարավորություն:

Ծրագիրը բաղկացած կլինի երեք բաղադրիչներից.

ա) աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը,

բ) գյուղական ենթակառուցվածք,

գ) ծրագրի կառավարում:

Նշված ծրագրի առաջին բաղադրիչի իրականացման համար կստեղծվի «Հայկական միրգ» կազմակերպությունը՝ որպես բաժնետիրական ընկերություն:

Միաժամանակ գյուղատնտեսության ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ դրամաշնորհային ծրագրերը.

ա) Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմաներին» դրամաշնորհային ծրագիր,

բ) Դանիական Թագավորության աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» դրամաշնորհային ծրագիր,

գ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Անտառների պետական մոնիթորինգի հզորացում» դրամաշնորհային ծրագիր:

Ջրային տնտեսության ոլորտի համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 8277.3 մլն դրամ՝ 2010 թվականի հաստատված պետական բյուջեի 6508.4 մլն դրամի դիմաց, որը հիմնականում պայմանավորված է ոռոգման և խմելու ջրի համակարգերի հիմնա-նորոգման աշխատանքների նախատեսմամբ, ինչպես նաև Գերմանիայի զարգացման բանկի վարկային ծրագրի գծով հիմնական գումարի մարմամբ:

2011թ. համար կանխատեսվող բյուջետային հատկացումները նախատեսվում է ուղղել Նախագծում ընդգրկված ոլորտի հետևյալ ծախսային ծրագրերին.

«Ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպություններին ֆինանսական աջակցու-թյան տրամադրում» (583.7 մլն դրամ) ծախսային ծրագիրը նախատեսվում է ոռոգում ջրառ իրականացնող կազմակերպությունների ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցության տրամադրում՝ վերջիններիս համար հաստատված սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով:

Գումարի հաշվարկման համար հիմք է հանդիսացել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2007թ. սահմանված ոռոգման ջրի սակագների հաշ-վարկները և 2010թ. վերանայված տարբերակները:

ՀՀ 2010թ. հաստատված պետական բյուջեով միջոցներ նախատեսված չեն եղել, սակայն ՀՀ կառավարության 18.03.2010թ. N249-Ս որոշմամբ ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից տրամադրվել է 583.7 մլն դրամ:

«Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» (4,679.5 մլն դրամ) ծախսային ծրագիրը նախատեսվում է ոռոգման համակարգում ստեղծված 44 ջրօգտագործողների ընկերությունների (այսուհետ՝ ՋՕԸ) ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման նպատակով պետական աջակցություն տրամադրելու համար: ՀՀ կառավարության 08.02.2007թ. «Ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» N188-Ն և 25.10.2007թ. «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցություն տրամադրելու պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու և ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 8-ի N188-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1334-Ն որոշումներով ՋՕԸ-երին ՀՀ պետական բյուջեից ֆինանսական աջակցությունը 2008թ. սկսած, տրամադրվում է առանձին ՋՕԸ-ների հետ կնքված դրամաշնորհային պայմանագրերի հիման վրա: Ընդ որում պետական ֆինանսական աջակցության չափաքանակների վերանայման գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 08.02.2009թ. N188-Ն որոշման հավելված N1-ի 5.4-րդ և 5.5-րդ կետերով:

ՀՀ 2010թ. հաստատված պետական բյուջեի նկատմամբ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված գումարի 76.5 մլն դրամի չափով նվազումը և ՀՀ կառավարության 08.02.2009թ. N188-Ն որոշմամբ հաստատված չափաքանակի նկատմամբ 1011.96 մլն դրամի չափով ավելացումը պայմանավորված է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի (2009թ.) ու ոռոգման ջրի (2007թ.) սակագների բարձրացման, ինչպես նաև ոռոգելի հողատարածքների նվազման արդյունքում ՀՀ կառավարության 08.02.2009թ. N188-Ն որոշմամբ սահմանված կարգով կատարված ճշգրտումներով:

Խմելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում՝ («Հայջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածք) 811.6 մլն դրամ:

Ծախսային ծրագրով նախատեսվող գումարը պայմանավորված է ՀՀ կառավարության 25.06.04թ. N 942-Ն և 20.11.08թ. N 1372-Ս որոշումներով, որոնց համաձայն ընկերության գործադիր մարմնի լիազորությունները կառավարման պայմանագրի հիման վրա փոխանցվել է մրցույթում հաղթող ճանաչված մասնավոր կառավարչին՝ ֆրանսիական «SAUR S. A.» կազմակերպությանը:

Վերոհիշյալ կառավարման պայմանագրի համաձայն կանխիկ դրամի բոլոր կարիքները հոգալու համար (որոնք չեն կարող ծածկվել հավաքագրված հասույթներից) կտրամադրվեն գործառնական սուբսիդիաներ կառավարչի կողմից ներկայացված համապատասխան հիմնավորումների հիման վրա:

Իսկելու ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում՝ («Նոր Ակունք» ՓԲԸ-ի սպասարկման տարածք) 370.998 մլն դրամ:

ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 370.998 մլն դրամ սուբսիդիա, որը պայմանավորված է Գերմանիայի զարգացման բանկի վարկային ծրագրի գծով հիմնական գումարի մարմամբ:

Կոլեկտորադրենաժային ցանցի մաքրում և ընթացիկ նորոգում (226.3 մլն դրամ) ծախսային ծրագրով 1045.5 կմ կոլեկտորադրենաժային ցանցի ընդհանուր երկարությունից նախատեսվում է մաքրել և վերանորոգել 174.58 կմ կամ 16.7%-ը, որի արդյունքում կանխատեսվում է գերխոնավ հողերի մակերեսը պահպանել շուրջ 19000 հա:

Կոլեկտորադրենաժային ցանցի պահպանում և շահագործում, գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշման աշխատանքներ (94.2 մլն դրամ) ծախսային ծրագրով նախատեսվում է իրականացնել.

- հանրապետության գրունտային ջրերի մակարդակների և որակի որոշում,
- կոլեկտորադրենաժային ցանցերի տեխնիկական վիճակի պահպանում և շահագործում,
- ցանցերի մաքրման և նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկման աշխատանքներ:

Ջրատեխնիկական կառույցների ուսումնասիրություններ (11.0 մլն դրամ) ծախսային ծրագրով ամրագրված գումարը նախատեսվում է ուղղել ՀՀ ջրային օրենսգրքի 86-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 08.05.03թ. «Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հսկողության և զննման կարգը հաստատելու մասին» N0 686 որոշման համաձայն՝ ՀՏԿների զննման, ջրային համակարգերի անվտանգության ապահովման, արդյունավետ օգտագործման և պահպանության ծրագրերի ուսումնասիրության և տվյալ ոլորտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ տալու նպատակով, որպես մշտապես գործող մարմին ստեղծված հանձնաժողովի գործունեության ապահովման ծախսերի ֆինանսավորմանը:

Ոռոգման համակարգերի հիմնանորոգում (1065.0 մլն դրամ) ծրագրով նախագծում միջոցների նախատեսումը պայմանավորված է ԱՄՆ-ի Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի և ՀՀ կառավարության միջև վավերացված Հազարամյակի մարտահրավեր

Համաձայնագրի համաձայն, ըստ որի Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է իրականացնել ոռոգման համակարգերի ամենամյա նորոգումներ:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում (435.0 մլն դրամ) ծրագրով նախատեսվում է խմելու ջրի ջրամատակարարման բարելավման աշխատանքների իրականացում Արագածոտնի, Շիրակի և Արմավիրի մարզերում:

Ջրային տնտեսության ոլորտի 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվող ծախսերի (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) համեմատությունը՝ 2009 թվականի բյուջետային տարվա փաստացի, 2010 թվականի հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 5 աղյուսակում:

Բացի այդ, 2011 թվականին ջրային տնտեսության ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.

Գերմանիայի զարգացման վարկային Բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի (Գյումրի) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագիր՝ երկրորդ փուլ

Երկրորդ փուլում նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում ամբողջությամբ կավարտվի Գյումրի քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները, որի շնորհիվ քաղաքում կապահովվի 24 ժամյա ջրամատակարարման ռեժիմ: Գյուղերում կկառուցվի 3 և կվերանորոգվեն 7 ջրամբարներ, կիրականացվի Զույգաղբյուր կապտաժների վերանորոգում :

Ծրագրի շրջանակներում բուն շինարարական աշխատանքները նախատեսված է սկսել 2011 թվականից:

Գերմանիայի զարգացման վարկային Բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու (Վանաձոր) մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման վարկային ծրագիր՝ երկրորդ փուլ

Նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում ամբողջովին կավարտվի Վանաձոր քաղաքի մնացած 70% ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքները և քաղաքում ամբողջովին կապահովվի 24 ժամյա ջրամատակարարում: Կկառուցվեն ջրամբարներ Ամրակից, Ձորագետավան, Անտառամուտ գյուղերում, կիրականացվի Նովոսելցովայի կապտաժների վերանորոգում և այլն :

Ծրագրի շրջանակներում բուն շինարարական աշխատանքները նախատեսված է սկսել 2011 թվականից:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր (Երևան համայնքի ղեկավարին պետության կողմից պատվիրակված լիազորություն)

Ծրագրի նպատակն է Երևան քաղաքին ապահովելու շուրջօրյա հուսալի ջրամատակարարմամբ՝ միաժամանակ նվազեցնելով կեղտաջրերի բացթողումներից առաջացող շրջակա միջավայրի աղտոտումը, այսինքն՝ քաղաքի ընդհանուր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի սկսած բարելավումների շարունակական իրականացում և ընդհանուր արդյունավետության բարձրացում:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում «Երևան Ջուր» ՓԲ ընկերության կողմից նախատեսվել է կատարել ներդրումային աշխատանքներ էլեկտրաէներգիայի խնայողության և ջրաքանակի ավելացման նպատակով, մասնավորապես՝ Արզնի ջրաղբյուրների և ջրատարի ներկայումս գոյություն ունեցող ջրաղբյուրներից վերցվող ջրաքանակի ավելացում, Գառնու ջրաղբյուրների, Արզականի և Գողթի կապտածիների վերանորոգում :

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորման ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ խմելու ջրի նկատմամբ բնակչության աճող պահանջների բավարարումը, ջրմուղ-կոյուղու կազմակերպությունների առավել արդյունավետ կառավարումը, համակարգի հետագա փլուզման կանգնեցումը և վիճակի բարելավումը, կառուցվածքային բարեփոխումների միջոցով արդյունավետ կառավարումը, ջրամատակարարման ժամերի ավելացումը մինչև անցում շուրջօրյա ջրամատակարարման, ջրի օգտագործման հաշվառման կազմակերպումը, ծախսվող էլեկտրաէներգիայի կրճատումը, համակարգի ֆինանսական վիճակի առողջացումն ու մասնավոր ներդրողների համար գրավիչ պայմանների ստեղծումը:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում շարունակվելու է գլխամասային կառուցվածքների, ջրատարների, ջրի մաքրման կայանների (ՋՄԿ), օրվա կարգավորող ջրամբարների (ՕԿՁ) բաշխիչ ցանցերի վերանորոգման և գոտիավորման ու նորերի կառուցման, հոսակորուստների հայտնաբերման և վերացման, կապտածիների, ՋՄԿ-ների վերանորոգման, քլորակայանների վերանորոգման, նոր սարքավորումների տեղադրման, նոր քլորակայանների կառուցման, բնակավայրերում կոյուղու ցանցերի վերանորոգման, հնարավորության դեպքում պոմպային համակարգերի ինքնահոսի փոխարինման, պոմպերի փոխարինման, բնակավայրերի ցանցերի գոտիավորման միջոցով շենքային պոմպերի կրճատման, ջրաչափերի տեղադրման, լաբորատորիաների, մեքենասարքավորումների, համակարգիչների,

ստուգիչ-չափիչ սարքավորումների և անհրաժեշտ գույքի գնման, ուսուցողական ու հասարակական տեղեկատվությունների կազմակերպման աշխատանքների իրականացումը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ Սևանա լճի և լճի հարակից շրջաններում գտնվող 5 քաղաքային համայնքներից Սևանա լճի ներհոսող կեղտաջրերի մաքրման ու վերամշակման, կեղտաջրերի մաքրման կայանների տեղադրման, ինչպես նաև տարածքներով անցնող ջրահեռացման խողովակների վերանորոգման և փոխարինման միջոցով բնապահպանական խնդիրների բարելավումը, որոնց շրջանակներում 2011 թվականին նախատեսվում է շարունակել հիմնական շինարարական աշխատանքները:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագիր :

Ծրագրի նպատակն է համայնքային ջրամատակարարման ենթակառուցվածքների վերանորոգումը, ջրահեռացման համակարգերի և շրջակա միջավայրի բարելավումը, որի շրջանակներում 2011 թվականին նախատեսվում է մի շարք մարզերում շարունակել իրականացնել ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման գծով շինարարական աշխատանքներ, ինչպես նաև կրճատել ջրի կորուստները և բարելավել ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների որակը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Ռոռգման համակարգերի վերականգնման հրատապ ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ վերականգնել Թալինի և Արմավիրի ռոռգման համակարգերի գլխավոր ջրանցքները և շարունակել ռոռգման ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումները: Ծրագիրը կաջակցի ՋՕԸ-ների աջակցման խմբին, ՋՕԸ-ների կառուցվածքային հզորացման ուժեղացմանը, կիրականացվի ջրօգտագործողներին փորձնական միության ստեղծում: 2011 թվականին նախատեսվում է շարունակել Թալինի և Արմավիրի ռոռգման համակարգերի գլխավոր ջրանցքների վերականգնման գծով շինարարական աշխատանքները, ընդլայնել նախկինում իրականացված ինստիտուցիոնալ բարեփոխումները:

Աբու-Դաբիի Զարգացման հիմնադրամի աջակցությամբ իրականացվող Արփա-Սևան թունելի հիմնանորոգման ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ գետերից ջրի մակարդակի բարձրացման և բնապահպանական կայունության պահպանման նպատակով, Սևանա լիճ ջուր տեղափոխող 48.8 կմ երկա-

րությամբ Արփա-Սևան թունելի որոշ հատվածների վերականգնում, վերանորոգում և շինարարություն:

2011 թվականին նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները՝

- Արփա-Սևան թունելի հիմնանորոգման աշխատանքներ,
- «ՈԱՍԹՇՎ» պետական հիմնարկի պահպանում,
- Որոտան-Արփա-Սևան թունելների պահպանում և շահագործում:

Միաժամանակ ջրային տնտեսության ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել՝

1) Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագիրը,

2) Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի, ՀՀ Լոռու և ՀՀ Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագիրը,

3) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագիրը,

4) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնավոր համագործակցություն» դրամաշնորհային ծրագիրը,

5) Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող «Ինժեներիա, նախագծում և պայմանագրերի վերահսկողություն» դրամաշնորհային ծրագիրը:

ՀՀ էներգետիկայի ոլորտի համար (առանց նպատակային վարկային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 67.1 մլն դրամ՝ 2010 թվականի բյուջեով հաստատված 85.9 մլն դրամի դիմաց, որը հիմնականում պայմանավորված է՝ **«ՀՀ նոր միջուկային էներգաբլոկի (էներգաբլոկների) շինարարության ծրագրերի իրականացման նպատակով կառավարման ծառայությունների պետական գնում»** ծախսային ծրագրի ավարտմամբ և **«Ռադիոակտիվ թափոնների վնասագերծում» ՓԲԸ-ի** համար ռադիոակտիվ թափոններ տեղափոխող մեքենայի ձեռքբերմամբ ու **«Սևանա լճի ջրահավաք ավազանում հանրավայրերի շահագործման արդյունքում կուտակված թափոնների գույքագրման ծառայություն»** ծախսային ծրագրի ավելացմամբ:

2011թ. համար կանխատեսվող բյուջետային հատկացումները նախատեսվում է ուղղել Նախագծում ընդգրկված ոլորտի հետևյալ ծախսային ծրագրերին, այդ թվում՝

→ **ՀՀ Էներգետիկայի ոլորտի «Ռադիոակտիվ թափոնների վնասագրծման ծառայություններ»** ծախսային ծրագրի իրականացման համար Նախագծով նախատեսվել է հատկացնել՝ **43.1** մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ միջուկային և ճառագայթային անվտանգության նորմերի ու կանոնների պահպանմամբ ռադիոակտիվ թափոնների կենտրոնացված փոխադրում, ուսումնասիրում, պահպանում, վնասագրծում, թաղում՝ մարդկանց և շրջակա միջավայրի իոնացնող ճառագայթման վնասակար ազդեցությունից պաշտպանելու համար:

→ **Բնական պաշարների կառավարման ոլորտի «Երկրաբանահետախուզական աշխատանքների աջակցման ծառայություն»** ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ **8.0** մլն դրամ:

Նշված հատկացումների հաշվին նախատեսվում է իրականացնել ծրագրային հետևյալ միջոցառումները՝

↪ «ՀՀ տարածքի էկզոգեն (արտածին) երկրաբանական պրոցեսների (սողանքների) մոնիտորինգի վարում և դրանց կադաստրի կազմում»՝ 4.0 մլն դրամ,

↪ «ՀՀ պինդ օգտակար հանածոների հանքավայրերի վերաբերյալ կոմպյուտերացված տեղեկատվական համակարգի ստեղծում»՝ 4.0 մլն դրամ,

Ծրագրի իրականացման նպատակն է՝ ընդերքի պահպանության, արդյունավետ օգտագործման ու վերարտադրության ապահովում:

→ **Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի «Սևանա լճի ջրահավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում կուտակված թափոնների գույքագրման ծառայություն»** ծախսային ծրագրի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ **10.0** մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Սևանա լճի վրա արտադրական թափոնների բացասական ազդեցության գնահատման, կանխատեսման և հետևանքների վերացման միջոցառումների մշակում:

→ **Բնական պաշարների կառավարման ոլորտի «Ընդերքի մասին տեղեկատվության տրամադրման ծառայություն»** ծախսային ծրագիրը շարունակական է, որի իրականացման համար Նախագծով նախատեսվել է՝ **6.0** մլն դրամ:

Ծրագրի իրականացման նպատակն է՝ Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին երկրաբանական և այլ տեղեկատվության պահպանությունը:

Այս ոլորտի Նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ 2009թ. բյուջետային տարվա փաստացի և 2010թ. հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված են սույն բացատրագրի N 6 աղյուսակում (առանց վարկային ծրագրերի և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Բացի այդ, 2011 թվականին էներգետիկայի ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Քաղաքային ջեռուցման ծրագիր

Ծրագրի նպատակն է՝ մեծացնել մաքուր, արդյունավետ, ապահով և մատչելի ջեռուցման տեխնոլոգիաների օգտագործումը քաղաքային դպրոցներում և բազմաբնակարան շենքերում:

Ծրագրի շրջանակներում 2011 թվականին կատարվելու են դպրոցների ջեռուցման (9 հատուկ դպրոցներում ջեռուցման համակարգերի և դպրոցների շենքերի կապիտալ ջերմամեկուսացման համակարգի ապահովում), ինչպես նաև իրականացվելու է ծրագրի առկայիս:

Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող Համակցված շոգեգազային ցիկլով էներգաբլոկի կառուցման ծրագիր

Ծրագրի նպատակն է օժանդակել Հայաստանի էներգահամակարգի արտադրող էլեկտրակայանների արդիականացմանը, որը կնպաստի ՀՀ տնտեսության զարգացմանը: Ծրագրի շրջանակներում նախատեսված է «Երևան ՋԷԿ» ՓԲԸ-ում 271.7 Մվտ ընդհանուր դրվածքային և 241.9 Մվտ դրվածքային էլեկտրական հզորությամբ համակցված շոգեգազային ցիկլով բնական գազով աշխատող նոր էներգաբլոկի կառուցում՝ որը զբաղեցնում է Երևանի ՋԷԿ-ին հարակից տարածքում 4 հա տարածք: 2010թ. էներգաբլոկը հանձնվել է շահագործման և այժմ գտնվում է ետերաշխիքային սպասարկման ժամանակահատվածում:

2011 թվականին նախատեսվում է նախագծի խորհրդատուին կատարել խորհրդատվական ծառայությունների համար նախատեսված ծախսերի վճարումներ:

Գերմանիայի զարգացման վարկային բանկի աջակցությամբ իրականացվող «Գյումրի-2» ենթակայանի վերականգնման ծրագիր

Ծրագրի նպատակն է վերականգնել «Գյումրի-2» 220 կվ ենթակայանը: Վերականգնման արդյունքում կբարձրանա ենթակայանի, ինչպես նաև էներգահամակարգի աշխատանքի հուսալիությունը:

2011 թվականին ծրագրի շրջանակներում նախատեսվում է կատարել ընթացիկ և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր՝ ուղղված խորհրդատվական ծառայությունների վճարմանը և ենթակայանի օբյեկտների կառուցմանը, վերանորոգմանն ու արդիականացմանը:

Միաժամանակ էներգետիկայի ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել՝

ա) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Վերականգնվող էներգետիկայի դրամաշնորհային ծրագիրը,

բ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Էլեկտրամատակարարման հուսալիության և էներգախնայողության դրամաշնորհային ծրագիրը,

գ) Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Երկրաջերմային էներգիայի դրամաշնորհային ծրագիրը:

Տրանսպորտի և կապի ոլորտին 2011 թվականի պետական բյուջեի նախագծով (առանց վարկային ծրագրերի և պետական կառավարման ապարատի) նախատեսվում է հատկացնել 18073.9 մլն դրամ՝ ՀՀ 2010թ. հաստատված պետական բյուջեի 16713.5 մլն դրամի դիմաց, որից 14115.5 մլն դրամը ուղղվելու է ընթացիկ ծախսերին, իսկ 3958.5 մլն դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերին:

2011թ. ոլորտին հատկացված միջոցները ուղղվելու են հետևյալ ծրագրերի իրականացմանը, որոնք հիմնականում համապատասխանում են «ՀՀ 2011-2013թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.07.2010թ. N 859-Ն որոշմամբ 2011թ. համար հաստատված կողմնորոշիչ չափաքանակներին:

«Ավտոճանապարհների պահպանում և շահագործում» ծրագրի իրականացման համար ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 5510.4 մլն դրամ: Նշված ծրագրով նախատեսվում է իրականացնել 3166.7 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և ձմեռային պահպանության, նշագծման աշխատանքները, ինչպես նաև մի շարք կամուրջների և թունելների շահագործումը: Ծախսերը ՀՀ 2010թ. պետական բյուջեի համեմատությամբ նվազել են 15.1 մլն դրամով, որը պայմանավորված է Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն՝ պետական ոչ առևտրային կազմակերպության ծախսերի կրճատման հետ:

«Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում» ծրագրով նախատեսվում է իրականացնել 4238.7 կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանության, ինչպես նաև ճանա-

պարհների ընթացիկ նորոգման աշխատանքները, որոնց իրականացման համար ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 760.0 մլն դրամ:

2011թ. նախատեսվում է իրականացնել նոր ծրագիր՝ Հայաստանի Հանրապետության միասնական երթուղային ցանցի մշակման ու զարգացման, ուղևորահոսքի մշտական ուսումնասիրության, միջպետական և միջմարզային երթուղիների չվացուցակների և սխեմաների նախագծերի մշակման և կատարելագործման, փոխադրման ինքնարժեքի հաշվարկման, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության կտրոնի և տեխնիկական զննության անցկացման ամիսը նշագրող թերթիկների տպագրման պատվիրատուի և դրանց պահպանման, հաշվառման ու տեխնիկական զննության կայաններին տրամադրման գործառույթների իրականացման, տեղեկատվական բանկի վարման և այլ կանոնադրական խնդիրների իրագործման նպատակով: Նոր ձևավորվող «Տրանսպորտային փոխադրումներ» ՊՈԱԿ-ին 2011 թվականին կհատկացվի 41.5 մլն դրամ: Ինչպես նաև երկաթուղով ուղևորափոխադրումներից առաջացած վնասի փոխհատուցման նպատակով նախատեսվում է ՀՀ պետական բյուջեից վճարել 167.0 մլն դրամի սուբսիդիա:

Բացի այդ, տրանսպորտի ոլորտում 2011 թվականին նախատեսվում է իրականացնել նաև հետևյալ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերը.

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղական ճանապարհների վերականգնման ծրագիր

Ծրագրի նպատակն է վերականգնել կենսական նշանակություն գյուղական ճանապարհները, որոնք հիմնական մայրուղիները կապում են մարզկենտրոնների հետ:

2011 թվականին նախատեսվում է վերականգնել Անտառամեջ - Ձորավանք - Դպրաբակ - Այգուտ - Մարտունի - Գետիկ - Թթուջուր - Ճամբարակ - Աղբերք - Մ14 ավտոճանապարհի կմ 15+240 - կմ48+800 Դպրաբակ-Աղբերքի խչմ. հատվածը (Գեղարքունիքի մարզ) 33.5կմ երկարությամբ: Վերջինս բաժանված է 6 առանձին տեղամասերի:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է սկսել 2010 թվականի հոկտեմբերին և ավարտել 2011 թվականի օգոստոսի 31-ին:

2011 թվականին պետք է ուսումնասիրվի նաև ճանապարհների վերականգնման ազդեցությունը գյուղական բնակչության սոցիալական վիճակի վրա, տրանսպորտային հոսքերի փոփոխությունը, երթուղիության ինտենսիվությունը և միջին արագությունը վերականգնված ճանապարհներին և այլն:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհների բարելավման լրացուցիչ ծրագիր

Ծրագիրը հանդիսանում է Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ծրագրի շարունակությունը, որի նպատակը ևս կենսական նշանակության ավտոճանապարհային ցանցի վերականգնման ուղղությամբ աշխատանքների իրականացումն է և խորհրդատվական ծառայությունների տրամադրումը, ինչպես նաև տեխնիկական աջակցության տրամադրումը:

2011 թվականին նախատեսվում է շուրջ 82 կմ շինարարական աշխատանքների պահված ետավարտական երաշխիքային գումարների վճարումներ, ինչպես նաև վճարումներ ետավարտական պատասխանատվության ժամկետի ընթացքում իրականացվելիք տեխնիկական վերահսկողության համար, ծրագրի իրականացման ծախսեր, ներառյալ ծրագրի աուդիտը և ճանապարհների երկրաբանատեղեկատվական համակարգի գնումը:

Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կենսական նշանակության ճանապարհների բարելավման երկրորդ լրացուցիչ ծրագիր

Ծրագրի նպատակն է բարելավել կենսական նշանակության ճանապարհային ցանցի ընտրված հատվածները և ստեղծել ճանապարհաշինարարության ոլորտում ժամակա-նավոր զբաղվածություն:

2011 թվականին նախատեսվում է իրականացնել շուրջ 140 կմ երկարությամբ ճանապարհների վերականգնման աշխատանքներ, 2010 թվականին իրականացվելիք շուրջ 50 կմ շինարարական աշխատանքների պահված ետավարտական երաշխիքային գումարների վճարումներ (1-ին բաղադրիչ):

Ծրագրի 1-ին բաղադրիչով նախատեսվում է ճանապարհների վերանորոգման տեխնիկական հսկողության, ճանապարհների հեղինակային հսկողության, անկախ տեխնիկական աուդիտ, ինչպես նաև ծրագրի իրականացման ծախսեր, ներառյալ ծրագրի աուդիտը:

Ծրագրի 2-րդ բաղադրիչով նախատեսվում է

- հետագա ծրագրի ճանապարհների նախագծում և ԲԿՊ (բնապահպանական կառավարման պլան) մշակում
- ճանապարհների նոր երկրաչափական ստանդարտների մշակում
- թունելների վերականգնման տեխնիկատնտեսական հիմնավորում և նախագծում
- վերապատրաստման և ուսուցման ծախսեր
- ճանապարհների տվյալների հավաքագրման համակարգի գնում:

Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի զարգացման ծրագիր

Ծրագրի նպատակն է Երևան-Աշտարակ չորս շերտանի ճանապարհի մոտ 18.4 կմ հատվածի վերակառուցումը և անվտանգության բարձրացումը, վերահսկողության վերաբերյալ խորհրդատվությունը, ինչպես նաև տրանսպորտային ոլորտի ռազմավարության ներքո ճանապարհային ենթասեկտորային ծրագրին օժանդակության տարամադրումը :

2011 թվականին նախատեսվում են հետևյալ աշխատանքները.

ա) Տրանշ 1-ի կապալառուի ընտրությունը և կանխավճարի վճարումը (2011 թվականի ապրիլ ամսվանից իրականացվելու են շինարարական աշխատանքները):

բ) 2-րդ տրանշի՝ Աշտարակ – Թալին 44 կմ երկարությամբ հատվածի շինարարությունը՝ երկշաքքանի ճանապարհը վերակառուցելով չորսշաքքանիի.

գ) Մինչև 2011 թվականի ավարտը 3-րդ տրանշի՝ Թալին – Գյումրի ճանապարհային հատվածի, վարկային պայմանագրի ստորագրումը:

Կառուցվելու են նաև հենապատեր, շուրջ 30 արհեստական կառույցներ, այդ թվում՝ ուղեանցեր և կամուրջներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի և Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի մետրոպոլիտենի վերականգնման ծրագրեր

Ծրագրերի նպատակն է վերականգնել Երևանի մետրոպոլիտենի վթարային վիճակը: 2011 թվականին նշված ծրագրերի շրջանակներում նախատեսվում են իրականացնել հետևյալ միջոցառումները՝

ա) շարժակազմի սայլակների նորացում,

բ) մաշված երկաթուղագծի և էլեկտրամատակարարման համակարգերի բաղադրատարրերի վերանորոգում,

գ) տեխնիկական սպասարկման գնացքի ձեռքբերում և պոմպակայանների փոխարինում, որը ուղղված է ջրի ներթափանցման խնդիրը մեղմացնելուն:

Այս ներդրումների շնորհիվ կբարելավվեն մետրոյի ուղեգծի անվտանգ շահագործումը:

Միաժամանակ 2011 թվականին Համաշխարհային բանկի աջակցությամբ տրանսպորտի ոլորտում նախատեսվում է իրականացնել նաև Հայաստանի ճանապարհային անվտանգության քարտուղարություն հիմնադրելու դրամաշնորհային ծրագիրը:

«ՀՀ համայնքային բյուջեներին նպատակային հատկացումների սուբվենցիաների տրամադրում» ծրագրով ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 5256.0 մլն դրամ, որից

- 3284.0 մլն դրամը նախատեսվում է ուղղել Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների ֆինանսավորմանը,

- 1696.0 մլն դրամը նախատեսվում է ուղղել Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների ֆինանսավորմանը,

- 276.0 մլն դրամը նախատեսվում է հատկացնել «Երևանի էլեկտրատրանսպորտ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ վերջինիս կողմից նվազագույն շահավետ գնից ցածր գնով ծառայությունների մատուցման արդյունքում ընկերության կրած վնասի փոխհատուցման նպատակով:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքված համաձայնագրերի համաձայն ՀՀ-ում տեղակայված Ռուսաստանի Դաշնության զորամիավորումների հասցեով ՀՀ տարածքում երկաթուղով իրականացվող միջպետական ռազմական փոխադրումների, ՀՀ երկաթուղային կայարաններում կատարվող սպասարկումների ու մատուցվող ծառայությունների ծախսերն այդ սպասարկումները կատարող և ծառայությունները մատուցող կազմակերպություններին փոխհատուցելու նպատակով ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 13.7 մլն դրամ:

ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքված համաձայնագրերի համաձայն ՀՀ-ում տեղակայված Ռուսաստանի Դաշնության զորամիավորումների հասցեով ռազմական փոխադրումներ իրականացնող օդանավերի՝ ՀՀ օդանավակայաններում իրականացվող սպասարկումների ու մատուցվող ծառայությունների ծախսերն այդ սպասարկումներն իրականացնող և ծառայությունները մատուցող կազմակերպություններին փոխհատուցելու նպատակով ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 121.0 մլն դրամ:

«Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվում է իրականացնել ՀՀ Նախագահի հանձնարարականներով, ՀՀ 2011-2013 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով նախատեսված, ինչպես նաև առաջնահերթ վերականգնման կարիք ունեցող ճանապարհահատվածների հիմնանորոգման աշխատանքներ, որի համար ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 3,775.0 մլն դրամ: «Տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրով նախատեսվում է իրականացնել տեխնիկական անբավարար վիճակում կամուրջների հիմնանորոգման աշխատանքներ, որի համար ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 183.5 մլն դրամ:

«Հեռահաղորդակցության և կապի կանոնակարգման ծառայություններ» ծրագրով ՀՀ կառավարության 06.10.2005թ. «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ ստեղծելու մասին N1807-Ն որոշման համաձայն «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի պահպանման համար ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախա-

տեսվում է հատկացնել 400.8 մլն դրամ: Ծրագրի նպատակն է ապահովել Հայաստանի Հանրապետությունում հեռահաղորդակցության և կապի ծառայությունների որակի կանոնակարգումն ու բարելավումը: Ծախսերը 2010թ. հաստատված բյուջեի համեմատությամբ ավելացել են 0.8 մլն դրամով, որը պայմանավորված է «Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի եկամուտների և ծախսերի նախահաշվից «Էներգիա» (այդ թվում՝ ջեռուցման գազ) հողվածով նախատեսված գումարի ավելացմամբ:

«Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպման բնագավառում պետության կողմից համայնքի ղեկավարին պատվիրակված լիազորությունների իրականացման ֆինանսավորում» ծրագրով ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել.

Ընթացիկ ծախսերի գծով 1845.0 մլն դրամ՝ «Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության կողմից նվազագույն շահավետ գնից ցածր գնով ծառայությունների մատուցման արդյունքում ընկերության կրած վնասի փոխհատուցման նպատակով:

Սկսած 2010թ.-ից համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ՝ «Քաղաքապետի լիազորությունները» հողվածի քաղաքապետը տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում, որպես պատվիրակված լիազորություն, իրականացնում է Երևանի մետրոպոլիտենի աշխատանքների կազմակերպումը, որով և պայմանավորված է վերոհիշյալ ծրագրով գումարների նախատեսումը:

Այս ոլորտում 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի համեմատությունը՝ ՀՀ 2009թ. բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2010թ. հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 7 աղյուսակում:

Բնապահպանության ոլորտում ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով (առանց նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում ստացվող միջոցների և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի) նախատեսվել է հատկացնել 887.9 մլն դրամ՝ ՀՀ 2010 թվականի հաստատված պետական բյուջեի 1,011.17 մլն դրամի դիմաց, որը հիմնականում պայմանավորված է տարբեր ծրագրերի ավարտման, ինչպես նաև Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման նպատակով նախատեսված ֆինանսավորման ծավալների նվազմամբ: Ոլորտին հատկացված միջոցներն ուղղվելու են ընթացիկ ծախսերի գծով հետևյալ ծրագրերի իրականացմանը:

Թափոնների ուսումնասիրության ծառայությունների համար նախագծով նախատեսվել է 10.227 մլն դրամ,

Հանրապետության ջրային օբյեկտների և օդային ավազանի աղտոտվածության վիճակի մոնիտորինգի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 112.31 մլն դրամ:

Ձկան պաշարների համայրման համար նախատեսվել է 60.0 մլն դրամ:

Սևանա լճի ջրածածկ անտառտնկարկների մաքրման նպատակով նախատեսվել է 125.4 մլն դրամ, 2010թ. հաստատված պետական բյուջեի 257,4 մլն դրամի դիմաց: Տինանսավորման ծավալների նվազումը պայմանավորված է 2010 թվականի 3-րդ եռամսյակում գնված «Վոթերմաստեր կլասիկ III» տիպի ֆիննական արտադրության ջրածածկ և ճահճացած տարածքներում աշխատելու համար նախատեսված հատուկ հողահան բազմաֆունկցիոնալ էքսկավատորի գնման հետ, որի շահագործումը 2011թվականին հնարավորություն կտա մաքրման աշխատանքներն իրականացնել ավելի փոքր ծախսերով: Ծրագրավորվող տարում նախատեսվում է 600 հա ջրածածկ անտառտնկարկների մաքրում:

Սևանա լճում և նրա ջրհավաք ավազանում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայությունների նպատակով նախատեսվել է 7.526 մլն դրամ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեությունն ապահովելու համար նախատեսվում է 491.1 մլն դրամ, 2010թ. հաստատված պետական բյուջեի 482.0 մլն դրամի դիմաց: Վերոգրյալ հատկացումների շրջանակներում «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկերում, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետական արգելոցներում, «Մոսու» ու «Զանգեզուր պուրակ» արգելավայրերում, ինչպես նաև «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում կատարվելու են բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման դիտանցի ապահովումը, ինչպես նաև տնկարկների պահպանության և պաշտպանության իրականացումը:

«Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնման ծառայություններ» նոր ծրագրի իրականացման նպատակով նախագծով նախատեսվել է 15.0 մլն դրամ՝ Սևանա լճի շրջակայքում նոր անտառաշերտի հիմնման ծրագրի մշակման համար, որը հիմք է ծառայելու հետագա տարիներին Սևանա լճի շրջակայքում անտառվերականգնման աշխատանքների ծրագրավորման և իրականացման համար:

Բնապահպանական ոլորտի գծով վերլուծական-տեղեկատվական ծառայությունների իրականացման համար նախատեսվել է 16.9 մլն դրամ:

ՀՀ տարածքի ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական մոնիտորինգի վարման աշխատանքների իրականացման նպատակով նախատեսվել է 18.1 մլն դրամ:

Բնապահպանական ծրագրերի մշակման և իրականացման ծառայությունների համար նախատեսվել է 31.1 մլն դրամ:

Միաժամանակ 2011 թվականին շարունակվելու է բնապահպանության ոլորտում Գերմանիայի զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Հարավային Կովկասի (Աշոցքի տարածաշրջան) բնապահպանական դրամաշնորհային ծրագիրը, այդ թվում ծրագրի ավարտական տարում նախատեսվում է ավարտել «Արփի լիճ» ազգային պարկի վարչական շենքի, այցելուների կենտրոնի և հյուրատան շինարարական աշխատանքները, ազգային պարկի ստեղծման համար անհրաժեշտ այլ ենթակառուցվածքների կառուցումը կամ ձեռքբերումը, իրականացնել հարակից համայնքների տնտեսական զարգացմանը /սպանդանոցների, հումքի վերամշակման, մեղվապահության և այլ օբյեկտների ստեղծման/, այդ համայնքներում ենթակառուցվածքների զարգացմանը նպատակաուղղված այլ աշխատանքներ:

Այս ոլորտում ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2009թ. բյուջետային տարվա փաստացի, ինչպես նաև ՀՀ 2010թ. հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 8 աղյուսակում (առանց վարկային ծրագրի և պետական կառավարման ապարատի պահպանման ծախսերի):

Հիդրոոդերևութաբանության ոլորտում հիդրոոդերևութաբանական ծառայությունների իրականացման համար նախատեսվել է 533,6 մլն դրամ, որի հաշվին իրականացվելու է ՀՀ պետական իշխանության մարմիններին, ազգաբնակչությանը, տնտեսության տարբեր ճյուղերին հիդրոոդերևութաբանական փաստացի պայմանների և դրանց սպասվող փոփոխությունների, կլիմայի ներկա և հետագա վիճակի վերաբերյալ տեղեկատվությամբ ապահովումը:

Այս ոլորտում ՀՀ 2011թ. պետական բյուջեի նախագծով նախատեսված բյուջետային ծախսերի համեմատությունը 2009թ. բյուջետային տարվա փաստացի և ՀՀ 2010թ. հաստատված պետական բյուջեի համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 8-ա աղյուսակում:

Քաղաքաշինության ոլորտում ներկայացված են 2011 թվականի համար նախատեսված կապիտալ շինարարության, շինվերանորոգման աշխատանքների, քաղաքաշինության գնագոյացման դաշտի ձևավորման, ՀՀ հանրակրթական դպրոցների, մարզադպրոցների

հիմնանորոգման, շինարարության և բարելավման, բնակարանաշինության, մշակութային օբյեկտների հիմնանորոգման և վերականգնման ծրագրեր:

Այս ոլորտում 2011 թվականի հատկացումները նախատեսվել են՝ հիմնվելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ 2011-2013 թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրի, այլ համապատասխան օրենսդրական և իրավական ակտերի վրա:

Շինարարության բնագավառում 2011 թվականի ընթացքում կարևորվում է կրթական, մարզական և մշակութային օբյեկտների կառուցման, հիմնանորոգման և վերակառուցման աշխատանքների շարունակական բնույթի ապահովումը, ինչը կնպաստի կրթական համալիրի վերազինմանը, ուսման, մշակութային, մարզական կյանքի և անհրաժեշտ ծառայությունների մատուցման մակարդակի էական բարձրացմանը: Գոյություն ունեցող պարտավորությունների շրջանակներում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային ապահովման ծրագրերը 2011 թվականի ընթացքում ևս կկրեն շարունակական բնույթ, ապահովելով աղետի գոտում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարությունը:

ՀՀ կառավարության ստանձնած պարտավորություններն ապահովելու համար քաղաքաշինության բնագավառի 2011 թվականի համար քաղաքականության հիմնական ուղղություններն ու գերակայություններն են՝

- (i) Կրթական հաստատությունների հիմնանորոգման և բարելավման ծրագրերի իրականացումը,
- (ii) Մշակութային հաստատությունների և օբյեկտների հիմնանորոգման ու բարելավման ծրագրերի իրականացումը,
- (iii) Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովումը:

2011 թվականին այս բնագավառի գծով նախատեսվում է 37,643.5 մլն դրամի ծախսեր՝ 2010 թվականի համար հաստատված 31,054.8 մլն դրամի դիմաց: Հատկացվող միջոցների հաշվին նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.

1. Կրթական հաստատությունների օբյեկտների հիմնանորոգման և բարելավման համար նախատեսվել է 7,936.2 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 4,650.8 մլն դրամի դիմաց: Հատկացումները կրկին կնպատակառոտվեն հանրակրթական և ավագ դպրոցների, միջին մասնագիտական կրթության օբյեկտների և մարզադպրոցների շենքերի ամբողջական հիմնանորոգման և կառուցման աշխատանքներին: Մասնավորապես 2011 թվականին նախատեսվում է՝

- (i) «Կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի գծով 5,464.5 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 3,161.6 մլն դրամի դիմաց,
- (ii) «Կրթական օբյեկտների շինարարություն» ծրագրի գծով 675.5 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 948.7 մլն դրամի դիմաց,
- (iii) «Ավագ դպրոցների հիմնանորոգում» ծրագրի գծով 1,196.4 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 167.5 մլն դրամի դիմաց,
- (iv) «Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հիմնանորոգում» ծրագրի գծով 86.5 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված ցուցանիշի չափով ,
- (v) «Հատուկ կրթական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի գծով 257.2 մլն դրամ,
- (vi) «Նախագծային աշխատանքներ» ծրագրի գծով 6.0 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 38.9 մլն դրամի դիմաց,
- (vii) «Մարզական օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի գծով 60.0 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 197.1 մլն դրամի դիմաց,
- (viii) «Մարզական օբյեկտների շինարարություն» ծրագրի գծով 190.0 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 50.5 մլն դրամի դիմաց:

2. Մշակութային հաստատությունների և օբյեկտների հիմնանորոգման ու բարելավման գծով նախատեսվել է 1,355.0 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 1,353.8 մլն դրամի դիմաց: Հատկացումները կնպաստակառուղիվեն մշակութային կենտրոնների, գրադարանների, թանգարանների և թատրոնների շենքերի ամբողջական հիմնանորոգման ու կառուցման, ինչպես նաև հուշարձանների վերականգնման աշխատանքներին: Մասնավորապես 2011 թվականին նախատեսվում է՝

- (i) «Մշակութային օբյեկտների հիմնանորոգում» ծրագրի գծով 995.4 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 1059.3 մլն դրամի դիմաց,
- (ii) «Մշակութային օբյեկտների շինարարություն» ծրագրի գծով 124.6 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 81.1 մլն դրամի դիմաց,
- (iii) «Հուշարձանների վերականգնման գծով պետական պատվեր» ծրագրի գծով 215.0 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 213.3 մլն դրամի դիմաց:
- (iv) «Շենքերի և շինությունների ձեռքբերում» ծրագրի գծով 20.0 մլն դրամ,

3. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրերով նախատեսվել 27,192.1 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 22,393.8 մլն դրամի դիմաց, որից՝

- (i) «Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարություն» ծրագրի գծով 220.0 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 343.8 մլն դրամի դիմաց,
- (ii) ՌԴ-ի վարկային միջոցների հաշվին «Բնակարանային շինարարություն» ծրագրի գծով 26,972.1 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 22,050.0 մլն դրամի դիմաց:

4. Վարչական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության նպատակով նախատեսվել է 1,108.2 մլն դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 964.5 մլն դրամի դիմաց:

5. «Շինարարության գնագոյացման բնագավառում մեթոդաբանական, վերլուծական և տեխնիկական ծառայություններ» ծրագրով նախատեսվել է 50,035.4 հազար դրամ՝ 2010 թվականի համար հաստատված 50,000.0 հազար դրամի դիմաց:

Այս ոլորտում 2011 թվականի բյուջետային ծախսերի համեմատությունը՝ 2009 թվականի բյուջետային տարվա փաստացի և 2010 թվականի բյուջետային տարվա համար հաստատված համապատասխան ցուցանիշների հետ արտացոլված է սույն բացատրագրի N 9 աղյուսակում:

Պաշտպանության բնագավառի ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են **139,108.1 մլն դրամի** չափով, որից ռազմական կարիքների բավարարմանը՝ **134,657.9 մլն դրամ**:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով պաշտպանության բնագավառի այլ ծախսերը հաշվարկվել են **4,450.2 մլն դրամ**, որից՝

ա) «Պաշտպանության բնագավառի այլ ծախսեր» ծրագրով՝ **4,394.2 մլն դրամ**,

բ) զորակոչիկներին վարորդական իրավունքի վկայականների տրման և քննությունների ընդունման ծախսեր, որի գումարը կազմում է՝ **56.0 մլն դրամ**: Նշված գումարի հաշվարկը կատարվել է 2000 զինվորների հաշվով:

Հասարակական կարգի պահպանության համակարգի ծախսերի ֆինանսավորմանը 2011 թվականի պետական բյուջեից նախատեսվում է ուղղել **46,571.6 մլն դրամ**: Նշված ծախսերը ներառում են ՀՀ ոստիկանության, ազգային անվտանգության ծառայության, պետական պահպանության ծառայության, Հայաստանի փրկարար ծառայության և քրեակատարողական համակարգի ծախսերը: Մասնավորապես՝

ա) ՀՀ Ոստիկանության 2011 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **23,605.4 մլն դրամի** չափով, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: ՀՀ Ոստիկանության 2011 թվականի պահպանման ծախսերը 2010 թվականի հաս-

տատված բյուջեի նկատմամբ աճել են **1,048.3 մլն դրամով**: ՀՀ Ոստիկանության 2011 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2011 թվականին ծրագրավորվել են **16,619.4 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **1,406.3 մլն դրամով**, որը պայմանավորված է 2011 թվականին ժամկետային զինծառայողների փոխարեն պայմանագրային զինծառայողների աշխատավարձերի և քաղաքացիական հատուկ ծառայողների գծով լրացուցիչ աշխատավարձերի նախատեսմամբ:

Հաշվարկը կատարվել է «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, ՀՀ վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի N 226, ՀՀ կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 13-ի N 1837-Ն, ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 13-ի N 1554-Ն, ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 15-ի N 1354-Ն որոշումներով սահմանված պաշտոնային դրույքաչափերին ու ՀՀ Ոստիկանության թվակազմին համապատասխան:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **1,162.4 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է ՀՀ ոստիկանության համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը և ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուցմանը:

Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 21-ի N 1141-Ն որոշմանը համապատասխան:

Սոցիալական ապահովության վճարները հաշվարկվել են **408.5 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **176.3 մլն դրամով**, որը պայմանավորված է ՀՀ ոստիկանությունում քաղաքացիական հատուկ ծառայողների գծով սոցիալական ապահովության վճարումների նախատեսմամբ:

Հաշվարկը կատարվել է «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2,284.9 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **632.9 մլն դրամ**, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **16.5 մլն դրամով**՝ պայմանավորված բնական գազի սակագների բարձրացմամբ, կոմունալ ծառայությունները՝ **78.7 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **401.9 մլն դրամ**, գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **48.7 մլն դրամ**, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է **2.0 մլն դրամով**, ինչպես նաև արտագերատեսչական (ՀՀ կառավարության 2004

թվականի սեպտեմբերի 29-ի N 1008-Ն որոշմամբ հաստատված կարևորագույն նշանակության օբյեկտների պահպանության) ծախսերը՝ **1,122.7 մլն դրամ**, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **29.2 մլն դրամով**՝ պայմանավորված Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցի պահպանման և Երևան քաղաքի դատախազության արխիվի շենքի պահպանման համար համապատասխան գումարների նախատեսմամբ: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 26-ի N 643-Ն որոշման, ինչպես նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին ու նորմաներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **351.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **159.0 մլն դրամ**, արտասահմանյան գործուղումների գծով՝ **190.6 մլն դրամ** և այլ տրանսպորտային ծախսերի (զինծառայողների ծառայության նոր վայր տեղափոխվելու) գծով՝ **1.4 մլն դրամի** չափով: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին և ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **123.9 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել վարչական ծառայությունների (մշակութային միջոցառումների անցկացում, թարգմանչական ծառայություններ, թվով 8 ստորաբաժանումներում ձեռքբերված անձանց պահելու վայրերում ահազանգման համակարգերի տեղադրման և այլ վարչական ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **22.1 մլն դրամ**, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է **1.0 մլն դրամով**, համակարգչային ծառայությունների ֆինանսավորմանը՝ **15.8 մլն դրամ**, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է **1.0 մլն դրամով**, տեղեկատվական ծառայությունների (գրականության, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն) ֆինանսավորմանը՝ **8.1 մլն դրամ**, կառավարչական ծառայությունների (արվեստաբանական և մշակութաբանական փորձաքննության ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **0.7 մլն դրամ**, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **10.5 մլն դրամ**, ներկայացուցչական ծախսերի ֆինանսավորմանը՝ **20.0 մլն դրամ**, ընդհանուր բնույթի այլ ծառայությունների («Երեխայի զարգացման կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Արշալույս» առողջարարական ճամբարի պահպանման և հակահրդեհային անվտանգության համակարգի ծախսեր) ֆինանսա-

վորմանը՝ **45,7 մլն դրամ** և մասնագիտական ծառայությունների ֆինանսավորմանը՝ **1.0 մլն դրամ**:

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **36.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **5.0 մլն դրամը**՝ ՀՀ ոստիկանության համակարգի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը,

- **31.0 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (ՀՀ ոստիկանության համակարգի մեքենաների ընթացիկ նորոգում և տեխնիկական սպասարկում, գույքի և այլ սարքավորումների վերանորոգում) ֆինանսավորմանը:

Ելութերի գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2,120.0 մլն դրամ** չափով: Նշված գումարից **83.7 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **493.1 մլն դրամը**՝ ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, **1,145.8 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզինի, դիզելային վառելիքի, յուղերի, ավտոպահեստամասերի) ձեռքբերմանը, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **154.8 մլն դրամով**՝ պայմանավորված վառելիքի քանակների ավելացմամբ, **317.9 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի (որից **296.5 մլն դրամը**՝ ՀՀ ոստիկանության համակարգի զինծառայողների սննդամթերքի, **11.6 մլն դրամը**՝ հիգիենիկ նյութերի և **9.8 մլն դրամը**՝ կենցաղային ապրանքների) ձեռքբերմանը, և **79.5 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի՝ փորձաքննության հետ կապված անհրաժեշտ նյութերի, մեդալների ու կրծքանշանների, ամանորի տոնի կապակցությամբ նվերների ձեռքբերմանը:

Գրամաշնորհները ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **15.8 մլն դրամ**, որից **14.9 մլն դրամը** նախատեսվում է ուղղել «Դինամո» մարզական հասարակական կազմակերպությանը, իսկ **0.9 մլն դրամը**՝ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների մարզական միջազգային առաջնություններին մասնակցության համար անդամավճարների գծով ծախսերի ֆինանսավորմանը:

Սոցիալական նպաստները ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **308.5 մլն դրամի** չափով, որից.

- **12.5 մլն դրամ** - ՀՀ կառավարության 2000 թվականի նոյեմբերի 27-ի N 778 որոշման համաձայն՝ հաշմանդամ զինծառայողների և զոհված զինծառայողների ընտանիքի անդամներին նյութական օգնություն վճարելու համար:

- **11.0 մլն դրամ** - ՀՀ կառավարության 2001 թվականի հունիսի 20-ի N 553 որոշման համաձայն՝ 68 հատ առողջարանային բուժման ուղեգրի ձեռքբերմանը, որից 62-ը՝ ՀՀ Ոստիկանության ծառայողների, իսկ 6-ը՝ Հայրենական Մեծ պատերազմին մասնակցած հաշմանդամների համար:

- **285.0 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարման, ինչպես նաև ՀՀ Ոստիկանության ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհաճախսի փոխհատուցման համար: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան: Նշված գումարները 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել են **85.0 մլն դրամով**, որը պայմանավորված է քաղաքացիական հատուկ ծառայության անցման հետևանքով ոստիկանության համակարգի զինծառայողների արձակման նպաստների նախատեսմամբ:

Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի գծով ծախսեր ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **6.1 մլն դրամի** չափով, որից.

- **2.1 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի շենք-շինությունների և փոխադրամիջոցների գույքահարկի վճարմանը:
- **4.0 մլն դրամ** - ՀՀ ոստիկանության համակարգի տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման գծով տուրքերի վճարմանը:

Այլ ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **164.6 մլն դրամ**, որն ուղղվելու է կենսաթոշակատուների նյութական օգնության, մարզական միջոցառումների անցկացման և այլ ծախսերի ֆինանսավորմանը, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հողվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր:

Բացի այդ, ՀՀ ոստիկանությանը նախատեսվել է **236.2 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խումբի 01 դասի «Պետավտոհամարանիշների ձեռքբերում» ծրագրով, **173.6 մլն դրամ**՝ 03 բաժնի 01 խումբի 01 դասի «ՀՀ անձնագրերի բլանկների տպագրություն» ծրագրով, **73.7 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խումբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով, **517.3 մլն դրամ**՝ 09 բաժնի 04 խումբի 01 դասի «Բարձրագույն

մասնագիտական կրթություն» և «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրերով:

բ) Հայաստանի փրկարար ծառայության ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է **3,910.9 մլն դրամ**, որն ամբողջությամբ ուղղվելու է ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը: Հայաստանի փրկարար ծառայության 2011 թվականի պահպանման ծախսերը 2010 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ նվազել են **245.2 մլն դրամով**, որը պայմանավորված է Հայաստանի փրկարար ծառայությունից Պետական հրդեհային տեսչությունը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ տեղափոխմամբ: Հայաստանի փրկարար ծառայության 2011 թվականի պահպանման ծախսերի հաշվարկներում հաշվի է առնվել նաև բնական գազի սակագների բարձրացումը, ինչպես նաև Հայաստանի փրկարար ծառայության Կոտայքի մարզային վարչության տարածքի և ՀՀ Շիրակի մարզի Գյումրու Հայաստանի փրկարար ծառայության բաժանմունքի տարածքի վարձակալության գումարների նախատեսումը, որը նախատեսված չի եղել 2010 թվականի հաստատված բյուջեում:

Հայաստանի փրկարար ծառայության 2011 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աշխատողների աշխատավարձերի, հավելավճարների և քաղաքացիական ծառայողների պարգևատրումները ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2,900.6 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել փրկարար ծառայողների, ինչպես նաև փրկարար ծառայության համակարգի քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի և նախորդ տարվա արդյունքների համար տարեկան մեկ անգամ պարգևատրումների վճարմանը:

Հաշվարկները կատարվել են «Քաղաքացիական ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2318-Ն և N 2323-Ն որոշումներով սահմանված՝ Հայաստանի փրկարար ծառայության ծառայողների պաշտոնային դրույքաչափերին և թվակազմին համապատասխան:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **372.1 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է փրկարարական ծառայողների պարենի փոխհատուցմանը (յուրաքանչյուր ծառայողին ամսական 10000 դրամ): Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2323-Ն որոշմամբ սահմանված չափին համապատասխան:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **50.5 մլն դրամի** չափով:

Հաշվարկները կատարվել են «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **164.4 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **88.0 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **30.9 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **37.2 մլն դրամ** և գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **8.4 մլն դրամ**:

Հիշյալ ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **34.3 մլն դրամ**, որն ամբողջությամբ ուղղվելու է ներքին գործուղումներին: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Ներկայացուցչական ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **5.0 մլն դրամ**, որն ուղղվելու է թվով 12 միջազգային կազմակերպություններից բնական և տեխնաձին աղետների կանխարգելման և հետևանքների վերացման գծով պատվիրակությունների ընդունելության ժամանակ ծախսերի ֆինանսավորմանը:

Մասնագիտական ծառայությունները ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել է **4.7 մլն դրամ**, որն ուղղվելու է փրկարար ծառայության համակարգի ավտոմեքենաների տեխնիկական ստուգատեսի անցկացման ծառայությունների ֆինանսավորմանը:

Մեքենաների ու սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **54.5 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել Հայաստանի փրկարար ծառայության համակարգում առկա տրանսպորտային միջոցների և հրշեջ մեքենաների ընթացիկ վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **234.1 մլն դրամի** չափով: Նշված գումարից **12.0 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների, **82.7 մլն դրամը**՝ փրկարարական ծառայողների համազգեստի, **111.6 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք և

յուղեր), **1.0 մլն դրամը**՝ առողջապահական և լաբորատոր նյութերի (դեղորայք) և **26.8 մլն դրամը**՝ հատուկ նպատակային այլ նյութերի (տարբեր տեսակի փրկարարական պարագաներ) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **88.1 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է փրկարարական ծառայողներին առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարմանը:

Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2.5 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է արտասահմանից ապրանքների տեսքով ստացվող օգնությունների հետ կապված պետական գրանցման ծառայությունների և փրկարար ծառայության տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոհամարանիշների հատկացման գծով հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի վճարմանը:

Բացի այդ, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայությանը 09 բաժնի 05 խմբի 02 դասի «Օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններ գործուղված փրկարարական ծառայողների ուսուցում» ծրագրով նախատեսվել է՝ **14.1 մլն դրամ**:

գ) Քրեակատարողական ծառայության 2011 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել են **6,660.5 մլն դրամի** չափով, որից՝ **5,656.1 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **1,004.4 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Նշված ծրագրի գծով 2011 թվականի համար ծրագրավորված գումարները 2010 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել են **1,430.8 մլն դրամով**: Քրեակատարողական ծառայության 2011 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2011 թվականին ծրագրավորվել են **3,261.2 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **148.3 մլն դրամի** չափով, պայմանավորված քրեակատարողական ծառայողների թվակազմը 100 հոգով ավելացմամբ, տեխնիկական սպասարկում իրականացնող կալանավորների նվազագույն աշխատավարձը 30.0 հազար դրամի դիմաց 32.5 հազար դրամ սահմանմամբ, ինչպես նաև քրեակատարողական ծառայողների պաշտոնների խմբերի միջև փոփոխությունների կատարմամբ:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **277.3 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական համակարգի սպաների և ենթասպաների պարենի

փոխհատուցմանը (յուրաքանչյուր զինծառայողին ամսական 10000 դրամ): Նշված ծախսերը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել են **12.8 մլն դրամով**, որը պայմանավորված է քրեակատարողական ծառայողների թվակազմը 100 հոգով ավելացմամբ, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմից 7 հոգու կրտսեր խումբ տեղափոխմամբ:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **42.3 մլն դրամի** չափով՝ որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **0.8 մլն դրամով**:

Հաշվակրները կատարվել են «Պարտադիր սոցիալական ապահովագրական վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **480.8 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **58.0 մլն դրամով**, որը պայմանավորված է բնական գազի սակագների բարձրացման և կալանավորների թիվի ավելացմամբ և այլընտրանքային պատիժներ իրականացնող բաժանմունքների տարածքների վարձակալմամբ, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **407.6 մլն դրամ**, կոմունալ ծառայությունները՝ **40.2 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **25.5 մլն դրամ** և գույքի և սարքավորումների վարձակալության ծախսերը՝ **7.5 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին համապատասխան: նախատեսվում է իրականացնել

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **16.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **8.5 մլն դրամ** և արտասահմանյան գործուղումների համար՝ **7.5 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Տեղեկատվական ծառայությունները ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **15.0 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել թերթերի, ամսագրերի տեղեկագրերի ձեռքբերմանը, ինչպես նաև տպագրական աշխատանքների ֆինանսավորմանը:

Ընդհանուր բնույթի այլ ծառայությունները ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1.0 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է **0.5 մլն դրամով**, որը նախատեսվում է ուղղել քրեակատարողական

համակարգում հաշվառված թվով 100 միավոր ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքների ֆինանսավորմանը:

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են 50.1 մլն դրամ գումարի չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **41.0 մլն դրամը`** Քրեակատարողական ծառայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը,
- **9.1 մլն դրամը`** մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (Քրեակատարողական ծառայության տրանսպորտային միջոցների, ինչպես նաև խոհանոցային էլեկտրական մի շարք սարքերի, էլեկտրագեներատորների, ջրի և գազի հաշվիչների և այլ սարքավորումների վերանորոգման աշխատանքների) ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,476.8 մլն դրամ** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **206.9 մլն դրամով**, որը պայմանավորված է կալանավորների թիվի ավելացմամբ: Նշված գումարից **12.7 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **209.1 մլն դրամը`** քրեակատարողական ծառայողների և կալանավորների համազգեստի ձեռքբերմանը, **104.0 մլն դրամը`** տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, **43.0 մլն դրամը`** առողջապահական և լաբորատոր նյութերի (դեղորայքի) ձեռքբերմանը, **1,084.0 մլն դրամը`** կենցաղային և հանրային սննդի նյութերի (որից մաքրիչ նյութեր` **12.0 մլն դրամ**, հիգիենիկ նյութեր` **55.7 մլն դրամ**, կալանավորների և դատապարտյալների համար սննդամթերք` **952.4 մլն դրամ**, տնտեսական նյութեր` **9.4 մլն դրամ**, կենցաղային այլ նյութեր` **54.5 մլն դրամ**) ձեռքբերմանը և **23.9 մլն դրամը`** հատուկ նպատակային այլ նյութերի (փշալար, կրակմարիչ, կրծքանշան և այլն) ձեռքբերմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են 33.5 մլն դրամի չափով, որից

- **30.0 մլն դրամ** - քրեակատարողական ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարման համար,
- **3.5 մլն դրամ** - քրեակատարողական ծառայողների և նրանց ուղեկցող ընտանիքի անդամների արձակուրդի վայր մեկնելու հետ կապված ճանապարհաճախսի փոխհատուցման համար:

Հաշվարկները կատարվել են «Զինճառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Հարկերի, պարտադիր վճարների և տուրքերի գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2.1 մլն դրամ**, որից **0.6 մլն դրամը** նախատեսվում է ուղղել քրեակատարողական համակարգի ավտոմեքենաների գրանցման համար հարկերի, իսկ **1.5 մլն դրամը`** ավտոմեքենաների տեխնիկական զննության գծով պարտադիր վճարմանի ֆինանսավորմանը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2011 թվականին նախատեսվել են **1,004.4 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **1,000.0 մլն դրամ`** նախատեսվում է ուղղել «Գորիս» նոր քրեակատարողական հիմնարկի շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը,
- **4.4 մլն դրամ`** նախատեսվել է ուղղել կալանավորների համար երկաթյա մահճակալների ձեռքբերմանը:

Պ) Ազգային անվտանգության ծառայության 2011 թվականի պահպանման ծախսերը նախատեսվել է **10,608.4 մլն դրամ**, որից` **10,313.4 մլն դրամն** ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **295.0 մլն դրամը`** ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Նշված ծրագրի գծով 2011 թվականի համար ծրագրավորված գումարները 2010 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել են **872.5 մլն դրամով**: Ազգային անվտանգության ծառայության 2011 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2011 թվականին ծրագրավորվել են **6,572.5 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ ավել է նախատեսվել **611.6 մլն դրամով**, որը պայմանավորված է 2011 թվականին ժամկետային զինճառայողների փոխարեն պայմանագրային զինճառայողների աշխատավարձերի նախատեսմամբ և ՀՀ կառավարության կողմից սահմանված թվաքանակի շրջանակներում անձնակազմի համալրմամբ:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **441.8 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **10.6 մլն դրամով**, որը պայմանավորված է թվակազմի ավելացմամբ: Նշված գումարներն ուղղվելու են ազգային անվտանգության համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը և ազգային անվտանգության համակարգի զինճառայողներին համազգեստի դիմաց դրամական փոխհատուցմանը:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **46.6 մլն դրամի** չափով` «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **907.8 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **456.9 մլն դրամ**, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **13.6 մլն դրամով**՝ պայմանավորված բնական գազի սակագների բարձրացմամբ, կոմունալ ծառայությունները՝ **122.7 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **307.0 մլն դրամ** և ապահովագրական ծախսեր՝ **21.2 մլն դրամ**, որը նախատեսվում է 531 հատ ավտոմեքենաների գծով պարտադիր ապահովագրական վճարների համար: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2010 թվականի մայիսի 18-ին ընդունված՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **400.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **150.0 մլն դրամ**, իսկ արտասահմանյան գործուղումների գծով՝ **250.0 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Պայմանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **24.8 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել վարչական ծառայությունների (մշակութային միջոցառումների անցկացում և այլն) ֆինանսավորմանը՝ **1.9 մլն դրամ**, կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ) ֆինանսավորմանը՝ **0.4 մլն դրամ**, ներկայացուցչական ծախսերի (տարբեր երկրների հատուկ ծառայությունների ղեկավարների և պատվիրակությունների ընդունելությունների ծախսեր) ֆինանսավորմանը՝ **22.5 մլն դրամ**:

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **11.2 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է **1.4 մլն դրամով**: Նշված գումարները նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության ծառայության համակարգի շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (շինանյութերի ձեռքբերում) ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **1,197.7 մլն դրամ** չափով: Նշված գումարից **22.4 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **143.5 մլն դրամը**՝ ազգային անվտանգության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, որը 2010 թվականի պետական

բյուջեի նկատմամբ աճել է **28.2 մլն դրամով**՝ պայմանավորված թվակազմի ավելացմամբ, **629.1 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, **402.6 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերմանը, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **45.1 մլն դրամով**։

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **33.4 մլն դրամի** չափով։ Նշված գումարները նախատեսվում է ուղղել ազգային անվտանգության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու արձակման նպաստների վճարմանը։

Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան։

Այլ ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **677.7 մլն դրամ** գումարի չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **200.0 մլն դրամով**, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր, ինչպես նաև տարբեր տեսակի ծառայությունների մատուցման ծախսեր։

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2011 թվականին նախատեսվել են 295.0 մլն դրամի չափով, որը նախատեսվում է ուղղել.

- **65.0 մլն դրամ**՝ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի միջանցքների և աշխատասենյակների վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **15.0 մլն դրամ**՝ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության վարչական շենքի տրանսֆորմատորային ենթակայանի վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **50.0 մլն դրամ**՝ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության N 5 ռադիոտան տանիքի և ռադիոկայմերի վերանորոգման աշխատանքների ֆինանսավորմանը,
- **80.0 մլն դրամ**՝ տրանսպորտային միջոցների (1 բեռնատար, 6 ՈՒԱԶ և 5 մարդատար) ձեռքբերման ծախսերի ֆինանսավորմանը,
- **85.0 մլն դրամ**՝ վարչական սարքավորումների (համակարգչային սարքավորումներ, կապի սարքավորումներ և այլն) ձեռքբերմանը,

Բացի այդ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությանը նախատեսվել է **26.8 մլն դրամ**՝ 07 բաժնի 01 խումբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ

խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագրով, **272.7 մլն դրամ**՝ 09 բաժնի 04 խումբի 01 դասի «Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ» ծրագրով:

է) Պետական պահպանության ծառայության 2011 թվականին նախատեսվում է **1,786.4 մլն դրամ**, որից՝ **1,681.4 մլն դրամ**ն ուղղվելու է ընթացիկ ծախսերի, իսկ **105.0 մլն դրամը**՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: Նշված ծրագրի գծով 2011 թվականի համար ծրագրավորված գումարները 2010 թվականի հաստատված բյուջեի նկատմամբ աճել է **27.8 մլն դրամով**: Պետական պահպանության ծառայության 2011 թվականի պահպանման ծախսերի կառուցվածքը հետևյալն է.

Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարները 2011 թվականին ծրագրավորվել են **1,107.5 մլն դրամի** չափով:

Այլ վարձատրությունները հաշվարկվել են **68.5 մլն դրամի** չափով, որն ուղղվելու է պետական պահպանության ծառայության համակարգի սպաների և ենթասպաների պարենի փոխհատուցմանը:

Սոցիալական ապահովագրության վճարները հաշվարկվել են **6.7 մլն դրամի** չափով՝ «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքին համապատասխան:

Շարունակական ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **47.7 մլն դրամի** չափով, որն իր մեջ ներառում է էներգետիկ ծառայությունները՝ **28.6 մլն դրամ**, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **1.6 մլն դրամով**՝ պայմանավորված բնական գազի սակագների բարձրացմամբ, կոմունալ ծառայությունները՝ **4.1 մլն դրամ**, կապի ծառայությունները՝ **15.0 մլն դրամ**: Նշված ծախսերը հաշվարկվել են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի փետրվարի 27-ի N 65-Ն, N 71-Ն և N 70-Ն որոշումներով սահմանված սակագներին համապատասխան:

Գործուղումների գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **95.0 մլն դրամի** չափով, որից ներքին գործուղումների գծով՝ **20.0 մլն դրամ**, իսկ արտասահմանյան գործուղումների գծով՝ **75.0 մլն դրամ**: Հաշվարկը կատարվել է ՀՀ կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի N 1243-Ն որոշմամբ սահմանված նորմատիվներին համապատասխան:

Տեղեկատվական ծառայությունները ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **2.6 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ

աճել է **0.6 մլն դրամով**, որը նախատեսվում է ուղղել թերթերի, ամսագրերի տեղեկագրերի ձեռքբերմանը, ինչպես նաև տպագրական աշխատանքների ֆինանսավորմանը:

Ուսյանագրային ծառայությունների ձեռքբերման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **10.1 մլն դրամի** չափով, որից **0.5 մլն դրամը** նախատեսվում է ուղղել կենցաղային և հանրային սննդի ծառայությունների (լվացքատների ծառայություններ), ներկայացուցչական ծախսերի ֆինանսավորմանը՝ **3.6 մլն դրամ** իսկ **6.0 մլն դրամը**՝ ընդհանուր բնույթի այլ ծառայությունների ֆինանսավորմանը:

Ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **55.0 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **10.5 մլն դրամով**, որը պայմանավորված է 2011 թվականին նոր ավտոմեքենաների ձեռքբերման պայմաններում՝ դրանց պահպանման ծախսերի ավելացմամբ: Նշված գումարներն ուղղվելու են.

- **5.0 մլն դրամը**՝ պետական պահպանության ծառայության շենքերի և կառույցների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի ֆինանսավորմանը,
- **50.0 մլն դրամը**՝ մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգման և պահպանման ծախսերի (պահեստամասերի ձեռքբերում) ֆինանսավորմանը:

Նյութերի գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **209.7 մլն դրամի** չափով: Նշված գումարից **2.7 մլն դրամը** նախատեսվում է ուղղել գրասենյակային պիտույքների ձեռքբերմանը, **59.1 մլն դրամը**՝ պետական պահպանության ծառայության համակարգի զինծառայողների համազգեստի ձեռքբերմանը, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **13.1 մլն դրամով**, **142.2 մլն դրամը**՝ տրանսպորտային նյութերի (բենզին, դիզելային վառելիք, յուղեր) ձեռքբերմանը, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **15.0 մլն դրամով**, որը պայմանավորված է 2011 թվականին, նոր ավտոմեքենաների ձեռքբերման պայմաններում, վառելիքի քանակի ավելացմամբ և **5.7 մլն դրամը**՝ կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերմանը:

Սոցիալական նպաստները հաշվարկվել են **18.1 մլն դրամի** չափով, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության համակարգի ծառայողների առողջության, տարիքային ժամկետը լրանալու, հաստիքների կրճատման պատճառով ծառայությունից սահմանված կարգով արձակվելու և կենսաթոշակի անցնելու հետ կապված արձակման նպաստների վճարմանը: Հաշվարկները կատարվել են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

Հարկերի գծով ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **0.6 մլն դրամ**, որը նախատեսվում է ուղղել պետական պահպանության ծառայության տրանսպորտային միջոցների գրանցման, հաշվառման, տեխնիկական անձնագրերի և պետավտոտեխնիկայի հատկացման ժամանակ հարկերի վճարմամբ:

Այլ ծախսերը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **60.0 մլն դրամ** գումարի չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ նվազել է **90.0 մլն դրամով**, որն իր մեջ ներառում է ընթացիկ ծախսերի գծով այլ հոդվածներում չընդգրկված ծախսեր:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են **105.0 մլն դրամի** չափով, որը 2010 թվականի պետական բյուջեի նկատմամբ աճել է **72.0 մլն դրամով**: Նշված գումարները նախատեսվում է ուղղել.

- **90.0 մլն դրամ`** տրանսպորտային միջոցների (արտասահմանյան արտադրության մարդատար ավտոմեքենաների) ձեռքբերմանը,
- **5.0 մլն դրամ`** վարչական սարքավորումների (կահույք, համակարգչային տեխնիկա, կենցաղային սարքավորումներ և այլն) ձեռքբերմանը,
- **10.0 մլն դրամ`** այլ մեքենաներ և սարքավորումների (տարբեր տեսակի ռադիոկայաններ, մարտկոցներ, պատճենահանող մեքենա, թուղթ ոչնչացնող սարք) ձեռքբերմանը, Բացի այդ, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայությանը նախատեսվել է **1.1 մլն դրամ`** 07 բաժնի 01 խմբի 01 դասի «Դեղորայքի տրամադրում պետական պահպանության ծառայությանը» ծրագրով:

ՀԱՏԿԱՅՈՒՄՆԵՐ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համաձայն համայնքներին պետական բյուջեից անհատույց և անվերադարձ հատկացումներ կարող են նախատեսվել ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաների, սուբվենցիաների և պետական բյուջեի եկամուտներից մասհանումների տեսքով:

1. Ֆինանսական համահարթեցման և այլ դոտացիաներ.

1.1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում բերված դրույթը սահմանում է (համանման սահմանմամբ դրույթ բերված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ պարբերությունում), որ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ

հողվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) հաշվարկվում է հիմք ընդունելով տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի ոչ պակաս քան չորս տոկոսը: 2011 թվականի համար նախորդող երկրորդ բյուջետային տարին՝ 2009 թվականի բյուջետային տարին է, հետևաբար ըստ վերոհիշյալ օրենքների վերը նշված պահանջի՝ 2011 թվականին համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) չպետք է պակաս լինի ՀՀ 2009 թվականի համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 717.7 մլրդ դրամի 4%-ը կազմող 28,468.1 մլն դրամից: Այդ կապակցությամբ հարկ է նշել, որ 2003-2010 թվականներին կիրառվող մոտեցմամբ, պետական բյուջեում ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում էր տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում Հայաստանի Հանրապետության համախմբված բյուջեի փաստացի եկամուտների ընդհանուր գումարի՝ 4%-ի չափով: Այդ մոտեցման կիրառումը նաև 2011 թվականի համար կհանգեցներ տվյալ տարվա ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի շուրջ 4.0 մլրդ դրամով կամ 12.4%-ով նվազմանը ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով նախատեսվածի համեմատությամբ, ինչն անշուշտ բացասական ազդեցություն կունենար համայնքների բնականոն գործունեության վրա: Այդ իսկ պատճառով, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում ֆինանսական համահարթեցման դոտացիաների ընդհանուր գումարի չափը պահպանվել է 2010 թվականի մակարդակին:

2011 թվականին համայնքներին տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով առաջարկվում է ուղղել.

- ֆինանսական համահարթեցման դոտացիաների տրամադրմանը,
- այլ դոտացիաների տրամադրմանը («Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համաձայն ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2009 թվականի բյուջեների եկամուտների կորուստները փոխհատուցելու համար):

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրել ընդհանուր գումարով 32,416.8 մլն դրամի դոտացիաներ: Նշված դոտացիաների բաշխումն ըստ առանձին համայնքների նախա-

տեված է իրականացնել «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան, մասնավորապես.

ա) 300-ից ոչ ավելի բնակիչ ունեցող յուրաքանչյուր համայնքի բյուջեին ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից առաջարկվում է ֆինանսական համահարթեցման դոտացիայի տեսքով տրամադրել 3.5 մլն դրամ (2010թ. համար սահմանված չափով),

բ) մյուս համայնքներին (բացառությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն համայնքի) հասանելիք դոտացիաները հաշվարկվել են «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքով սահմանված «ա» և «բ» գործոններով: Նշված գործոններով բաշխվող ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի 58.2 %-ը առանձնացվել է «ա» գործոնով, իսկ 41.8%-ը՝ «բ» գործոնով դոտացիաների տրամադրման համար: Ընդ որում, «ա» գործոնով դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են ըստ յուրաքանչյուր համայնքի հաշվարկված հողի հարկի և գույքահարկի 2009 թվականի հաշվարկային ընդհանուր գումարները. այն է՝ 2009 թվականին համայնքների բյուջեներ այդ հարկերի հարկատուների կողմից վճարման ենթակա գումարները, որոնք

- պակասեցվել են 2009 թվականի հունվարի 1-ի դրությամբ այդ հարկերի գծով առկա չմարված ապառքների, տույժերի և տուգանքների, ինչպես նաև 2009 թվականին հաշվարկված տույժերի և տուգանքների գումարների չափով,

- ավելացվել են համայնքների ավագանիների որոշումներով (ավագանիներին օրենքով տրված իրավասության սահմաններում) գույքահարկի գծով տրված արտոնությունների գումարների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների եկամուտների՝ հողի հարկի և գույքահարկի կորուստների օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցման ենթակա գումարների չափով:

Հարկ է նշել, որ դեռևս ընթացքի մեջ է ՀՀ հարկային պետական մարմինների կողմից ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի հաշվարկների ավտոմատացված համակարգի հանձնումը համայնքներին: Այդ կապակցությամբ այն համայնքների գծով, որոնց տեղական ինքնակառավարման մարմինները 2010 թվականի հունիսի 1-ի դրությամբ փաստացի իրականացրել են գույքահարկ և հողի հարկ վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գործառույթներ, 2011 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկներում կիրառվել են այդ համայնքների ղեկավարների կողմից տրամադրված 2009 թվականի գույքահարկի և հողի հարկի գծով ելակետային տվյալները, իսկ մյուս համայնքների գծով ելակետային տվյալները տրամադրվել են ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն գյուղական համայնքի համապատասխան ցուցանիշները հայտնի պատճառներով չեն կարող կիրառվել ֆինանսական համահարթեցման դոտացիաների բաշխման հաշվարկներում, նշված համայնքի ղեկավարի աշխատակազմի 2011 թվականի պահպանման ծախսերի գծով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին առանձին տողով նախատեսվել են շուրջ 4.2 մլն դրամի չափով հատկացումներ:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.3-րդ մասի համաձայն ընթացիկ տարվա ֆինանսական համահարթեցման դոտացիայի հաշվարկներում կիրառված էլակետային տվյալներում կամ կատարված հաշվարկներում մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը որևէ համայնքի գծով սխալների հայտնաբերման դեպքում լիազորված մարմինը՝ հիմք ընդունելով ընթացիկ տարվա ֆինանսական համահարթեցման դոտացիայի հաշվարկման ճշգրտված էլակետային տվյալները և (կամ) վերացնելով հաշվարկներում տեղ գտած վրիպումները, կատարում է տվյալ տարվա ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարների ըստ առանձին համայնքների բաշխման վերահաշվարկ, որի արդյունքները նույն օրենքի 21-րդ հոդվածի 4.5-րդ մասին համապատասխան արտացոլվում են առաջիկա տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծում: Ընդ որում՝ ընթացիկ տարվա համար յուրաքանչյուր համայնքի գծով վերահաշվարկված և նույն տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարների միջև

ա) բացասական տարբերության առաջացման դեպքում, այդ տարբերությունը (ընթացիկ տարվա համար ավել հաշվարկված գումարը) հետ է գանձվում այդ համայնքից՝ վերջինիս գծով առաջիկա տարվա համար հաշվարկված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը ընթացիկ տարվա համար ավել հաշվարկված գումարի չափով պակասեցման ճանապարհով (ընդ որում, եթե գանձման ենթակա գումարը գերազանցում է առաջիկա տարվա համար հաշվարկված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը ապա այդ գերազանցող չափով գումարի գանձումը նույն եղանակով իրականացվում է նաև առաջիկա տարվան հաջորդող հերթական տարիների ընթացքում),

բ) դրական տարբերության առաջացման դեպքում, այդ տարբերությունը (ընթացիկ տարվա համար պակաս հաշվարկված գումարը) հատկացվում է տվյալ համայնքին առաջիկա տարվա պետական բյուջեով համայնքների միջև բաշխման համար նախատեսված ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի հաշվին՝ այդ համայնքին առաջիկա տարվա համար հաշվարկված ֆինանսական համահարթեցման դոտացիայի գումարը ընթացիկ տարվա համար պակաս հաշվարկված գումարի չափով ավելացման ճանապարհով:

Նկատի ունենալով, այն հանգամանքը, որ 2010 թվականի ֆինանսական համահարթեցման դոտացիայի ընդհանուր գումարի ըստ առանձին համայնքների բաշխման հաշվարկներում կիրառված ելակետային տվյալներում որոշ համայնքների գծով պատկան մարմինների կողմից լիազորված մարմին մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ը ներկայացվել են ճշգրտված ելակետային տվյալներ, հետևապես հիմք ընդունելով օրենքի վերը նշված դրույթը կատարվել է 2010 թվականի դոտացիայի գումարների ըստ առանձին համայնքների բաշխման վերահաշվարկ, որի արդյունքներին համապատասխան ճշգրտվել են ՀՀ պետական բյուջեից 2011 թվականին ֆինանսական համահարթեցման դոտացիաների տեսքով համայնքներին հատկացվելիք գումարները:

1.2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքներով համայնքների եկամուտների նվազեցման հետևանքով համայնքների բյուջեներում առաջացող եկամուտների կորուստների գումարները ենթակա են փոխհատուցման պետության կողմից: 2006 թվականի դեկտեմբերի 5-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող Հայաստանի Հանրապետության օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստները պետության կողմից փոխհատուցելու կարգի մասին» ՀՀ օրենքը, որը օրենսդրական հիմքերի վրա դրեց համայնքի բյուջեի եկամուտների կորուստների չափերի և դրանց փոխհատուցման գումարների հաշվարկման գործընթացը: Վերը նշված օրենքի պահանջներին համապատասխան կիրառելով ՀՀ արդարադատության նախարարությունից, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից, տեղական ինքնակառավարման մարմիններից (իրենց իրավասության շրջանակներում) ստացված տեղեկատվությունը, կատարվել են համայնքների 2009 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա գումարների հաշվարկներ: Արդյունքում, համայնքների 2009 թվականի բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման ենթակա ընդհանուր գումարը կազմել է շուրջ 71.3 մլն դրամ, որն էլ նախատեսվել է «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի N 2 հավելվածում:

2. Սուբվենցիաներ.

2.1. ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով համայնքներին նախատեսվել են սուբվենցիաների հատկացումներ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ 2011 թվականին պետական բյուջեից բնապահպանական սուբվենցիաներ ստացող համայնքների ցանկի որոշման և նրանց տրամադրվելիք նշված սուբվենցիաների գումարների չափերի հաշվարկման հիմքում դրվել են.

- համայնքների կողմից ներկայացված ՀՀ բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2011 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերը,

- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան ընկերությունների կողմից 2007-2009 թվականներին պետական բյուջե փաստացի վճարված բնապահպանական վճարների գումարները,

- նշված վճարների գումարների՝ ըստ այդ ընկերությունների գործունեությունից վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների բաշխման համամասնությունները (սահմանված են ՀՀ բնապահպանության նախարարության կողմից),

- նշված վճարների գումարներից 2007-2009 թվականներին այդ համայնքներին արդեն իսկ տրամադրված բնապահպանական սուբվենցիաների գումարները:

Մասնավորապես, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են ընդհանուր գումարով շուրջ 165.1 մլն դրամի չափով բնապահպանական սուբվենցիաների հատկացումներ, որից

ա) «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ, «Արմենիան Մոլիբդեն Փրոդաքշն» ՍՊԸ-ի, «Մաքուր Երկաթ» ԲԲԸ և «Գաջեգործ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող Երևանի քաղաքային համայնքի գծով՝ 40.15 մլն դրամ,

բ) «Արմենիան Քափր Փրոգրամ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Լոռու մարզի Ալավերդի քաղաքային համայնքի գծով՝ 55.16 մլն դրամ, իսկ նույն մարզի Աքոր, Հաղպատ, Օձուն և Հազվի գյուղական համայնքների գծով՝ համապատասխանաբար՝ 11.71, 18.6, 18.6 և 8.0 մլն դրամ,

գ) «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Լոռու մարզի Ախթալայի քաղաքային համայնքի գծով՝ 1.0 մլն դրամ,

դ) «Միկա ցեմենտ» և «Հրազդանի ՋԷԿ» ՓԲԸ-ների գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքային համայնքի գծով՝ 5.33 մլն դրամ:

ե) Չարենցավանի «Ձուլակենտրոն» ԲԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքային համայնքի գծով՝ 37.7 հազ. դրամ:

ե) «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի գործունեության արդյունքում վնասակար ազդեցության ենթարկվող ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքային համայնքի գծով՝ 6.5 մլն դրամ:

Այլ համայնքների գծով վերը նշված օրենքի պահանջներին համապատասխան բնապահպանական սուբվենցիաների տրամադրում ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով չի նախատեսված, սահմանված ժամկետում նրանց կողմից բյուջետային օրենսդրությամբ սահմանված 2011 թվականի համապատասխան բյուջետային ֆինանսավորման հայտերի չներկայացման պատճառով կամ ըստ օրենքի բնապահպանական սուբվենցիաների գումարների կատարված հաշվարկի արդյունքով:

2.2. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 110-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը կատարելու նպատակով՝ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է շուրջ 6.58 մլրդ դրամ ընդհանուր գումարով սուբվենցիաների հատկացում Երևանի քաղաքային համայնքի ծրագրերի իրականացմանը աջակցելու համար:

3. Մասհանումներ պետական բյուջեի եկամուտներից.

ՀՀ 2011 թվականին պետական բյուջեից եկամտահարկի և շահութահարկի գծով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածով սահմանված մասհանումների իրականացում ՀՀ համայնքների բյուջեներին չի նախատեսված՝ հաշվի առնելով համայնքների միջև այդ հարկերի ոչ համամասնորեն ձևավորումը, պայմանավորված հանրապետությունում տնտեսաարտադրական կարողությունների ու ազգաբնակչության, ըստ համայնքների, տարիներ ի վեր ձևավորվող խիստ անհամաչափ տեղաբաշխման հանգամանքներով: Նման պայմաններում մասհանումների համակարգը միտված կլինի սակավաթիվ, հիմնականում Երևան քաղաքի համայնքների ֆինանսական բազայի ամրապնդմանը՝ էլ ավելի մեծացնելով համայնքների միջև առկա ֆինանսական անհավասարության աստիճանը:

Էականորեն կոժվարացնի և անարդյունավետ կդարձնի մասհանումների գործընթացը հարկ վճարողի եկամուտների ձևավորման վայրի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու անհնարինությունը, քանի որ շատ դեպքերում հարկ վճարողի գրանցման վայրը չի համընկնում հարկ վճարողի գործունեության իրականացման վայրերի հետ: Հարկ է նշել, որ դեռևս 1998-1999 թվականներին օրենքի պահանջի համապատասխան համայնքների բյուջեներին կատարվում էին եկամտահարկի գումարների մասհանումներ: Սակայն վերը նշված հիմնախնդիրների առկայությունը ցույց տվեց մասհանումների իրականացման բացարձակ անարդյունավետությունը, որից ելնելով էլ օրենքում կատարվեցին համապատասխան փոփոխություններ, որոնց համաձայն՝ համայնքների բյուջեներին եկամտահարկից մասհանումների կատարումը 2000 թվականից դադարեցվեց:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, ինչպես նաև համայնքների բյուջեներին շահութահարկի ու եկամտահարկի գումարներից մասհանումների գործընթացն ի սկզբանե չվարկաբեկելու նկատառումով, գտնում ենք, որ մասհանումների կատարման հարցին նպատակահար-

մար է անդրադարձնալ վերը նշված հիմնախնդիրների կարգավորման հստակ մեխանիզմների մշակումից հետո:

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՈՒՍՏԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեով նախատեսվող ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի ծավալը նախատեսված է 25.85 մլրդ դրամ (ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 2.6 %-ը):

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել են նաև հատկացումներ նյութական ռեսուրսների պետական պահուստի պահպանման և ձևավորման, ինչպես նաև ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պետական ռեզերվների գործակալության համակարգի ստորաբաժանումների պահպանման համար, համապատասխանաբար 153.6 մլն դրամի և 25.9 մլն դրամի չափով:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ԴԵՖԻՑԻՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի գումարը ծրագրավորվում է 148.6 մլրդ դրամի չափով: Դեֆիցիտի ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել ներքին և արտաքին աղբյուրների գուտ մուտքերի (գուտ մուտքերը՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի ընդհանուր գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերությունն է) հաշվին, համապատասխանաբար՝ 82.8 մլրդ դրամի և 65.8 մլրդ դրամի չափով:

Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ներքին և արտաքին աղբյուրներից փոխառու միջոցների և ֆինանսական ակտիվների տեսքով ներգրավվող միջոցների:

Փոխառու միջոցների ներգրավումը իրականացվում է պետական արժեթղթերի թողարկման և վարկերի ու փոխատվությունների ստացման եղանակով (որոնք հետևապես հետագայում ենթակա են մարման): Ֆինանսական ակտիվներից միջոցների ներգրավումը իրականացվում է արդեն ձեռք բերված՝ սեփականության իրավունքով պետությանը պատկանող բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության, ինչպես նաև տնտեսվարող և այլ սուբյեկտներին պետական բյուջեից տրամադրված վարկերի և փոխատվությունների դիմաց այդ սուբյեկտներից ձեռք բերված պարտավորությունների իրացման եղանակով:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներքին աղբյուրներից ներգրավվող փոխառու գուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է 28.4 մլրդ դրամի չափով, ընդ որում, փոխառու միջոցների մուտքերի ներգրավումը ամբողջությամբ նախատեսվում է ապահովել պետական արժեթղթերի թողարկումից: Ֆինանսական ակտիվներից 2011 թվականի գուտ մուտքերը ծրագրավորվում են 54.4 մլրդ դրամ (ընդ որում, տարեսկզբի ազատ մնացորդի միջոցների հաշվին՝ 25.5 մլրդ դրամ և կայունացման դեպոզիտային հաշվի միջոցների օգտագործման հաշվին՝ 27.0 մլրդ դրամ): Ինչ վերաբերում է տնտեսվարող և այլ սուբյեկտներին տրամադրված բյուջետային վարկերի և փոխավորությունների գծով գուտ մուտքերին, ապա այդ տեղեկատվությունը ներկայացված է սույն բացատրագրի «Բյուջետային վարկեր» բաժնում:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով արտաքին աղբյուրներից ներգրավվող փոխառու գուտ միջոցների ընդհանուր գումարը ծրագրավորվում է 65.8 մլրդ դրամի չափով, ընդ որում այդ գումարը հաշվարկվել է որպես միջազգային կազմակերպություններից և օտարերկրյա պետություններից Հայաստանի Հանրապետությանը 2011 թվականին տրամադրվելիք արտոնյալ վարկերի (որոնց գերակշռող մասն ունի հստակ ծրագրային ուղղվածություն) և մինչ այդ արդեն ստացված վարկերի, ըստ վարկային պայմանագրերով նախատեսված ժամկետների, մարման գումարների տարբերություն (նշված գուտ մուտքերի վերաբերյալ մանրամասն համապատասխան տեղեկատվությունը բերված է սույն բացատրագրի N 1 հավելվածում, NN 15-18 աղյուսակներում և «ՀՀ պետական պարտքը» բաժնում): Դրա հետ մեկտեղ նախագծով նախատեսվել է 0.9 մլրդ դրամ՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կապիտալում մասնակցության գծով ստանձնած պարտավորությունների կատարման համար:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծով գուտ վարկավորման ընդհանուր ծավալը ծրագրավորված է 33.2 մլրդ դրամի չափով: Նշված գումարն իրենից ներկայացնում է ՀՀ պետական բյուջեից տրամադրվելիք բյուջետային վարկերի ընդհանուր գումարի և նախկինում տրամադրված բյուջետային վարկերի մարումներից ստացվելիք մուտքերի ընդհանուր գումարի տարբերությունը:

ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք վարկերի ընդհանուր գումարը նախագծով նախատեսվում է սահմանել 36.3 մլրդ դրամի չափով: Մասնավորապես.

- Հայաստանի Հանրապետության կողմից ցուցաբերվող արտաքին տնտեսական աջակցության շրջանակներում բյուջետային վարկեր տրամադրելու համար առանձնացվել են 35.4

մլրդ դրամի չափով հատկացումներ՝ դրանք ամբողջությամբ ԼՂՀ-ին բյուջետային վարկի տրամադրմանն ուղղելու նպատակով,

- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացվող «Շուկայավարման հնարավորություն ֆերմերներին» ծրագրով նախատեսվում է տրամադրել շուրջ 0.7 մլրդ դրամ բյուջետային վարկեր,

- «Բոնադատվածների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան բոնադատված քաղաքացիներին կամ նրանց առաջին հերթի ժառանգներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով երկարաժամկետ արտոնյալ վարկեր տրամադրելու համար նախատեսվել են 0.2 մլրդ դրամի չափով հատկացումներ:

Դրա հետ մեկտեղ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի նախագծում նախատեսվել են շուրջ 3.1 մլրդ դրամի չափով մուտքեր Վրաստանից, «Հայկական ստոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ից, «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի, «Դարդան» ՍՊԸ-ից «Ավտոճանապարհային մեքենաներ» ՓԲԸ-ի պարտքի մարման նպատակով, «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ից, «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից, Ալավերդու և Արթիկի քաղաքապետարաններից, «Սպիտակի կարի արտադրական միավորում» ԲԲԸ-ից և «Նոր Ակունք» ՓԲԸ-ից, ինչպես նաև ֆիզիկական անձանցից պետության կողմից նախորդ տարիներին իրենց տրամադրված բյուջետային վարկերի մարումների գծով պետական բյուջե կատարվելիք վճարումներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

Ներքին պետական պարտքը

«Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով պետական արժեթղթերով նախատեսվում է ապահովել 30,000.0 մլն դրամ դեֆիցիտի ֆինանսավորում և կատարել 16,876.1 մլն դրամ սպասարկման ծախս:

2010 թվականի հուլիսի 31-ի դրությամբ թողարկվել է 64.0 մլրդ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր, որից տեղաբաշխվել է 52,299.0 մլն դրամը: Պարտատոմսերի տեղաբաշխումից հասույթը կազմել է 49,717.1 մլն դրամ: Խնայողական պարտատոմսերից ս.թ. հուլիսի 31-ի դրությամբ թողարկվել է 900.0 մլն դրամ, որից տեղաբաշխվել է 184.1 մլն դրամը: Այս պարտատոմսերը տեղաբաշխվում են գանձապետական պահառու համակարգի միջոցով: 2010 թվականի ընթացքում կկատարվի մոտ 73.7 մլրդ դրամի մարում և կտրվի մոտ 15.5 մլրդ դրամի սպասարկման ծախս: Տարեվերջին ներքին պետական պարտքի ծավալն անվանական արժեքով կկազմի մոտ 172.3 մլրդ դրամ: 2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներքին

պետական պարտքի ընդհանուր ծավալը անվանական արժեքով կազմել էր 149.7 մլրդ դրամ, որից շրջանառելի պարտատոմսերի ծավալը՝ 140.6 մլրդ. դրամ, իսկ ՀՀ ռեզիդենտից ստացված վարկի ծավալը՝ 9.1 մլրդ դրամ: Պարտքի ժամկետայնությունը 2010 թվականի հուլիսի 30-ի դրությամբ կազմել է 1488 օր (2009 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ նույն ցուցանիշը եղել է 1391 օր), միջին կշռված եկամտաբերությունը՝ 11.15% (2009 թվականի տարեվերջին նույն ցուցանիշը եղել է 10.39%):

2010 թվականի համար նախատեսված սպասարկման ծախսերի տնտեսումը պայմանավորված նախատեսվածից ավելի քիչ ծավալով հետզնումների իրականացմամբ, նախատեսվում էր իրականացնել մոտ 24.0 մլրդ դրամի հետզնում, ս.թ. հուլիսի 31-ի դրությամբ հետ են գնվել 9.7 մլրդ դրամի պարտատոմսեր, մինչև տարեվերջ կիրականացվի ևս 6.2 մլրդ դրամի պարտատոմսերի հետզնում:

2011 թվականի ընթացքում շարունակվելու են միջնաժամկետ և երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի թողարկումները: 2010 թվականին իրականացվել են նոր 3 և 5 տարի մարման ժամկետով ուղենշային պարտատոմսերի թողարկումներ, ինչպես նաև 2008թ. թողարկման 10 և 20 տարի մարման ժամկետ ունեցող երկարաժամկետ ուղենշային պարտատոմսերի վերջին վերաբացումները: Դեֆիցիտի ֆինանսավորման ծրագրի իրագործման շրջանակներում կշարունակի նաև նախկինում թողարկված միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի փոքրածավալ թողարկումների, ինչպես նաև 2008-2010թթ. թողարկման 3 և 5 տարի մարման ժամկետով արդեն նախկին ուղենշային համարվող պարտատոմսերի շրջանառությունից դուրս բերելու գործընթացը՝ հիմնականում հետզնումների միջոցով:

2010 թվականի մայիս ամսից սկսած, ՀՀ կենտրոնական բանկի հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն իրականացված միջոցառումների արդյունքում, հուլիսի 31-ի դրությամբ պետական բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորվել է 5.7 մլրդ. դրամով: Արդյունքում, կառավարությանը հաջողվեց հունվար-հուլիս ամիսներին տեղաբաշխել 31.9 մլրդ. դրամի 3-20 տարի ժամկետայնությամբ ուղենշային պարտատոմսեր: Ներքին պարտքի շրջանառող ծավալում միջին ժամկետայնության և երկարաժամկետ պարտատոմսերի տեսակարար կշիռը օգոստոսի 1-ի դրությամբ կազմել է 78%:

2011 թվականին կառավարությունը շարունակելու են ներքին պարտքի կառավարման բնագավառում ձեռնարկված բարեփոխումները: Ուղենշային պարտատոմսերը տեղաբաշխվելու են պարբերական վերաբացումների միջոցով: Պարբերաբար կիրականացվեն նաև հետզնումներ, նախատեսվում է նաև փոխանակումների տեխնիկայի կիրառումը:

Այս նպատակի իրագործման շրջանակներում ենթադրվում է պետական պարտատոմսերի գծով պետական բյուջեում նախատեսել 24.6 մլրդ դրամ սպասարկման ծախս, ապահո-

վելով 30.0 մլրդ դրամ դեֆիցիտի ֆինանսավորում: 2011 թվականի վերջին ներքին պետական պարտքի ծավալն անվանական արժեքով կկազմի մոտ 200.0 մլրդ դրամ, միջին ժամկետայնությունը՝ մոտ 4.0-4.5 տարի: Միջին եկամտաբերությունը 2011 թվականի վերջին ընթացիկ տարվա համեմատ հնարավոր է աճի՝ պայմանավորված ընթացիկ տարում ձևավորված տոկոսադրույքների աճի միտումով:

Արտաքին պետական պարտքը

2009 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը կազմել է 2,966.7 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեով արտաքին աղբյուրներից նախատեսված վարկային միջոցները ամբողջությամբ ստանալու դեպքում, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման ճշտված պլանի համեմատությամբ առանձին վարկային ծրագրերի գծով արձանագրված գերակատարումները, «ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով չնախատեսված և 2010թ. ընթացքում փաստացի ստացված վարկերը, Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը (ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի վարկային պարտավորություններ և վերջիններիս կողմից տրամադրված արտաքին երաշխիքներ) 2010թ. տարեվերջին կկազմի մոտ 3,385.0 մլն ԱՄՆ դոլար:

2010 թվականի ընթացքում արտաքին աղբյուրներից կստացվի մոտ 407 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ կառավարության պարտավորությունների գծով 317 մլն ԱՄՆ դոլար և Կենտրոնական բանկի գծով մոտ 90 մլն ԱՄՆ դոլար, և կկատարվի մոտ 46 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում (այդ թվում 24 մլն ԱՄՆ դոլար ՀՀ կառավարության պարտավորությունների գծով): 2009 թվականի տարեվերջի համեմատ ՀՀ արտաքին պարտքը կաճի մոտ 419 մլն ԱՄՆ դոլարով¹:

2010 թվականի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով ընդհանուր սպասարկումը կկազմի մոտ 94 մլն ԱՄՆ դոլար: Միայն ՀՀ կառավարության գծով 2010 թվականին այն կկազմի մոտ 64 մլն ԱՄՆ դոլար, որից 24 մլն ԱՄՆ դոլար՝ մարում և 40 մլն ԱՄՆ դոլար՝ տոկոսավճար:

2011 թվականի ընթացքում, ՀՀ արտաքին պետական պարտքի գծով նախատեսվում է ստանալ մոտ 404 մլն ԱՄՆ դոլար՝ այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների

¹ Տարեկան կտրվածքով ստացումների և մարումների արդյունքում ստացվող պարտքի հաշվարկային գումարի և տեքստում ներկայացված պարտքի գումարի տարբերությունը պայմանավորված է տարեակգբին և տարեվերջին արժույթների փոխարժեքների (հիմնականում SDR/ ԱՄՆ դոլար և Եվրո/ԱՄՆ դոլար) տարբերություններով:

31.12.09 դրությամբ 1SDR= 1.56769 USD և 1EURO= 1.44060 USD

31.12.10 դրությամբ 1SDR= 1.60 USD (կանխատեսում) և 1EURO= 1.27671 USD (01.09.2010թ. դրությամբ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեք (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ))

ՀՀ արտաքին պարտքի զամբյուղի մեջ SDR-ով և EURO-ով տրամադրված վարկերը 2009թ. տարեվերջի դրությամբ կազմել են շուրջ 70%:

գծով 298.6² մլն ԱՄՆ դոլարի արտաքին միջոցներ (այդ թվում՝ 56 մլն ԱՄՆ դոլար Արժույթի Միջազգային Հիմնադրամի կողմից, 10.0 մլն ԱՄՆ դոլար Համաշխարհային բանկի կողմից, որպես Զարգացման քաղաքականության գործողությունների երրորդ վարկ, 83 մլն ԱՄՆ դոլար Եվրամիության կողմից որպես մակրոֆինանսական աջակցության վարկ և 149.6 մլն ԱՄՆ դոլար՝ ծրագրային վարկերի գծով): 2011 թվականի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով նախատեսվում է սպասարկել մոտ 118.2 մլն ԱՄՆ դոլար՝ 51.4 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարման գծով և մոտ 66.8 մլն ԱՄՆ դոլար որպես տոկոսավճար, այդ թվում ՀՀ կառավարության պարտավորությունների գծով³ մոտ 27.971 մլն ԱՄՆ դոլարի հիմնական գումարի մարում և 54.805 մլն ԱՄՆ դոլարի տոկոսավճար: Հաշվի առնելով վերը նշվածը, 2011 թվականի տարեվերջին ՀՀ արտաքին պետական պարտքը կկազմի մոտ 3,738 մլն ԱՄՆ դոլար:

2010-2011թթ. ՀՀ արտաքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները հիմնականում կգտնվեն նվազ և միջին պարտքի բեռ ունեցող երկրների ցուցանիշների սահմաններում:

² Մասհանումների կանխատեսումային ցուցանիշների և ՀՀ 2011թ պետական բյուջեի նախագծով արտաքին վարկային ծրագրերի գծով նախատեսված ծախսային ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է համապատասխան վարկային ծրագրերի շրջանակներում բացված հատուկ հաշիվներում առկա դրամական միջոցների մնացորդներով:

³ Սպասարկման կանխատեսումները կատարվել են հիմք ընդունելով 01.09.2010թ. դրությամբ արժույթային շուկայում ձևավորված միջին փոխարժեքները (աղբյուր՝ ՀՀ կենտրոնական բանկ) և 1 SDR=1.60 USD փոխարժեքը, ԱՄՆ դոլարի 6-ամսյա LIBOR՝ 2.2%, 6-ամսյա EURIBOR՝ 2.7%, SDR-ի տոկոսադրույք՝ 1.7%: